



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3077

Եփուպր

LN

Կանիոն 1904թ

2

53

82

5548

C-53

г к ф у л

Op k l l o

1886

г у л 26. 06. 12


82-2
C-63

ՇԷՔՍՔԻՐ

ՕՔԵԼԼՕ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԳԱՐԵԳԻՆ Յ. ԲԱԲԱԶԵԱՆ



SHAKESPEARE

OTHELLO

TRANSLATED INTO ARMENIAN

BY

CAREKINE H. PAPASIAN



Գ Ա Հ Ի Ր Է

1904

ՇԷՔՍՄԻՐ

ՕԹԷԼԼՕ

SHAKESPEARE

OTHELLO

23 JUN 2005

12 NOV 1904


82
6-53

ՇԷՔՍՔԻՐ

ՕՔԷԼԼՕ

ՔԱՐԳՄԱՆԵՑ

ԳԱՐԵԳԻՆ Յ. ԲԱԲԱԶԵԱՆ



SHAKESPEARE

OTHELLO

TRANSLATED INTO ARMENIAN

BY

CAREKINE H. PAPASIAN



Գ Ա Ն Ի Բ Է

1904



1002
5548

SHAKESPEARE
OTHELLO
ԳԱՐԵԳԻՆ Յ. ԲԱԲԱԶԵԱՆ

15.07.2013

3077

ՀԳՐԱԿԵՆ

ՕՊԵՐԱՏՈՐ

ՄԱՐԴԻՐՈՍ ԹՈԿԱՏԻԱՆ


ԲԱՐՍԵՆՍԻ ԳՆԱԿԱՆԱԿԱՆ

ՏՐԱԿՏՈՐ

ՕՒՆԵՆԻՆԻ

ՏՐԱՆՍԼԱՏԻՆԻ ԻՆՏՈ ԱՐՄԵՆԻԱ

ՄԱՐԴԻՐՈՍ ԹՈԿԱՏԻԱՆ



ՄԱՐԴԻՐՈՍ ԹՈԿԱՏԻԱՆ

1991

TO
MARDIROS TOKATIAN ESQ^{RE}

ՊԱՐՈՆ ՄԱՐՏԻՐՈՍ ԹՕՔԱԹԵԱՆ

Մանչեսթր

Ազնի և սիրելիդ իմ ,

Քուռն փափամ մը կ'զգամ սոյն Օրէլլոյի
քարգումարքիւնը Ձեզ նուիրելու, և ահաասիկ
ինչո՞ւ համար :

Կը յիշե՛մ արդեօք , մի քանի տարի առաջ
երբ Մանչեսթր կը գտնուէի , իրիկուն մը մտե-
մաբար հրաւիրեցիք զիս *Թէջը* միասին առնելու
Ձեր ծանօթ նահապետական բնակարանին մէջ :

Երկուքս առանձին էինք . ուստի ինչպէս
կ'ըսեն, գլուխ գլխի տուինք, և օրուան կարե-
ւոր խնդիրներու վրայ երկարօրէն խօսեցանք .
մերք գաղափարակից լինելով և մերք ոչ —
բայց այս՝ մեր համեմատութիւնը չ'վրդովեց
երբէք, քանզի կասարեալ *ճեմըլ լեմի* մը ընկե-
րութիւնը կը վայելէի :

Մինչ այս մինչ այն, սկսաւ յանկարծ Շիլ-
լըրէն Գերմաներէն բանաստեղծութիւն մը բարձ-
րաձայն արտասանել, այնպէս որ զարմանօք Չե-
րեքը կը նայէի, քանզի--թէն գիտէի որ Ֆրան-
սերէն եւ Անգղիարէն լեզուաց հմուտ էիք, բայց
կը խոսովանիմ որ Մանչեսթրի հայ վանառա-
կանէ մը, որ իւր ամբողջ կեանքը առեւտրական
երջանին մէջ անցուցած էր - չէի սպասեր բա-
նաստեղծութիւն մը լսել, եւ այն եւս Գերմանե-
րէն լեզուաւ :

Եւ անաւասիկ մեր խօսակցութիւնը ընդ-
հանուր գրականութեան վրայ-- Շիլլըր, Կէօքէ,
Շէքսպիր, Վիքթոր Հիւկօ եւն. ասոնց վրայ սկը-
սանք խօսիլ, եւ հա՞րկ է ըսել թէ որչա՞փ ու-
րախ էի, եւ ի՞նչ մեծ համոյք կ'զգայի իմ հո-
գոյս արձագանգը գտնելով ձերինին մէջ... :
Երբ Շէքսպիրի վրայ էր խնդիրը, իմացուցի Չե-
զի, թէ *Հաւկեղը* Հայերէնի բարգմանելու զբա-
ղած էի: Ո՞հ, ինչ խանդավառ զգացումներով
Չեք ուրախութիւնը յայտնեցիք, եւ ինչպէ՞ս փա-
փափեցաք, որ անոր մի քանի մասերը միասին
ընթեռնունք իմանալու համար, ինչպէս կ'ը-
սէիք, թէ այս ինչ եւ այն ինչ կէտերը ի՞նչպէս
Հայերէնի բարգմանած էի:

Տեսայ թէ որպիսի՞ ներողամտութեամբ կը
գնահատէք ամէն ինչ... եւ նոյն վայրկեանէն
որոշեցի Շէքսպիրէն ուրիշ հասնուած մը բարգմա-
նել, եւ Չեզ նուիրել, քանի որ *Հաւկեղը* նուր-
բա՞ծ էի արդէն անոր՝ որ իմ կենացս սիրելի
ընկերն է:

Սակայն այս չէ միայն որ զիս կը հրապու-
րէ առ այս. ուրիշ շարժառիթներ եւս ունիմ:
Հիացած եմ Չեք հոգոյն պարզութեան, եւ Չեք
բարեւտրութեան վրայ, եւ ազգային տեսակէտով
ջերմապէս կը խնդակցիմ Չեզի հետ. քանզի
Մանչեսթրի մէջ Չեք օրինակելի վարժով ու բար-
ժով, ուղղամտութեամբ եւ արդարասիրտութեամբ
Հայ անուան միտք մեծ փայլ տուած էք, եւ սէզ
Ալպիօնի զաւակները՝ որ այնչափ դժուարահան
են օտարներու նկատմամբ՝ յոյժ կը գնահատեն, եւ
կը յարգեն զՉեզ արժանապէս: Դուք իբրևամբ
Մանչեսթրի Հայոց նահապետն կոչուած էք. Դուք
միտք ամենուն օգտակար եղած էք, -- բարիք կ'ը-
նէք, բարիք ընելու համար, եւ Չեք ուրախու-
թիւնը կը գտնէք անոր մէջ: Հետեւաբար թոյլ
տուէք ինձի սոյն փոքրիկ աշխատութիւնս Չեզ
նուիրելու իբրեւ յիշատակարան մեր տապալայ
սերունդին համար, խնդրելով միանգամայն որ
ընդունիք զայն իբր առհասարակ այն սիրոյն
եւ բարեկամութեան զօր կը տածեմ Չեզ համար:

ԹԱՐԳՄԱՆԻՉՆ

ՕՐԹԷՂԼՕ

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԱԻՐԸ

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Ա Ն Ջ Ի Ն Ք

ՎԵՆԵՏԻԿԻ ԴՈՒՔՍ :

ՊՐԱՊԱՆՅԻՑ, Ծերակոյսի անդամ, Տեղեկօժանի հայրը :

ԾԵՐԱԿՈՅՏԻ ԱՆԴԱՄՆԵՐ :

ԿՐԹԻԱՆՑ, Եղբայր Պրապանցիոյի :

ԼՕՏՕՎԻՔՕ, Ազգական Պրապանցիոյի :

ՕԹԷԼԼՕ, Մաւրը :

ՔԱՍԻՑ, Տեղակալ Օրեղոյի :

ԵԱԿՕ, Դրօշակիր Օրեղոյի :

ԲՕՏԲԻԿՕ, Վեկեսիկցի Պարոն :

ԿՐՅՐՈՒՍ, Կիպրոսի նախկին կառավարիչ :

ԾԱՂՐԱԾՈՒ, Ծառայ Օրեղոյի :

ՏԷՋՏԷՄՕՆԱ, Կին Օրեղոյի :

ԷՄԻԼԻԱ, Կին Եակոյի :

ՊԻԱՆՔԱ, Քասիոյի սիրունին :

Նաւասի, Թղթաբեր, Պազանաբեր, Պաշտօնատար, Պարոնայ, Երածիշտեալ եւ հետեւորդ :

Առաջին Արարուածը Վենետիկի մէջ, միւս
Արարուածները Կիպրոսի մէջ :

1854

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա .

Վերևտիկ : — Փողոց մը :

Կը մանեն Րօսիկո եւ Եակօ :

Րօս. — Ո՛հ, երբէք մի խօսիր ինձի ասոր վրայ, շատ նեղացած եմ, թէ դուն, Եակօ, որ իմ քսակս այնչափ ազատօրէն գործածած ես, իբր թէ այն քու սեփականութիւնդ եղած լինէր—ասոր վրայ տեղեկութիւն ունեցած լինիս :

Եակօ — Է՛հ, բայց դուն չես ուզեր լսել ինձի : — Եթէ երբէք այսպիսի բանի մը վրայ երազած եմ իսկ, արհամարհէ՛ զիս :

Րօս. — Դուն ինձի ըսիր թէ զինքը կ'ատես :

Եակօ — Անարգէ՛ զիս, եթէ այդպէս չէ : Քաղաքին աւագանիներէն երեք հոգի զիս անոր տեղակալը անուանելու համար գլխարկ 'ի ձեռին՝ յաճախ իրեն խոնարհեցան, — և, հաւատքս

վկայ, ես իմ արժէքս գիտեմ, և ասկէ նուազ պատուաբեր պաշտօնի մը արժանի չեմ: Բայց նա իւր յատուկ հպարտութեամբ և նպատակներով խոյս կը տայ մարտական մակդիրներու պօռտտախօս շրջաբանութեամբ, և վերջապէս կը ճամբէ իմ պաշտպաններս, ըսելով թէ usուգիւ ընտրած եւ արդէն իւ պաշտօնակաջս:

Եւ ի՞նչ էր այն: Է՛հ, մեծ թուաբան մը Միքայէլ Բասիօ անուամբ Փլօրանցի մը, — գողցես գեղեցիկ կնոջ մը քմայքին դատապարտուած մէկը, որ երբէք պատերազմական դաշտի վրայ գումարտակի մը հրամայած չէ, և աղջիկէ մ'աւելի չգիտեր զօրաբաժին մը վարել. տեսական հմտութիւն մ'էր իւր ունեցածը, որու վրայ իրեն չափ կրնան վիճաբանիլ մեր ծերակուտականները. սոսկ շողակրատ մը առանց գործնականի. այս է իւր բոլոր զինուորական հմտութիւնը: Բայց և այնպէս, պարօն, նա ընտրուեցաւ. իսկ ես, — որու փորձերն անձամբ տեսած էր Հռոդոսի և Կիպրոսի և ուրիշ քրիստոնեայ և հեթանոս երկիրներու մէջ — պէտք էր որ մերժուիմ, և ետ մնամ հաշուակալ դրագրէ մը. նա յարմար ժամանակին պէտք է որ անոր տեղակալը լինի, և ես (Աստուած օրհնէ իւր տիտղոսը) նորին Մաւրական մեծութեան գրօշակիրը:

Րօս. — Երկինք վկայ, լաւ ևս անոր դահիճը լինել պիտի ուզէի:

Եակօ — Բայց ագոր դարման չկայ. զին-

ուորական ծառայութեան անէծքն է այս: Յառաջացումը յանձնարարութեամբ և պաշտպանութեամբ կը լինի, և ոչ թէ վաղեմի աստիճանաւորութեամբ, երբ Երկրորդը առաջինին կը յաջորդէր: Այժմ, պարօն, դուք իսկ դատեցէ՛ք թէ բանաւոր պատճառ մը կա՞յ ինձ համար Մաւրը սիրելու:

Րօս. — Ես չպիտի ուզէի անոր ծառայութեան ներքև մնալ:

Եակօ — Ո՛հ, հաւաստի եղի՛ք, պարօն, թէ անոր կը ծառայեմ մի միայն նպատակներս իրեն դէմ գործադրելու համար: Ամէնքս չենք կրնար պետ լինել, և ոչ ամէն պետ կրնայ սպասել, որ հաւատարմութեամբ ծառայեն իրեն: Կան այնպիսի ծնրադիր հլու արարածներ, որ բուն իրենց ստրկութեան եռանդով մոլեգնած՝ կը վատնեն ժամանակին իրենց տիրոջը էշին պէս մի միայն իրենց առօրեայ սնունդը ձեռք բերելու համար. և երբ կը ծերանան, կը վռնտուին: Հեռու ինձմէ այդպիսի պարկեշտ ապուշները: Կան ուրիշներ ևս, որ անձնուիրութեան ձևեր կեղծելով՝ սիրտերնին իրենց անձնական շահուն համար կը վերապահեն, և իրենց պետին հաւատարմութեան կեղծ ցոյցեր ընելով՝ անոր շնորհիւ կը բաղդաւորին. և անգամ մը որ գրպաննին լաւ մը լեցունեն, իրենց անձը կը մեծարեն: Այս մարդիկ քիչ մը սիրտ ունին, և ես կը խոստովանիմ, թէ անոնցմէ մէկն եմ: Գանգի, պարօն, ինչպէս որ

ստոյգ է, թէ դուք Բօարիկօն էք — եթէ ես Մաւրը եղած լինէի, չպիտի ուզէի եակօ լինել. անոր ծառայելով, ես ինձ կը ծառայեմ. վըկայ է երկինք, որ ոչ սիրոյ, և ոչ անձնուիրութեան՝ այլ արտաքին ձեերու տակ՝ բուն իմ մասնաւոր նպատակիս համար կը գործեմ: Քանզի երբ իմ սուբրետիթ գործողութիւնս, և արտաքին ձեերս սրտիս բնական պատկերն արտայայտեն, շատ ատեն չանցնիր, սիրտս թեկի վրայ պիտի կրեմ, որպէս զի ազուաները կըացեն զայն. չեմ ես ինչ որ եմ:

Բօս. — Որքա՞ն բարեբաղդ է թանձրաշուրթն մարդը, երբ այսպէս կը յաջողի:

Եակօ — Կանչէ՛ աղջկան հայրը, արթնցո՛ւր զինքը. Մաւրին ետեէն ինկիր, անոր զուարճութիւնը թունաւորէ, զինքը փողոցներու մէջ հրատարակէ՛. աղջկան ազգականները ոտք հանէ՛, և թէև բարեբեր կլիմայի տակ կը դըտնուի, մտեղներով տանջէ զինքը. թէպէտ իւր ուրախութիւնն ուրախութիւն լինի, նեղիչ և անախորժ միջոցներով նուազեցո՛ւր անոր փայլը:

Բօս. — Ահաւասիկ անոր հօրը տունը, բարձրաձայն պիտի կանչեմ զինքը:

Եակօ — Այդպէս ըրէ ահազգեցիկ ձայնով և սոսկալի դու ու գոչումով, ինչպէս որ կը պատահի, երբ գիշեր ատեն անհոգութեամբ կըակ մը կը բռնկի բազմամարդ քաղաքի մը մէջ:

(Պրապանցիոյի սակ պատուհաններուն ներքեւ:)

Բօս. — Ի՞նչ, է՛հ, Պրապանցիօ՛, իշխան Պրապանցիօ, է՛հ:

Եակօ — Արթնցէ՛ք, ի՞նչ է՛հ, Պրապանցիօ, գո՛ւ կայ, գո՛ւ, գո՛ւ: Հօկեցէք ձեր տան վրայ, ձեր աղջկան վրայ, և ձեր պարկերուն վրա՛յ, գո՛ւ, գո՛ւ:

(Պրապանցիօ պատուհանէ մը երեւնալով:)

Պրաւ. — Ի՞նչ կը նշանակէ այս սոսկալի պօռչտուրը: Ի՞նչ է այն:

Բօս. — Իշխան, բոլոր ընտանիքդ տանդ մէջն է:

Եակօ — Ձեր տան դռները գո՞ց են:

Պրաւ. — Ինչո՞ւ համար, ի՞նչ պատճառաւ այդ հարցումը կ'ընէք:

Եակօ — Է՛հ, իշխան, կողոպտուած էք: Յունեն պարկեշտութեան վերարկունիդ հագէք, սլրտերնիդ կոտրուած է, ձեր հոգւոյն կէսը կորսնցուցիք: Ճիշդ այժմ, այս ժամուս ծերուկ սև խոյ մը ձեր սպիտակ մաքրին վրայ կը նետուի: Ելէ՛ք, ելէ՛ք, զանգուկի ձայնով արթնցուցէ՛ք խորդացող քաղաքացիները, եթէ ոչ սատանան պապ պիտի ընէ ձեզի. ելէ՛ք, կ'ըսեմ:

Պրաւ. — Ի՞նչ, խելքերնիդ կորսնցուցի՞ք:

Բօս. — Ամենայարգելի իշխան, ճանչցա՞ք արդեօք իմ ձայնս:

Պրաւ. — Ո՛չ, ո՞վ էք դուք:

Բօս. — Իմ անունս Բօարիկօ է:

Պրաւ. — Ի՞նչ անհաճոյ հանդիպում: Քեզի

արգելեցի որ իմ տանս բռնորտիքը չ'դեգերիս .
ամենայն պարզութեամբ քեզ իմացուցի որ իմ
աղջիկս քեզի համար չէ . և այժմ յիմարու-
թեամբ լի յորդ ընթրիքով և ոգելից ըմպե-
լիքով կը դաս չարամիտ յոխորտանքով հան-
գիստս վրդովել :

ԲՕՏ. — Պարոն, պարոն, պարոն, պարոն :

Պրա. — Բայց դուն հարկաւ ապահով պետք
է լինիս , որ ես բաւական ոյժ և միջոց ունիմ
քու այս վարմունքդ քեզի դառն ընծայելու :

ԲՕՏ. — Համբերութիւն, սիրելի պարոն :

Պրա. — Ինչո՞ւ ինծի գողութեան խօսք կ'ը-
նես . Վենետիկի մէջ ենք . իմ տունս մեկուսա-
ցեալ ազարակատուն մը չէ :

ԲՕՏ. — Ամենայարգելի Պրապանցիօ, հոգւոյ
ամենամաքուր պարզութեամբ կը դիմեմ ձեզի :

Եսկօ — Էհ, պարոն, դուք անոնցմէ էք,
որ Աստուծոյ չպիտի ծառայէիք , եթէ սատա-
նան հրամայէր : Ըստ որում եկանք ձեզի ծա-
ռայութիւն մը մատուցանելու , կը կարծէք թէ
սրիկաներ ենք . և պիտի թողուք որ ձեր աղ-
ջիկը պարպառիկ ձիու մը հետ զուգաւորի , և
պիտի ունենաք եղբօրորդիներ՝ որ երեսնուդ-
պիտի վունջեն , և նոյնոյններ՝ իբրև քեռորդի-
ներ , և մտրակներ՝ իբրև ազգականներ :

Պրա. — Ի՞նչ թշուառական հեթանոս մ'ես
դուն :

Եսկօ — Ես այն եմ , պարոն , որ կը գայ
ձեզի իմացնելու , որ ձեր աղջիկը և Մաւրը

հիմա իրարու հետ զրկախառն սէր կ'ընեն :

Պրա. — Ի՞նչ սրիկայ մ'ես :

Եսկօ — Ի՞նչ ձերակուտական մ'ես :

Պրա. — Ասոր համար պատասխանատու պի-
տի լինիս . կը ճանչնամ քեզի , Բօարիկօ :

ԲՕՏ. — Պարոն , ամէն բանի համար պա-
տասխանատու եմ ես : Սակայն կը խնդրեմ ը-
սէք , թէ ձեր հաճութեամբ , և լուրջ հաւա-
նութեամբն է (ինչպէս որ մասամբ կը դռնեմ ,
թէ այսպէս է) որ ձեր գեղանի աղջիկը այս
կէս գիշերուան խաւար մութին մէջ՝ վարձուած
պարզ կոնտուլարի մը հսկողութեան ներքե
երթայ ինքզինքը յանձնել հեշտասէր Մաւրի
բիրտ գրկաց մէջ : Եթէ այս ձեզի ծանօթ է ,
և ձեր հաւանութեամբ եղած է , կը խոստովա-
նինք թէ յանգուզն թշնամանք մ'էր , զոր ը-
րինք ձեզի դէմ : Սակայն եթէ տեղեկութիւն
չունիք , իմ կենցաղագիտութիւնս ինձ կ'ըսէ
թէ յանիրաւի պարսաւեցիք մեզի : Մի կարծէք
թէ քաղաքավարութեան ամէն ձեւեր մոռնա-
լով՝ ուզեցի խաղ մը խաղալ և զուարճանալ
ձեր յարգութեան հետ : Ձեր աղջիկը — եթէ ի-
րեն չ'իտայարեցիք — նորէն կ'ըսեմ , անհեթեթ
ապստամբութիւն մ'ըրաւ զոհելով իւր պարտա-
ւորութիւնը , գեղեցկութիւնը , կրթութիւնը և
հարստութիւնը թափառիկ օտարականի մը —
թափառիկ հոս , և ամէն ուրեք : Տեղեկացէք
ուրեմն ան միջապէս , եթէ ձեր աղջիկը իւր սեն-
եակն է , կամ ձեր տան մէջ , թող պետութեան

արդարութիւնը ծանրանայ իմ վրայ ձեզի այսպէս չարաչար խաբելու համար :

Պրա. — Է՛հ, հրահանը զարկէ՛ք. ջահ մը տուէ՛ք ինձի. — բոլոր մարդիկներս կանչեցէ՛ք : Այս դէպքը իմ երազիս կը յարմարի, ասոր հաւատալն իսկ զիս կը ճնշէ արդէն : — Լոյս բերէ՛ք, լո՛յս :

(Կը հեռանայ պասուհակնն :)

Եակօ (Բօտրիկօյինն) — Կեցի՛ր բարով. քանզի պէտք է թողում քեզի : Իմ պաշտօնիս բերմամբ անյարմար և անպատշաճ է ինձ համար, որ Մաւրի դէմ վկայութիւն տամ. (ինչպէս որ եթէ մնամ պէտք եմ ընել) որովհետեւ գիտեմ որ պետութիւնը — թէև այս դէպքը իրեն բաւական պիտի վնասէ — չկրնար զինքն առանց վտանգի հրաժարեցնել. ինչու որ Կիպրոսի պատերազմին մէջ այնչափ յաջողութիւններ ձեռք բերած է (պատերազմ որ ց'արդ կը շարունակուի), որ մինչև իսկ եթէ իրենց հոգւոյ վըրկութիւնը խնդրոյ տակ լինէր, չունին ուրիշ անոր հաւասար մէկը իրենց գործը յառաջ մը ղեկու համար : Հետեւաբար, թէպէտ դժոխքի չափ կ'ատեմ զինքը, սակայն ժամանակիս պէտքերուն հետեանքով պարտիմ դրօշակ մը պարզել, և սիրոյ նշան մը տալ, որ արդարև պարզ նշան մ'է միայն : — Ապահովապէս զինքը դըտնելու համար դէպ 'ի Սաժիթէր ուղղեցէք ձեր հետազօտութիւնները, և ես հօն պիտի լինիմ

անոր հետ : Ուրեմն մնաք բարով :
(Կը մեկնի :)

Կը մտնեն Պրապանցիօ և սպասաւորներ ջանքով :

Պրա. — Եղած չարիքը շատ ստոյգ է. աղջիկս դացեր է, և դառնութենէ զատ ուրիշ բան չմնար իմ ծերութեան օրերուս համար : — Ըսէ՛ ինձի այժմ, Բօտրիկօ, ո՞ւր տեսար զինքը : — Ո՛հ, դժբաղդ աղջիկ : — Մաւրի՞ն հետ, ըսիր : — Հիմա ո՞վ պիտի ուզէ հայր լինել : — Ի՞նչպէս գիտցար թէ աղջիկս էր : — Ո՛հ, անհաւատալի կերպիւ խաբեց զիս : — Ի՞նչ ըսաւ քեզի : — Ուրիշ լոյսեր բերէ՛ք. արթնցուցէ՛ք բոլոր ազգականներս : — Ամուսնացած են, կը կարծէք :

Բօս. — Ստուգիւ, այդպէս կը կարծեմ :

Պրա. — Ո՛վ երկինք. տունէն ի՞նչպէս փախաւ : — Ո՛վ մատնութիւն արեա՛ն : — Հայրեր, մի՛ վստահիք այսուհետև ձեր աղջկանց խելքին, տեսնելով անոնց ըրածը : — Չկա՞ն արդեօք հմայքներ, որով երիտասարդութեան և կուսութեան միտումները չարաչար խաբուին : Ասանկ բան մը կարգացած չե՞ս. Բօտրիկօ՛ :

Բօս. — Այո՛, պարոն, կարգացած եմ արդարև :

Պրա. — Արթնցուցէ՛ք եղբայրս : — Ո՛հ, երանի թէ դուն առած լինէիր աղջիկս : — Թող ոմանք այս ճամբան բռնեն և այլք ուրիշ մը : — Գիտե՞ս արդեօք, ո՞ւր կրնանք ձերբակալել աղջիկս և Մաւրը :

Բօս. — Կարծեմ կրնամ գտնել զինքը. եթէ

կը հաւանիք լաւ պահակներ առնուլ և ինծի հետ գալ :

Պրա. — Կ'աղաչեմ, դուն մեզի առաջնորդէ : Ամէն դուռ պիտի զարնեմ. դրեթէ ամէն ուրեք կրնամ հրամայել : — Զէնքեր առէ՛ք, հէ՛, և զիշերուան յատուկ պաշտօնատարներ կանչեցէ՛ք : Օ՛ն, ընդ առաջ, սիրելի Բօտրիկօ . — քու աշխատութիւնդ պիտի վարձատրեմ :

(Կը լեկնինն :)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ.

Նոյնները : Ուրիշ փոզոց մը :

Կը մտնեն Օթէլլօ, Եակօ եւ հետեւորդք :

Եակօ — Թէպէտև պատերազմի մէջ մարդ սպաննած եմ, սակայն կը նկատեմ թէ խղճի իսկական բնութիւնն է կանխամտածութեամբ սպանում չգործել : Եթէ երբեմն անիրաւութիւն չեմ ուզեր գործել, այդ մի միայն ինծի ծառայելու համար է : Ինն կամ տասն անգամ մտադրեցի զինքը կողէն զարնել :

Օթէլ. — Լաւագոյն է ինչպէս որ է :

Եակօ — Ոչ, սակայն այնչափ կը շաղակրատէր, և այնպիսի արհամարհոտ և դրդուիչ բաներ կը գործածէր ձեր պատուոյն դէմ՝ որ իմ ունեցած փոքր ինչ բարեպաշտութեամբս հազիւ կրցայ զինքը իննայել : Բայց կ'աղաչեմ, ըսէ՛ք, տէր իմ, իրապէս ամուսնացած էք : Հա-

ւատի եղի՛ք, թէ Մանիֆիքօն (*) շատ սիրուած է, և ունեցած ազդեցութեամբը՝ իւր ձայնը դուքսին չափ ոյժ ունի : Նա ձեր ամուսնութիւնը պիտի լուծէ, կամ ձեր դէմ պիտի հանէ ամէն տեսակ արգելքներ և դժուարութիւններ (որոնց իւր ազդեցութեամբը ոյժ պիտի տայ) ձեզի օրինաց խտուրտեան մատնելու համար :

Օթէլ. — Թող իւր ազդեցութիւնն ի գործ դնէ . Մերակոյտին՝ իմ մատուցած ծառայութիւններս աւելի ազդու պիտի խօսին, քան իւր տրտունջները : Տակաւին չգիտեն (երբ տեսնեմ թէ պարծենալը պատիւ մ'է, այն ժամանակ պիտի յայտնեմ) թէ կեանքս և գոյութիւնս արքայազարմ սերունդէ ծագում ունին, և իմ արժանիքս պիտի կրնայ համարձակ խօսիլ իմ ձեռք ձգած բարձր դիրքիս համար . քանզի դիտցի՛ր, Եակօ, որ եթէ չսիրէի աղնիւ Տէզտէմօնան, չպիտի հաւանէի երբէք իմ ազատ կեանքս սահմանափակելու, մինչև իսկ ծովուն յատակը գտնուած դանձերու փոխարէն : Բայց տե՛ս, ի՞նչ են այդ լոյսերը հոն :

Կը մտնեն Գասիօ եւ մի քանի պաշտօնատարներ ջանքով :

Եակօ — Ասոնք Տէզտէմօնայի հայրն, և իւր բարեկամներն են . լաւ ևս է որ ներս մտնէք :

Օթէլ. — Ես ոչ. պէտք է որ զիս գտնեն .

(*) Վենետիկի Մերակոյտի անգամոց տիտղոսն էր :

իմ յատկանիշս, տիտղոսս, և իմ հանդարտ խիզճս պիտի ցուցընեն զիս ինչպէս որ եմ: Իւրաւ անո՞նք են:

Եակօ—Յանուն Յանոսի, կարծեմ թէ ոչ:

Օրէջ.— Դուքսին սպասաւորները, և իմ տեղակալս: Դիշերը բարի շինի ձեզ, բարեկամներս. ի՞նչ լուր:

Քասիօ — Դուքսը ձեզի կը բարեւէ, զօրավար, և կը պահանջէ որ անմիջապէս իրեն ներկայանաք հիմայ այս վայրկեանիս:

Օրէջ.— Ի՞նչ պատահեցաւ արդեօք, կը կարծէք:

Քասիօ — Կիպրոսէն լուրեր, ինչպէս կը գուշակեմ. ստիպողական գործ մը: Յուկանաւերը ճիշդ այս գիշեր հետզհետէ տասներկու պատգամաւորներ զրկեցին, և ծերակուտականներէն բազումք արթնցած եկան դուքսին քով ժողուած են արդէն: Ձեր ետեւէն շտապաւ մարդիկներ զրկուեցան, և երբ ձեր բնակարանը չգտան ձեզի, ծերակուտը երեք զանազան խուզարկուներ արձակեց հոս և հոն ձեզի փնտռելու համար:

Օրէջ.— Լաւ եղաւ ուրեմն, որ դուք զիս գտաք: Խօսք մը միայն պիտի ըսեմ հոս տան մէջ, և ձեզի հետ պիտի գամ:

(Կը մեկնի:)

Քաս.— Դրօշակիր, զօրապետը ի՞նչ գործ ունի հոս:

Եակօ — Հաւատքս վկայ, նա մեծագին նաւ

մը գրաւեց այս գիշեր, և եթէ կողրպուտը օրինաւոր ճանչցուի, միանգամ ևեթ բազմը շինուած է:

Քաս.— Ձեմ հասկնար:

Եակօ — Նա ամուսնացաւ:

Քաս.— Որո՞ւ հետ:

Օրթէլլօ նորէն կը մտնէ,

Եակօ—Որո՞ւ հետ:— Օ՛ն, զօրապետ, կ'ուզէ՞ք որ երթանք:

Օրէջ.— Ձեզի հետ եմ:

Քաս.— Ահաւասիկ ուրիշ խումբ մը, որ ձեզի կը փնտռէ:

Կը մտնեն Պրապանցիօ, Բօտրիկօ, և գիշերապահ սպաներ ջաներով և զէնքերով:

Եակօ — Պրապանցիօն է.— զգուշացէք, զօրապետ, չար դիտաւորութեամբ եկած է:

Օրէջ.— Է՛հ, կանգ առէ՛ք:

Բօս.— Տէր իմ, աւասիկ Մաւրն է:

Պրա.— Բռնեցէ՛ք գողը:

(Երկու կողմակ սուրերը կը փաշեն:)

Եակօ—Դո՞ւք էք Բօտրիկօ. եկէ՛ք, պարոն, պատրաստ եմ ձեզի հետ կռուելու:

Օրէջ.— Ետ քաշեցէք ձեր փայլուն սուրերը. գիշերուան ցողը պիտի ժանգուտէ զանոնք: — Սիրելի տէր իմ, դուք ձեր տարիքովը, քան զէնքերով կրնաք հրամայել:

Պրա. — Ո՛վ դու անդգամ աւազակ, ո՞ւր պահեցիր իմ աղջիկս։ Անի՛ժեալք դու զայն կախարդեցիր. քանզի ամէն ողջախոհ էակներու կը թողում դատել, եթէ դիւթական շլթաներով կապուած չէ նա, ինչպէ՞ս հնար է որ նորատի աղջիկ մը, այնչափ փափկասուն, գեղանի և բարեբաստիկ, այնչափ ամուսնութեան հակառակ՝ արհամարհելով մեր աղգին հարուստ և գանդրահեռ երիտասարդներու խնկարկը, երբէք հասարակաց ծաղու նշաւակ լինէր, և փախչէր հօրը տունէն, և նետուէր քեզի պէս արարածի մը մըտ գիրկը, որ ոչ թէ զւարճացնելու, այլ սոսկում ներշնչելու համար ստեղծուած է։ Թող աշխարհ զիս դատէ, միթէ մտքի մօտ չէ՞, թէ դուն կախարդութիւն ի գործ դրիր անոր վրայ, և անոր փափուկ երիտասարդութիւնը մոլորեցուցիր այնպիսի դեղերով որ ցանկութիւնը կը գրգռեն։ Այս կէտը քննութեան պիտի ենթարկեմ։ Շատ հաւանական և բացայայտ է այս, հետևաբար կը ձեռքակալեմ գրեզ իբրև աշխարհիս մէկ խաբեբան, իբրև այնպիսի մէկը՝ որ օրէնքէ դուրս արդիւնալ արուեստներ ի գործ կը դնէ։

(Իւր մարդիկներուն) Ձեռքակալեցէ՛ք զինքը, և եթէ դիմադրէ, զսպեցէ՛ք զինքը իւր կենաց վտանգով։

Օրէջ. — Վար առէ՛ք ձեր ձեռքերը, դուք իմ կուսակիցներս, և դուք միւսներդ։ Եթէ ես

կամք ունենայի կռուելու, հարկ չկար, որ մէկն ինձ յիշեցունէր զայն։ (Պրասպանցիօյիկն։) Ո՞ւր կ'ուզէք որ երթամ ձեր ամբաստանութեան պատասխանելու համար։

Պրա. — Ի բանտ, մինչև որ օրէնքի տշամադրած ժամուն դատարան կանչուիք պատասխանելու համար։

Օրէջ. — Եւ եթէ հնազանդիմ, ինչպէս դո՛հ պիտի լինի դուքսը, որուն պատգամաւորները հոս իմ բոլորտիքս են՝ զիս իրեն քով առաջնորդելու պետական խիստ կարևոր գործի մը համար։

Պաշտ. — Այո՛, ճշմարիտ է, ամենայարգելի տէր իմ, դուքսը ժողով գումարած է, և ձեր ազնուութիւնն ևս, հաւաստի եմ, հրաւիրուած է։

Պրա. — Ինչպէ՞ս. դուքսը ժողով գումարած գիշերուան այս ժամուն մէ՛ջ։ Տարէ՛ք զինքը իմ դատս թեթև բան մը չէ. դուքսն ինքը, և իմ ծերակոյտի եղբայրներս ամէնքն իբրև անձնական պիտի համարին այս նախատինքը։ Քանզի եթէ այսպիսի դէպքեր անարգել պատահին, ստրուկներն և հեթանոսները մեր իշխողները պիտի լինին։

(Կը մեկնին։)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ.

Վեկեցիկի խորհրդարանը :

Դուքսը եւ Ծերակոյտի անդամները սեղանի մը առջեւ բոլորած : Պաշտօնատարներ տեսարանին խորը կանգնած :

Դուքս — Այս լուրերն այնքան հակասական են, որ անհաւատալի կը թուին :

Ա. Ծեր. — Արդարեւ համեմատութիւն չկայ. ի՞նչ նամակներս հարիւր եւ եօթն նաւ կ'իմացնեն :

Դուքս. — Եւ իմս՝ հարիւր քառասուն :

Բ. Ծեր. — Եւ իմս՝ երկու հարիւր. թէ եւ որոշ թուոյ մը վրայ չեն համաձայնիր (ինչպէս այսպիսի պարագաներու մէջ յաճախ կը պատահի, երբ տեղեկագիրը սոսկ ենթադրութեան վրայ յենած լինի) բայց եւ այնպէս ամէնքը կը հաւատեն թէ թշնամւոյն նաւատորմի զէպ 'ի Կիպրոս կը յառաջանայ :

Դուքս — Այո՛, այս բաւական է գաղափար մը կազմելու համար. սխալանքի մէջ չեմ կրնար այնքան ապահովութիւն գտնել, բայց բուն եղելութիւնը սոսկալի կերպիւ կ'ըմբռնեմ :

Նաւասի (Ներսէն) — Հէ՛յ, հէ՛յ, հէ՛յ :

Կը մտնէ պաշտօնատար մը նաւատորմ մէկտեղ :

Պաշ. — Նաւերէն պատգամաւոր մը :

Դուքս — Ի՞նչ լուր այժմ :

Նաւասի — Թշնամւոյն նաւերը Հոռոսի վրայ կը յառաջանան, պարօն Անճէլօ ինձ այսպէս հրամայած է կառավարութեան իմացնելու :

Դուքս — Ի՞նչ կ'ըսէք այս փոփոխման համար :

Ա. Ծեր. — Այս չկրնար լինել, բանաւոր պատճառ մը չկայ. եւ ցոյց մ'է միայն մեր ուշադրութիւնը դարձնելու համար : Երբ մտածենք Կիպրոսի կարևորութեան վրայ թշնամւոյն համար, լաւ կը հասկնանք թէ Հոռոսէն աւելի արժէք ունի այն իրեն համար, եւ աւելի դիւրութեամբ կրնայ գրաւել. ինչու որ Հոռոսի պէս ամուր վիճակի մէջ չէ, եւ բոլորովին զուրկ է պաշտպանութեան ամէն միջոցներէ : Երբ այս ամենուն վրայ կը խորհինք, պէտք չէ կարծել թէ թշնամին այնչափ տգէտ է, որ թողու իրեն համար այնքան կարևոր եղող այն կղզին, զոր մեծ դիւրութեամբ կրնայ գրաւել. եւ երթայ այնպիսի վտանգի մէջ նետուի, որ իրեն համար անօգուտ է :


Դուքս — Այո՛, պարզապէս յայտնի է, թէ թշնամին Հոռոս երթալու դիտաւորութիւն չունի :

Պաշ. — Աւասիկ ուրիշ լուրեր :

Կը մտնէ պատգամաւոր մը :

Պաշ. — Պատկառելի եւ շնորհալի տեարբ, թշնամին դէպ 'ի Հոռոս յառաջանալով՝ հոն պահեստի տորմիզի մը միացաւ :

1002
5548



Ա. Եւեր. — Այո՛, այդպէս կը խորհէի: — Բանի՞ նաւերէ բաղկացեալ է, կը կարծես:

Պատ. — Երեսուն. և հիմա իրենց ուղղութիւնը կը փոխեն, և ինչպէս յայտնի կ'երևի, իրենց նպատակն է դէպ 'ի Կիպրոս յառաջանալ: Պարոն Մօնթանօ ձեր հաւատարիմ և քաջ ծառան մեծարանօք կ'իմացնէ զայս ձեզ, և կ'ազատէ որ հաւատք ընծայէք իրեն:

Դուք — Ստոյգ է ուրեմն որ դէպ 'ի Կիպրոս կը յառաջանան: Մարքիւս Լիւչիքօս քաղաքը չէ՞ արդեօք:

Ա. Եւեր. — Նա այժմ Թիօրէնցա կը գտնուի:

Դուք — Գրեցէ՛ք մեր կողմանէ որ ամենայն փութով քաղաք դառնայ:

Ա. Եւեր. — Աւասիկ Պրապանցիօ, և քաջաբի Մաւրը:

Կը մտնեն Պրապանցիօ, Օթէլլօ, Եակօ, Բօարիկօ և սպայք:

Դուք — Բաջդ Օթէլլօ, թշնամուռն դէմ ձեզի անմիջապէս պաշտօնի պիտի կանչենք:

(Պրապանցիօյի) Չտեսայ ձեզի, բարի եկաք, ազնիւ պարոն: Ձեր խորհրդին և օգնութեան պէտք ունէինք այս գիշեր:

Պրա. — Նոյնպէս և ես ձեր խորհրդին. թող ձեր մեծութիւնը ներէ ինծի: Ոչ իմ պաշտօնս, և ոչ ինչ որ լսեցի գործերու մասին՝ իմ անկողնէս զիս վերցուցին. և ոչ հասարակաց հոգը

զիս կ'զբաղեցնէ այս վայրկենիս. քանզի իմ մասնաւոր ցաւս այնքան բուռն և անտանելի է, որ կը սուզէ և կ'անհետացնէ ուրիշ ամէն ցաւեր:

Դուք — Ա՛հ, ի՞նչ պատահեցաւ:

Պրա. — Աղլիկօ, ո՛հ, աղլիկօ:

Եւեր. Ար — Ի՞նչ, մեռա՞ւ արդեօք:

Պրա. — Այո՛, մեռաւ ինծի համար: Մոլորեցուցին զինքը, յափշտակեցին ինձմէ, և սուտ բժիշկներէ պատրաստուած դիւթական դեղերով ապականեցին զինքը. քանզի այնպիսի մէկը՝ որ թերակազմ, կոյր կամ տկարամիտ չէ, չպիտի կրնար առանց դիւթական ազդեցութեան մը.....:

Դուք — Ով որ իսկ լինի այն՝ որ այսպէս վատօրէն ձեր դուստրը գլխէ հանեց, և զձեզ անորմէ բաժնեց, աւասիկ օրինաց արիւնոտ գիրքը որուն խիստ տառերը ձեր քմաց համեմատ պիտի մեկնէք. այո՛, թէև յանցաւորը մեր որդին իսկ լինէր:

Պրա. — Խոնարհաբար շնորհակալ եմ ձեր մեծութենէ: Աւասիկ հոս է այս մարդը, այս Մաւրը, զոր, ինչպէս կ'երևի, պետական գործերու համար հոս բերել տուած էք:

Դուք և ԵւերակոյՅ — Շատ կը ցաւինք ասոր համար:

Դուք — (Օրփոյն) Դուք ձեր կողմանէ ի՞նչ կրնաք ըսել ասոր:

Պրա. — Ոչինչ, բայց եթէ այս այսպէս է:

Օրհչ. — Մեծազօր և պատկառելի ատենաւիպ, ազնիւ և սիրեցեալ տեարք, թէ ես այս ծերունւոյն աղջիկն առեանդեցի՝ կատարելապէս ճշմարիտ է, ինչպէս ճշմարիտ է նաև թէ ամուսնացայ անոր հետ. այս է աւասիկ իմ բոլոր յանցանքիս մեծութիւնը, և ոչինչ աւելի: Իմ խօսելու եղանակիս մէջ այնչափ վարժ չեմ, և հաշտարար բառեր գործածելու տաղանդը չունիմ. քանզի եօթը տարին լրացնելէս յետոյ, այս բազուկներս — ի բաց առեալ իննամսեայ անգործութիւնս — բանակավայրի մէջ իրենց անգին դործունէութիւնը կատարած են, և այս ընդարձակ աշխարհէս նկատմամբ ոչինչ կրնամ խօսիլ, քանզի իմ կենացս միակ զբաղումը պատերազմներ եղած են. հետևաբար ես ինքս խօսելով դժուարաւ պիտի կարենամ իմ դատս պաշտպանել. բայց և այնպէս ձեր բարեսէր ներողամտութեան վրայ վստահ՝ իմ սիրոյս բոլոր պարագաներու անսեթեթ պատմութիւնը պիտի պարզեմ ձեր առջև, ցուցնելու համար թէ ի՞նչ դեղորայք, ի՞նչ կախարհութիւն, ի՞նչ դաւադրութիւն, և ի՞նչ զօրաւոր հմայք ՚ի գործ դրի (որոնց համար զիս կը զբարտեն) իւր աղջկան սէրը շահելու համար:

Պրա. — Համեստ կոյս մը, բնութեամբ այնչափ հեղ և հանդարտ, որ ամենաթեթև յուզումէ մը կը շառագունէր, պիտի սիրահարի՞ բնութեան, տարիքին, իւր երկրին, իւր պատուոյն և ամէն բանի հակառակ՝ այնպիսի մէկու

մը հետ, որուն վրայ նայելու կը վախնար: Սըխալ և շատ անկատար դատողութիւն մ'է խօս. տօվանիլ, թէ կատարելութիւնը կրնայ այսպէս սխալիլ բնութեան ամէն օրէնքներու դէմ, և զայս բացատրելու համար պետք է հետեցնել, թէ դժոխային արուեստ մ'ի գործ դրուած է այս պարագայիս մէջ: Ուստի նորէն կը պնդեմ թէ նա արիւնի վրայ ազդող զօրաւոր խառնուրդով մը, կամ գիւթական ըմպելիքով մը իմ աղջկանս վրայ ներգործեց:

Դուխ — Այսպէս պնդելն սպացուցանել չէ, աւելի ստոյգ և որոշ ապացոյցներ պետք է մէջ բերել, քան այսպիսի կասկածներ, և տղայական պատճառաբանութիւններ անոր վերագրել:

Ա. Ծեր. — Բայց, Օթէլլօ, խօսեցէ՛ք. անուղղակի և բռնի միջոցներ ՚ի գործ դրի՞ք այս նորատի աղջկան յօժարութիւնը դրաւելու, և թունաւորելու համար. կամ աղէքսով և հոգեկից համակրութեամբ յաշողեցաք:

Օրհչ. — Կ'աղաչեմ ձեզի, Սակիթաշա մէկը զրկեցէ՛ք, տիկինը հոս կանչելու համար, և թոյլ տուէ՛ք անոր, որ իմ վրայ խօսի իւր հօր ներկայութեան: Եթէ անոր խօսքերէն հետեցնէք թէ յանցաւոր մ'եմ ես, այն վստահութիւնը, և այն պաշտօնը, զոր ձեզմէ ընդունած եմ, ոչ միայն ես առէք ինձմէ, հասցա նաև ձեր վճիռը թող ծանրանայ իմ կեանքիս վրայ:

Դուխ — Գնացէ՛ք, հոս կանչեցէ՛ք Տէլտէմօնան:

Օրհչ. — Դրօշակիր, առաջնորդէ՛ անոնց,
դուն լաւ գիտես բնակարանը :

(Կը մեկնին Եակօ եւ հեկտորոյի :)

Եւ մինչև որ նա գայ, կ'ուզեմ պարզել
ձեր առջև միևնոյն անկեղծութեամբ ինչպէս
կը խոստովանիմ իմ մեղքերս երկինքի առջև,
թէ ինչպէս գրաւեցի այս գեղեցիկ տիկնոջ սէ-
րը, և թէ նա ի՞նչպէս հաւանեցաւ իմ սիրոյս :

Դուքս—Խօսեցէ՛ք Օթէլլօ :

Օրհչ. — Իւր հայրը զիս կը սիրէր, յաճախ
տուն կը հրաւիրէր, հարցումներ կ'ընէր իմ
կենաց պատմութեան վրայ, թէ տարուէ տարի
ի՞նչ պատերազմներու և վտանգներու ենթար-
կուած էի. ուստի պատմեցի ամէն ինչ իմ մա-
նուկ օրերէս սկսեալ մինչև այն ատեն երբ զիս
կ'աղաչէր որ պատմեմ : Կը նկարագրէի աղէտա-
լից դէպքեր սրտայոյզ արկածներ ծովու և
ցամաքի վրայ, թէ ի՞նչպէս մահաբեր խրա-
մատի մը մէջ մաղապուր պրծայ մահուանէ,
թէ ի՞նչպէս խրոխտ թշնամիէ մը գերի բռնուե-
ցայ, և իբրև գերի ծախուեցայ, և թէ ի՞նչպէս
իմ ազատութիւնս ձեռք բերի, և ի՞նչ պատա-
հեցաւ իմ ճամբորդութեանս մէջ. թէ ի՞նչ խո-
րունկ քարանձաւներէ անցայ, երաշտ անա-
պատներէ, անհարթ քարահանքերէ, քարա-
ժայռերէ, և երկնաբերձ ըլլորներէ : Խօսեցայ
նաև մարդկանց այն աեսակ ցեղերու վրայ, որ
զիրար կուտեն, ինչպէս նաև այնպիսիներու
վրայ որոնց զլուխներն իրենց ուսերուն տակ

կը գտնուին : Այս ամէնը լսելու համար Տէզ-
տէմօնա լուրջ ուշադրութիւն կը մատուցանէր.
և երբ տնային գործերը զինքն այլուր կը կան-
չէին, կրցածին չափ շուտով կը կարգադրէր
զանոնք, և նորէն կը գար, և անյագ ական-
ջով իմ խօսքերս կը լսուէր : Ասիկայ նշմարե-
լով՝ յարմար առիթ մը ձեռք բերի, և լաւ մի-
ջոյններ գտայ, որպէս զի սրտագին աղաչէ զիս
երկարօրէն նկարագրել իրեն իմ պանդխտու-
թեան բոլոր պարագաները, որոնց մի քանի
մասերը միայն լսած էր հարևանցի կերպիւ :
Հաւանեցայ, և շատ անգամ արցունքներ նըշ-
մարեցի իւր աչքերուն մէջ, երբ սոսկալի դէպ-
քի մը նկարագրութիւնը կ'ընէի, որուն իմ ե-
րիտասարդ հասակս առարկայ եղած էր : Պատ-
մութիւնս լմացունելէս յետոյ՝ նա զիս վարձատ-
րեց խորունկ հառաչանքով մը, և կ'երդնուր
ըսելով՝ թէ, ստուգիւ տարօրինակ էր այս, և
աւելի քան տարօրինակ, սրտայոյզ, և սքան-
չելապէս սրտայոյզ. և կ'ուզէր որ լսած չ'ընէր
այս ամէնը. բայց և այնպէս կը փափաքէր որ
երկինք շնորհէր իրեն այնպիսի մարդ մը. Ինձ
մէ շնորհակալ եղաւ, և ըսաւ թէ, եթէ ունէի
այնպիսի բարեկամ մը, որ զինքը (Տէզտէմօնան)
կը սիրէր, բաւ էր որ անոր սորվեցնէի ինչպէս
նկարագրել իմ պատմութիւնս, և նա պիտի
գրաւէր անոր սէրը : Այս ակնարկութեան վրայ՝
խօսեցայ. — զիս սիրեց իմ անցուցած վտանգ-
ներուս համար, և ես սիրեցի զինքը առ իս

ցուցըցած կարեկցութեան համար : Այս է միայն
ահա իմ 'ի գործ դրած կախարհութիւնս . . . : —
Բայց աւասիկ տիկինը որ կը դայ, թող նա վը-
կայութիւն տայ :

Կը մտնեն Տէղտէմօնա, Եակօ և և հետեւորդք :

Դռնքս — Կարծեմ թէ այս պատմութիւնը
իմ աղջկանս սիրտը ևս պիտի հրապուրէր : Սի-
րելի Պրապանցի, ջանացէ՛ք բարի մտօք առ-
նուլ այս անհաճոյ գործը : Լաւ ևս է խորտակ-
ուած զէնքեր գործածել, քան ձեռնունայն
մնալ :

Պրա. — Կ'ազաչեմ, լսեցէ՛ք զինքը : Եթէ
խոստովանի թէ հաւասար սիրով ինքն ևս ա-
նոր յարած է, անէծք իմ գլխոյս վրայ, եթէ
պարտաւանքս այս մարդուն վրայ ծանրանա՛յ :
— Մօտեցի՛ր, սիրուն տիկին, այս ազնիւ ըն-
կերութեան մէջ կը նշմարե՞ս արդեօք զայն,
որուն աւելի ևս հնազանդութիւն կը պարտիս :

Տէգ. — Իմ ազնիւ հայրս, հոս կրկին պար-
տաւորութիւն մը կը նշմարեմ : Ձեզի կը պար-
տիմ իմ կեանքս, և դաստիարակութիւնս . իմ
կեանքս և դաստիարակութիւնս կը սորվեցնեն
ինձ թէ ի՞նչպէս պէտք եմ յարգել զձեզ . զուք
պարտուց տէրն էք, մինչև ց'այս վայր ձեր
դուստրն եմ, բայց աւասիկ ամուսինս, (ցոռցը-
նելով Օրէլլօն) : Եւ որչափ իմ մայրս ձեզի հնա-
զանդութիւն ցոյց տուաւ՝ նախագասելով զձեզ
իւր հօր առջև, այսպէս ևս կը յայտարարեմ

թէ նոյն հնազանդութիւնը կը պարտիմ Մաւ-
րին, իմ տիրոջս :

Պրա. — Աստուած ձեզի հետ լինի՛ : — Վեր-
ջացուցի խօսքս : — Թող ձեր մեծութիւնը բա-
րեհաճի պետական գործերու վրայ խօսելու :
Լաւ ևս էր՝ փոխանակ զաւակ մ'ունենալու,
օտար մը որդեգրած լինէի : — (Օրէլլօյինն) Մօ-
տեցի՛ր, Մաւր, բոլոր սրտովս կը տամ քեզի,
ինչ որ, եթէ արդէն ունեցած չլինէիր, բոլոր
սրտովս պիտի մերժէի քեզի : — (Տէգսէմօնայինն) :
Քու շնորհիւդ, գոհարիկս, ուրախ եմ հոգւովս,
որ ուրիշ զաւակ չունիմ . քանզի քու փա-
խուստդ ինձ պիտի սորվեցնէր բռնութիւն 'ի
գործ դնել, կապանքի տակ դնելով զայն :
Վերջացուցի, տէր իմ :

Դռնքս — Թոյլ տուէ՛ք, որ ձեր տեղը խօ-
սիմ, և խորհուրդ մը յայտնեմ որ այս սիրա-
հարներուն իբր պատուանդան կրնայ ծառայել
ձեր շնորհաց արժանանալու համար :

Երբ ամէն դեղ կ'սպառենք, և ինչ ոչ յոյ-
սը վառ պահած էր մեր սրտին մէջ, կ'անհե-
տի, ցաւերը կը վերջանան : Ափսոսալ չարիքի
մը վրայ, որ անցած դացած է, կը նշանակէ
նոր չարիքներ հրաւիրել մեր վրայ :

Երբ բազդը մեզմէ կ'առնու ինչ որ չենք
կրնար պահել, անոր վրայ ծիծաղած կը լի-
նինք, երբ կը համբերենք :

Գողցուողը որ կը ժպտի, գողէն բան մը

կը գողնայ: Այն որ փուճ մորմոքներով կը մաշի, ինքզինքէն կը գողնայ:

Պրա. — Այսպէս ուրեմն թող թշնամին կիպրոսը դրաւէ, չենք կորսնցնելու զայն, քանի որ կրնանք ժպտիլ:

Լաւ խորհուրդ ընդունած կը լինի այն՝ որ սփոփանք մը կը քաղէ անկէ: Բայց այն՝ որ ցաւի դիմադրելու համար պարտաւորած է խեղճ համբերութեան դիմելու, կրնայ տանիլ թէ ցաւի և թէ խորհրդի:

Այս առաձները որչափ քաղցր կամ դառն երկդիմի զօրութիւն մ'ունին: Բայց բառերը բառեր են. երբէք տակաւին լսած չէի թէ խորտակուած սրտի մէջ կարելի է մուտ գտնել ականջէն: Կ'աղաչեմ ձեզի խոնարհաբար տէրութեան դորձերու վերագառնանք:

Դռնա — Թշնամին ահագին ուժով դէպ 'ի կիպրոս կը յառաջանայ: — Այդ երկրին պաշտպանութեան միջոցները ձեզի շատ աւելի ծանօթ են, Օթէլլօ, և թէպէտև ունինք հոն խիստ կարող և փորձառու տեղակալ մը, սակայն հասարակաց կարծիքը—խրաց այդ գերագոյն դատաւորը — վստահաբար զձեզ մատնանիչ կ'ընէ, հետեւապէս պէտք էք հաւանիլ՝ որ ձեր արդի երջանկութեան փայլը մթադնի այս մըրկայոյզ և տաժանելի արշաւանքով:

Օթէլ. — Պատկառելի տեարք, բռնակալ սովորութիւնը փետրալից փափուկ անկողնի մը վերածած է ինձ համար՝ պատերազմի կարծրա-

կուռ և պողպատեայ մահիճը. կը խոստովանիմ որ խոտամբեր կեանքի մէջ միայն կը գտնեմ իմ բնական աշխոյժս և կորովս, և յօժարութեամբ կ'ստանձնեմ այս պատերազմը թշնամույն դէմ: Հետեւաբար կը խոնարհիմ ձեր պետութեան որոշման առջև, խնդրելով միայն որ իմ կնոջս համար՝ իւր աստիճանին և տոհմին արժանի տնօրէնութիւն մ'ընէք:

Դռնա — Եթէ ձեզ հաճելի է կրնայ իւր հօրը տունն երթալ:

Պրա. — Ձեմ հաւանիր ատոր:

Օթէլ. — Եւ ոչ ես:

Տէգ. — Ոչ իսկ ես: Ձեմ ուզեր հոն բնակիլ՝ իմ ներկայութեամբս հօրս անհամբերութիւնը չ'զրգուելու համար: Ծնորհալի դուքս, հաճեցէ՛ք իմ խօսքերուս բարեսէր ունկնդրութիւն մը շնորհել, և ձեր հաւանութիւնը տալ պարզմտութեանս մէջ ինձի օգնելու:

Դռնա — Ի՞նչ կը փափաքիք, Տէգաժմօնա:

Տէգ. — Թէ սիրեցի Մաւրը անոր հետ ապրելու համար, զայս կրնան փողահարել 'ի լուր աշխարհի՝ բաղդին դէմ իմ յայտնի ըմփոստութիւնս և զիմադրութիւնս: Սիրտս իմ տիրոջս գեղեցիկ յատկութիւններովը դրաւուած է: Օթէլլօյի հոգւոյն մէջ նշմարեցի իւր դէմքը, և անոր փառքին և արիական բարեմասնութեանց նուիրեցի իմ բաղգս ու հոգիս: Այսպէս ուրեմն սիրելի տեարք իմ, եթէ ես հոս մնամ

իբրև խաղաղութեան թիթեռնիկ մի, և նա պատերազմի երթայ, պիտի զրկուիմ անոր մեծամեծ շահատակութիւնները տեսնելու հաճոյքէն, որոնց համար զինքը սիրեցի, և անոր սիրելի բացակայութիւնը իմ վրաս սաստիկ պիտի ծանրանայ: Թող տուէ՛ք, որ անոր հետ երթամ:

Օրեղ. — Ձեր ձայները, տնարք իմ. — կ'ազնւիմ, թող տուէ՛ք անոր որ իւր ազատ կամացը հետևի: Ձեմ խնդրեր այս շնորհքը իմ սեփհական հաճոյքիս համար՝ իմ կիրքս գոհացնելու, և ոչ մեր նորածին սիրոյ եռանդը յագեցնելու համար. այլ անոր փափաքանաց համակերպիլ կուզեմ: Թող երկինք հեռի պահէ՛ ձեր ազնիւ հոգիները այն մտածումէն՝ թէ, ըստ սրում նա ինձի հետ է, անփոյթ պիտի լինիմ ձեր յոյժ կարևոր գործին համար: Ո՛չ, եթէ երբէք թեաւոր կուսիտօնի թեթև խաղերը հեշտասէր մեղկութեամբ ակարացնեն իմ խորհելու և գործելու կարողութիւններս, և եթէ զուարճութիւնք մուցնել տան ինձ իմ պարտաւորութիւնս, թող տնայէն կանայք իմ սաղաւարտս իբրև սան գործածեն, և ամէն տնարգանք և արհամարհանք կուտեն իմ վրայ:

Դուքս — Ինչպէս որ կ'ուզէք դուք ձեր մէջը որոշեցէ՛ք. — թէ նա պիտի մնայ, կամ ձեր հետ պիտի երթայ: — Մեր գործը ստիպողական է, և պէտք է որ շտապէք. այս գիշեր պէտք է որ ճամբայ ելնէք:

Տեղ. — Այս գիշեր, տէր իմ:

Դուքս — Այո՛, այս գիշեր:

Օրեղ. — Բոլոր սրտովս:

Դուքս — Վաղն առտու ժամը իննին նորէն հոս պիտի գտնուինք: Պաշտօնատար մը թողէ՛ք մեր քով, Օթէլլօ, որպէսզի մեր յանձնարարական թուղթերը, և հարկ եղած հրահանգները ձեզի բերէ:

Օրեղ. — Եթէ ձեր մեծութիւնը կը հաճի, իմ դրօշակիրս պիտի թողում — պարկեշտ և վըստահելի անձ մը — որուն յանձնարարած եմ իմ կնոջս ընկերանալու պաշտօնը, և որուն կրնաք յանձնել ինչ որ ձեր մեծութիւնը կարևոր կը դատէ ինձ զրկելու:

Դուքս — Թող այդպէս լինի: — Գիշեր բարի ամէնուդ:

(Պրայանցիոյ ինն:) Իսկ դուք, ազնիւ տէր իմ, եթէ առաքինութիւնը միշտ իւր գեղեցկութեան փայլը կը պահէ. քու փեսադ սե լինելէ աւելի՛ գեղեցիկ է:

Ա. Մեր. — Երթաս բարով, քաջ Մաւր, լաւ վարուէ՛ Տեղտեմօնայի հետ:

Պրա. — Հսկէ՛ անոր վրայ, Մաւր, աչքդ վրան լինի. նա իւր հայրը խաբեց, կրնայ քեզի ևս խաբել:

(Կը մեկնին Դուքս, Մերակոյտի անդամ, պաշտօնատար եւն.)

Օրէջ. — Իմ կեանքս անոր հաւատարմութեան վրայ: — Պարկեշտ Եակօ, Տէղտէմօնան պարտիմ քեզի թողուլ. կ'աղաչեմ թող կինդ անոր ընկերանայ. և յարմար ժամանակին զանոնք կիպրոս պիտի բերես: — Եկո՛ւր, Տէղտէմօնա, սիրոյ և գործերու կարգադրութեան համար մէկ ժամ միայն ունիմ քեզի հետ անցունելու: Պէտք է հնուզանդիլ ժամանակին:

(Կը մեկնին Օրէջօ և Տէգսեւօնա:)

Րօս. — Եակօ:

Եակօ — Ի՞նչ կ'ըսես դու, աղնիւ սիրտ:

Րօս. — Ի՞նչ պիտի ընեմ, կը կարծես:

Եակօ — Ի՞նչ պիտի ընես, անկողին պիտի երթաս, և քնանաս:

Րօս. — Պիտի երթամ անմիջապէս ծովը նետուիլ:

Եակօ — Եթէ այդպէս ընես, քեզի այլ ևս չպիտի սիրեմ: Ինչո՞ւ համար, անմիտ պարոն:

Րօս. — Անմտութիւն է ապրիլ, երբ կեանքը տանջանք մ'է. և երբ մահը մեր բժիշկն է՝ արտօնութիւն ունինք մեռնելու:

Եակօ — Ով վատ դո՛ւ: Չորս անգամ եօթը տարիներ այս աշխարհիս վրայ կ'ապրիմ, և անկէ 'ի վեր որ կարող եղայ բարիքը թշնամանքէն զանազանել, երբէք չգտայ մարդ մը որ գիտնայ ինքզինքը սիրել: Ըսելէ յառաջ՝ թէ աղջկան մը սիրոյն համար կուզեմ ծովը նետուիլ, պէտք եմ կապիկի մը հետ իմ մարդկութիւնս փոխել:

Րօս. — Ի՞նչ պէտք եմ ընել: Կը խոստովանիմ, թէ ամօթ է ինձի համար այսպէս սիրահարուիլ, սակայն առաքինութիւնն անկարող է անոր դար խն մը տանիլ:

Եակօ — Առաքինութիւն, մէկ թուզի տեղ չեմ առնուր: Մեզմէ կախեալ է այսպէս, կամ այնպէս լինելն: Մեր մարմինը մեր պարտէզն է և մեր կամքն՝ անոր պարտիզպանը, այնպէս որ եթէ կ'ուզենք եղիճ տընկել, կամ վայրի հազար, և զոպայ ցանել. և ծոթրին անկէ խլել. անոր մէջ մէկ տեսակ բանջարեղէն տնկել, կամ զանազան տեսակներով զարդարել. անհոգութեամբ խոպան դարձնել, կամ արուեստով պարարել զայն. այս ամէնն ընելու, և ազատօրէն փոփոխելու կարողութիւնը մեր կամքէն կախեալ է: Եթէ մեր կենաց կշիռը իրեն հակակշիռ չունենար բանականութեան նժարը՝ հեշտասիրութեան թաթին դէմ, մեր խառնուածքը և մեր յօժարութեանց ստորնութիւնը ամենացաւալի հետեութիւններու պիտի մղէին զմեզ: Բայց բանականութիւն ունինք՝ մեր մոլեգին կիրքերը, մեր մարմնական խայթերը, և մեր անզուսպ ցանկութիւնը մեղմելու համար, որով կ'եզրակացնեմ թէ՛ ինչ որ սէր կ'անուանենք, պատուաստ կամ մակաբոյժ մ'է:

Րօս. — Անկարելի է:

Եակօ — Սէրը պարզապէս արեան բորբոքում, և մեր կամքին արտօնութիւնն է: Օն, մարդ եղի՛ր. խղուիլ կ'ուզե՞ս, կատուներ, և

անոր կոյր ձագերը խղզէ՛ : Ըսի արդէն , թէ քու բարեկամդ եմ , և քեզի յարած մշտատե կապերով : Երբէք չպիտի կարենայի քեզի այսչափ օգտակար լինել , որչափ հիմա : Քսակիդ մէջ ստակ դի՛ր , հետեւէ այս պատերազմին . կերպարանքդ փոխէ՛ կեղծ մօրուքով մը . կը սեմ նորէն , քսակիդ մէջ ստակ դի՛ր : Չկրնար լինել որ Մաւրի նկատմամբ Տէղտէմօնայի զգացած սէրը երկար տեւէ , — քսակիդ մէջ ստակ դի՛ր , — և Մաւրի սէրը՝ Տէղտէմօնայի համար : Այս սիրոյ սկզբնաւորութիւնը բուռն եղաւ , և պիտի տեսնես թէ բաժանումը ևս նոյն համեմատութեամբ պիտի լինի : — Բայց կը կրկնեմ , ստակ դիր քսակիդ մէջ : Այս Մաւրերը փոփոխամիտ են . քսակդ ստակով լեցո՛ւր : — Այն կերակուրը՝ որ հիմա իրեն համար ախտիայի ծաղկին չափ ախորժելի է , չուտով պիտի դառնանայ : Իսկ իւր դեռատի կինը անշուշտ փոփոխութիւն պիտի կրէ . երբ անոր մարմնով յագենայ , իւր ընտրութեան սխալը չուտով պիտի ըմբռնէ : Պէտք է որ փոխուի , պէտք է . հետեւաբար ստակ դի՛ր քսակիդ մէջ : — Եթէ բացարձակապէս կ'ուզես ինքզինքդ ոչնչացնել , խղզուելէ աւելի փափուկ միջոց մը գտի՛ր : Կրցածիդ չափ ստակ ժողուէ : Եթէ թափառական բարբարիկի մը , և խորամանկ վենետուհւոհւոյ մը մէջ փոխանակուած դիւրաբեկ ուխտադրութիւնը այնքան կարծր չէ իմ հանճարամտութեանս՝ և բոլոր դժոխքի սերունդին հա-

մար , դուն պիտի վայելես այդ կինը . ուստի ստակ ճարելու նայէ : Կրողը տանի՛ հեղձումը . այդ բոլորովին մտքէդ հանէ : Մանաւանդ չանա որ վայելելէ ետքը ինքզինքդ կախես , քան թէ խղզուիս , առանց զինքը վայելելու :

ՐօՏ. — Իմ յոյսերս իրագործելու համար պիտի օգնե՞ս ինձի , եթէ ըսածներուդ հետեւիմ :

Եսկօ — Կրնաս իմ վրայ վստահիլ : — Գնա՛ ստակ պատրաստէ՛ : Քանի անգամ ըսի քեզի , և կ'ըսեմ կրկին և կրկին անգամ , թէ կ'ատեմ Մաւրը : Իմ պատճառներս սիրտս կը ճնշեն , դուն ևս ոչ նուազ պատճառներ ունիս : Թող ուրեմն միանանք՝ անոր դէմ մեր վրէժը լուծելու համար : Եթէ յաջողիս զինքը կաւատ մ'ընել , քեզի համար հաճութիւն՝ և ինձի համար զբօսանք մ'է այդ : Ժամանակի արգանդին մէջ կան շատ դէպքեր , որոնք պիտի ծնին : — Օ՛ն ուրեմն գնա՛ , և ստակ ճարէ՛ : Վաղը ասոր վրայ նորէն պիտի խօսինք . — մնաս բարով :

ՐօՏ. — Վաղը առտու ո՞ւր պիտի հանդիպինք իրարու :

Եսկօ — Իմ բնակարանս :

ՐօՏ. — Կանուխէն քեզի հետ պիտի լինիմ :

Եսկօ — Լաւ , լաւ , երթաս բարով : Կը լսե՞ս Բօտրիկօ :

ՐօՏ. — Ի՞նչ կ'ըսես :

Եսկօ — Այլ ևս խղզուելու վրայ չպիտի խօսիս , կը լսե՞ս :

Քոս. — Փոխուած եմ այլ ևս : իմ բոլոր հոգերս պիտի ծախեմ :

Եակո — Շատ լաւ . երթաս բարով . քսակդ աղէկ մը լեցս'ւր :

(Կը մեկնի Քոսիկո :)

(Առանձին) Ահա ինչպէ՛ս միշտ իմ քսակս կը լեցնեմ այսպիսի յիմարները խաբելով . քանզի իմ ձեռք բերած յատուկ փորձառութիւնս պղծած պիտի լինէի, եթէ ասոր նման ապուշի մը հետ ժամաւաճառ լինէի առանց օգտուելու և զուարճանալու : Կ'ատեմ Մաւրը : — Այնպէս կը կարծուի, թէ նա իմ անկողնոյս մէջ ամուսնոյ դեր կատարած է : Չգիտեմ թէ ստոյգ է այս . — բայց ես այս տեսակ շնչին կասկածի մը համար իսկ պիտի գործեմ իբր թէ ստոյգ լինէր : Նա լաւ կը գնահատէ զիս, և այս առաւել ևս պիտի թելադրէ ինձ իմ խորհուրդներս 'ի գործ դնելու : Քասիօն ճիշդ ուղած մարդս է . տեսնենք այժմ . իւր պաշտօնը ձեռք ձգել, և իմ փափաքներս յագեցնել : Այս կրկպատիկ ապիրատութիւն մ'է : — Ինչպէ՞ս, ինչպէ՞ս : — Տեսնենք : — Ժամանակէ մը ետքը Օթէլլօյի միտքը պղտորել, հաւտացնելով անոր թէ Քասիօն շատ ընտանի է իւր կնոջը հետ : — Քասիօն գեղադէմ է գգուալից ձևերով, և կրնայ կասկածներ ներշնչել, և իւր կերպարանքով կիները գլխէ հանել : Մաւրը ընութեամբ պարզ և անկեղծ կը հաւատայ թէ մարդիկ պարկեշտ են, բաւ է որ այնպէս երևին. և պիտի թողու որ դիւրու-

թեամբ էջի պէս քթէն բռնուելով առաջնորդուի :

Գծեցի իմ յատակագիծս . — յղացայ զայն : — Դժոխք և խաւար պէտք է 'ի լոյս բերեն այս հրէշային ծնունդը :

(Կը մեկնի :)

(Վերջ Ա. Արարուածի :)

Երկրի վրա կան բնական հարստություններ

և այլն

Բնական հարստությունները

կարող են լինել հարստություններ

և այլն

(1888 թ.)

Այս գրքի նպատակն է ցույց տալ հարստությունների բնույթը, դասակարգել և նկարագրել նրանք, որոնք հանդիպում են հողի տակ, և ցույց տալ, թե որտեղ և որքան հարստություններ կան:

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Այս գրքի նպատակն է ցույց տալ հարստությունների բնույթը, դասակարգել և նկարագրել նրանք, որոնք հանդիպում են հողի տակ, և ցույց տալ, թե որտեղ և որքան հարստություններ կան:

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա .

Ծովեղերեայ քաղաք մը կիպրոսի մէջ :
Կը մանեն Մօնթանօ, եւ երկու պարօններ :

Մօնթ. — Հրուանդանէն ի՞նչ կը տեսնէք ծովու վրայ :

Ա. Պրն. — Ոչինչ ամենեւին . ալիքները այնչափ բարձրացած են, որ երկինքի և բովանդակ ծովու վրայ առագաստ մ'իսկ չեմ նշմարեր :

Մօնթ. — Ինձ այնպէս կը թուի, թէ քամին սաստիկ գոռաց յամաքի վրայ, և երբէք հողմունք այսչափ սաստկութեամբ չգլորդեցին մեր պարիսպները : Երբ ծովու վրայ այսօրինակ կատաղութեամբ գործեց, ո՞ր նաւուն կաղնեայ ողնափայտերը պիտի կարենան իրենց ագոյցը պինդ պահել, երբ լեռնակուտակ ալիքները աւնոնց վրայ խուժեն : — Ի՞նչ պիտի լսենք ասոր վրայ :

Բ. Պրն. — Թշնամի նաւատորմին ցրուումը : Քանզի փրփրալից ծովեղրին վրայ կայնած պիտի տեսնէք որ սպառնալից ալիքները կարծես ամպերը կը կոծեն, հողմուռոյց կոհակնե-

ըն՝ բարձր և հրէշային ծովէն մղուած՝ կարծես ջուր կը ցայտեն բոցակէշ արջին(*) վրայ, և կը մարեն անշարժ բւեռին արբանեակները. երբէք այսչափ յուզում տեսած չեմ զայրացեալ ծովու վրայ:

Մօնք. — Եթէ թշնամի նաւատորմը ծովածոցի մը մէջ ապաստանած չէ, ընկղմած պէտք է լինի. անկարելի է որ դիմանայ բաց ծովու վրայ:

Կը մտնէ երրորդ պարտն մը:

Գ. Պրն. — Նոր լուշ մը ձեզի, տեարք իմ: Մեր պատերազմը վերջացած է: Կատաղի փոթորիկը այնպէս հարուածեց թշնամին, որ իւր բոլոր խորհուրդներն ՚ի դերև ելան: Վենետիկէ եկող նաւ մը տեսաւ սոյն նաւատորմի մեծ մասին նաւաբեկութիւնն և կորուստը:

Մօնք. — Ինչպէ՞ս. իրա՞ւ է այս արդեօք:

Գ. Պրն. — Նաւը հոս խարիսխ նետած է. — Վերօնացի նաւ մը:— Միքայէլ Քասիօ, քաջարի Օթէլլօյի տեղակալը արդէն ցամաք ելաւ. Մաւրը ինքն ևս ծովու վրայ է, և լիազօր իշխանութեամբ հոս Կիպրոս կը հասնի:

Մօնք. — Շատ ուրախ եմ. արժանաւոր կառավարիչ մ'է:

Գ. Պրն. — Բայց միւսնոյն Քասիօն — թէև մեծ ուրախութիւն կը յայտնէ թշնամի նաւա-

(*) Համաստեղութիւն Բեւեռային աստղին քով:

տորմին կորստեան վրայ, — շատ տխուր կ'երևի սակայն, և կ'աղօթէ Մաւրի անվտանգ ժամանելուն համար. ինչու որ սաստիկ և կատաղի փոթորիկով իրարմէ բաժնուած էին:

Մօնք. — Տա՛ր երկինք, որ այդպէս լինի. քանզի ծառայած եմ իրեն, և այդ մարդը իբրև կատարեալ զինուոր գիտէ հրամայել: Եկէ՛ք ծովեզերն երթանք հասնող նաւը տեսնելու, և միանգամայն քաջն Օթէլլօյի վրայ ակնարկ մը ձգելու համար, մինչև որ ծովը և երկնային կապոյտը աննշմարելի լինին մեր աչաց:

Գ. Պրն. — Եկէ՛ք այդպէս ընենք. քանզի ամէն վայրկեան կրնան ուրիշներ ևս հասնիլ:

Կը մտնէ Քասիօ:

Քաս. (Մօնքաւնային) — Շնորհակալութիւն՝ այս պատերազմիկ կղզւոյն քաջարի զինուորին, որ այսչափ կը գնահատէ Մաւրը: Ո՛հ, երկինք պաշտպանեն զինքը տարերաց դէմ, քանզի շատ վտանգաւոր էր ծովը, երբ իրարմէ բաժնուեցանք:

Մօնք. — Հաստատո՞ւն է նաւը:

Քաս. — Այո՛, ամուր շինուած է, և նաւու զիզը շատ կարող և փորձառու մէկն է. հետեւաբար յոյս կտրած չեմ, անոր հակառակ՝ բոլորովին յուսալից եմ:

(Զայնեռ ներսէն) Առադա՛ստ մը, առադա՛ստ մը, առադա՛ստ մը:

Կը մտնէ ուրիշ պարտն մը:

Քաս. — Ի՞նչ աղմուկ է այս :

Բ. Պրն. — Քաղաքը պարպուած է. ժողովրդեան բաղմուխիւն մը ծովուն եկեր. քը կանդնած՝ կը պռայ, — Առադաստ մը :

Քաս. — Իմ յոյսերս ինձ երեւակայել կը տան, թէ կառավարիչն է :

(Թնդանօրի ճայներ:))

Բ. Պրն. — Ի պատիւ անոր թնդանօթ կ'արձակեն. ո՛հ, մեր բարեկամներն են դոնէ :

Քաս. — Կը խնդրեմ, պարոն, դնացէ՛ք, և մեղի լուր բերէք ճշգիւ, թէ ո՞վ է եկողը :

Բ. Պրն. — Պիտի երթամ :

Մօնք. — Բայց ըսէ՛ք, սիրելի տեղակալ, ձեր զօրավարը ամուսնացած է :

Քաս. — Այո՛, շատ բարեբաղդօրէն : Այնպիսի աղջկան մը սիրտը շահեցաւ, որ վեր է ամէն նկարագրութենէ, և համբաւէ — հրաշակերտ մը, զոր ամենաքաջ վրձինը չպիտի կարենար նկարել, և որ կը կրէ իւր մէջ արարչութեան ամէն կատարելութիւնները :

Ի՞նչպէս, ո՞վ էր որ ցամաք ելաւ :

Կը մտնէ նորէն երկրորդ պարոնը :

Բ. Պրն. — Եակօ անունով մէկը, զօրավարին դրօշակիրը :

Քաս. — Շատ յաջող և նպաստաւոր ծովանց մ'ունեցաւ :

Նոյն իսկ փոթորիկները, բարձրաբերձ ակիբները, սաստկաշունչ քամիները, խռոչաւոր

ժայռերը, աւազակոյտերը, — դաւաճաններ ջուրերու ներքև դարանած անջնաս նաւը արգիլելու համար, — կարծես անոր գեղեցկութենէ զգածուած՝ կը մոռնան իրենց կործանիչ բնազդը, թողլով որ ապահովապէս անցնի հրեշտակային Տէղտէմօնան :

Մօնք. — Ո՞վ է այդ կինը :

Քաս. — Այն՝ որուն վրայ խօսեցայ, մեր մեծ զօրավարին զօրավարը, քաջասիրտ Եակօյին խնամոցը յանձնուած՝ որ մեր սպասածէն եօթն օր յառաջ հոս ցամաք ելաւ : — Մեծդ Արամա՛ղդ, պահպանէ՛ Օթէլլօն, և քու հզօր շունչովդ ուռեցո՛ւր անոր առագաստը, որպէս զի իւր բարձրակերտ նաւովը ուրախութիւն բերէ այս նաւահանգստին մէջ, և սիրով արփուէ՛ դառնայ Տէղտէմօնայի բաղկաց մէջ. նոր կորով շնչէ՛ մեր մարած հոգիներուն, և բոլոր կիպրոսը խաղաղցո՛ւր : — Ա՛հ, նայեցէ՛ք :

Կը մտնեն Տէղտէմօնա, Էմիլիա, Եակօ, Բօտրիկօ, և Կետեւորդք :

Նաւին գանձը ցամաք ելա՛ւ : — Ո՞վ կիպրոսի բնակի՛չք, խոնարհեցուցէ՛ք ձեր ծունկերը անոր առջև : — Ողջոյն քեզ, Տիկի՛ն. թող երկնային շնորհքը քու վրադ հանգչի, և պատսպարէ քու շուրջդ :

Տէգ. — Շնորհակալութիւն, քաջդ Քասիօ : — Ի՞նչ լուր կրնաս տալ իմ տիրոջս վրայ :

Քաս. — Նա տակաւին չհասաւ. միայն դի-

տեմ՝ թէ քաջառողջ է, և թէ պահիկէ մը հոս պիտի լինի :

Տեգ. — Ո՛հ, կը վախնամ սակայն : — Ի՞նչ պէս եղաւ որ զիրար կորսնցուցինք :

Քաս. — Ծովու և երկնքի դէմ առ դէմ կատարի պայքարը անշատեց զմեզ իրարմէ . . . : Բայց լսեցէ՛ք, առագաստ մը :

(Ներսէնն ձայնէր) Առագաստ մը, առագաստ մը :

(Թերակօրի ձայնէր :)

Բ. Պրն. — Միջնաբերդը կ'ողջունեն . այս ևս բարեկամ նաւ մ'է :

Քաս. — Գնա՛ մեզ լուր բերելու :

(Կը մեկնի պարունը :)

(Եսկօյի) Սիրելի գրօշակիր, բարի եկար :

(Էմիլիայի) Բարի եկար, տիկին :

Թող քու համբերութիւնդ չվիրաւորուի, սիրելի Եսկօ, իմ ազատ ձեռքու համար . իմ դաստիարակութիւնս է, որ ինձ կը տայ այս յանդուգն քաղաքավարութիւնը :

(Հարստերով զԷմիլիան :)

Եսկօ — Պարոն, եթէ նա այնչափ շռայլ լինէր ձեզի համար իւր շրթունքներով, որչափ շռայլ է ինձ համար իւր լեզուով, շուտով պիտի ձանձրանայիք :

Տեգ. — Աւա՛ղ, նա չխօսիր :

Եսկօ — Ստուգիւ չափազանց կը խօսի. զայդ կը նշմարեմ երբ քնանալու փափաք կ'ըզամ : Կը խոստովանիմ որ ձեր առջևը, տիկին, իւր

լեզուն քիչ մը իւր սրտին մէջ կը պահէ և մտքով կը մրմռայ :

Էմիլիա — Այդպէս ըսելու նուազ պատճառունիս :

Եսկօ — Օ՛ն, օ՛ն, դուք կանայքդ ձեր տունէն դուրս պատկերներ էք, բոժոժներ՝ ձեր զարդասենեակին մէջ, վայրի կատուններ՝ ձեր խոհանոցի մէջ, սուրբեր՝ երբ ուրիշները կը նախատէք, սատանաներ՝ երբ ձեզի կը թշնամանեն, ժամավաճառ՝ ձեր տան տնտեսութեան մէջ, և տանտիկին՝ ձեր անկողնոյ մէջ :

Տեգ. — Ա՛հ, ամօթ քեզի, զրպարտի՛չ :

Եսկօ — Հեթանոս լինիմ եթէ այս այսպէս չէ : Առտու կ'եղնէք խաղալու, և անկողին կը մտնէք աշխատելու համար :

Էմիլիա — Գովեստս գրելու պաշտօնը քեզ չպիտի տամ :

Եսկօ — Ոչ, մի՛ թողուր որ գրեմ :

Տեգ. — Ի՞նչ պիտի գրէիր իմ մասին, եթէ զիս գովել ուզէիր :

Եսկօ — Ո՛հ, ազնիւ տիկին, այդ պաշտօնը ինձ մի՛ յանձնէք, ես պարզապէս քննադատ մ'եմ :

Տեգ. — Տեսնենք, փորձ մ'ըրէ : — Նաւա հանգիստը մէկը զրկեցի՞ք :

Եսկօ — Այո՛, տիկին :

Տեգ. — Զուարթ չեմ. բայց տարբեր կ'երևիմ, քան ինչ որ եմ : — Տեսնենք ինչպէ՞ս պիտի ընէիր իմ գովեստս :

Եսկօ — Ատոր վրայ կը խորհիմ. բայց ստուգիւ իմ գիւտս խելապատակիս փակած է ինչպէս ոստղը գանգուրին, անիկա կը խլէ ուղեղը և ամէն ինչ: Բայց իմ Մուսաս երկնելու վրայ է, և աւասիկ ինչ յղացաւ նա:

«Եթէ կինը գեղեցիկ է, և ուշիմ, — գեղեցկութիւն և ուշիմութիւն, մին վայելելու, և միւսը՝ գործածելու համար»:

Տէգ. — Գեղեցիկ գովե՛ստ: Ի՞նչպէս, եթէ նա սև է և ուշիմ:

Եսկօ — «Եթէ լինի նա սև, և միանգամայն ուշիմ, պիտի գտնէ սպիտակ մէկը՝ որ իւր սևութեան յարմարի»:

Տէգ. — Յոռեգոյնին յոռեգոյնը:

Էմիլիա — Ի՞նչպէս, եթէ գեղեցիկ և տըխմար լինէր:

Եսկօ — «Այն՝ որ գեղեցիկ է, երբէք տըխմար չէ. քանզի իւր տխմարութիւնն իսկ պիտի նպաստէ ժառանգորդ մ'ունենալու»:

Տէգ. — Ասոնք հին անհեթեթ ասացուածներ են գինետուներու մէջ ապուշները ծիծաղեցնելու սահմանուած: Ի՞նչ խեղճ գովեստ ունիս արդեօք անոր համար՝ որ տգեղ և տըխմար է:

Եսկօ — Չկայ տգեղ և այնքան տխմար մէկը, որ գեղեցկին և ուշիմին չափ այլանդակութիւններ չգործէ:

Տէգ. — Ո՛հ, ի՞նչ ծանր տգիտութիւն. —

գուն յոռեգոյնը կը գովաբանես: Բայց ի՞նչ գովեստ պիտի տաս իրապէս արժանաւոր կնոջ մը — այնպիսի մէկու մը՝ որ իւր արժանեաց չնորհիւ՝ չարակամութեան մեծարանաց իսկ իրաւամբ կ'արժանանայ:

Եսկօ — «Այն կինն՝ որ միշտ գեղեցիկ էր, և երբէք հպարտ»:

«Որ ազատ էր խօսելու, և երբէք չէր պօռար»:

«Որուն ոսկի չէր պակսէր, բայց չէր երբէք շռայլ»:

«Իւր փափաքներն ինքն իւր անձին կը զլանար, և կ'ըսէր այժմ կրնայի»:

«Այն՝ որ բարձրացած էր, և կրնար վրէժ առնուլ»:

«Դադրեցուց թշնամանքը, և զըսպեց իւր տհաճութիւնը»:

«Այն՝ որ երբէք ապուշ չէր Սօլօն ձուկին պոչը»:

«Մօրիւ ձուկին գլխոյն հետ փոխելու»:

«Այն՝ որ կրնար խորհիլ, և երբէք իւր միտքը չյայտնեց»:

«Այն՝ որ տեսաւ իրեն հետևող տարփածուններ, և ետին չնայեցաւ»:

«Այդ կինն անզուգական է, եթէ երբէք այդպիսի մէկն եղած է»:

Տէգ. — Ի՞նչ ընելու համար:

Եսկօ — Յիմարներուն կաթ տալու, և գա-
րեջրի հաշիւներ պահելու համար:

Տեգ.— Ո՛հ, ի՞նչ տկար և ձախող եզրակա-
ցութիւնն: — Բան մի՛ սորվիր անորմէ էմիլիա,
թէ և քու ամուսինդ է: — Ի՞նչ կ'ըսէք դուք,
Քասիօ, չէ՞ որ նա պիղծ և անսանձ խորհրդա-
կան մ'է:

Քաս.— Առանց ձեռակերպութեան կը խօսի,
տիկին. աւելի պիտի սիրէք զինքը իբրև զին-
ուոր, քան իբրև գրական մարդ:

(Տեգսեօսու մի քանի քայլ յառաջ կ'երթայ. Քասիօ
իւր ձեռքն ակնոք կը տայ, եւ կը հեռակայ ակնոք հետ:)

Եսկօ — (Առանձին) Անոր ձեռքը կը բռնէ.
այո՛, լաւ, անոր փսփսա՛: — Այսչափ փոքրիկ
սարդի ոտտայնով այսքան մեծ ճանճ մը — Քաս-
սիօն — պիտի բռնեմ: — Ժպտէ՛ անոր երեսին,
այո՛ — քու քծնութեանդ մէջ զքեզ պիտի կաշ-
կանդեմ: — Ճիշդ կը խօսիս, ստուգիւ այդպէս
է. եթէ այդ կեղծ ձեւերովդ զրկուիս քու պաշ-
տօնէդ, լաւ ևս պիտի լինէր եթէ չհամբուրէիր
քու երեք մատերդ այնչափ յաճախ, ինչպէս
այժմ նորէն կը կրկնես սիրուն պարոն մ'երև-
նալու համար: Շատ լաւ. գեղեցիկ համբոյր.
սքանչելի մեծարանք. այդպէս է արդարև:
նորէն մատերդ շրթունքներովդ կը տանիս:

(Փողերու ձայներ) — Մաւրն է՛, կը ճանչ-
նամ իւր փողին ձայնը:

Քաս.— Արդարև այնպէս է:

Տեգ.— Օ՛հ, երթանք, և զինքն ընդու-
նինք:

Քաս.— Աւասիկ կը գա՛յ:

Կը մտնեն Օթէլլօ եւ հետեւորդք:

Օրէջ.— Ո՛վ իմ գեղեցիկ մարտուհիս:

Տեգ.— Իմ սիրելի Օթէլլօս:

Օրէջ.— Ինձի համար նոյնչափ զարմանք,
որչափ հաճոյք մ'է ինձմէ յառաջ հոս տեսնել
զձեզ: Ո՛վ իմ հոգւոյս հրճուանքը: Եթէ ամէն
փոթորկէ յետոյ այսպիսի հանդարտութիւն պի-
տի տիրէ, թող հովերը փչեն մահը արթնցու-
նելու չա՛փ: Թող տագնապալից նաւակը ծովա-
յին բլուրներու կատարը բարձրանայ Ողիմպոս
սի բարձրութեամբ, և նորէն սուղի դժոխքի
չափ խորանդունդը: — Եթէ հիմա մեռնիլ հարկ
լինէր, գերագոյն երջանկութիւն պիտի հա-
մարէի. քանզի հոգւոյս ուրախութիւնը այն-
չափ բացարձակապէս կատարեալ է, որ կը վախ-
նամ թէ ասոր նմանը չպիտի ունենամ իմ ան-
ծանօթ ապագայ կենացս մէջ:

Տեգ.— Երկինք օգնեն մեզ, և որչափ տա-
րիքով աճինք, այնչափ ևս մեր սէրն և եր-
ջանկութիւնը բազմապատկի:

Օրէջ.— Ամէն ըսէք, ո՛վ դուք երկնային
զօրութիւնք: — Ձեմ կարող բաւական խօսիլ
այս երանութեան վրայ, շունչս կը կտրի, չա-
փազանց ուրախութիւն մ'է այս. (հաւթուրեղով)
այս համբոյրը, և այս ևս մեր սիրտերուն միակ
գժտութիւնը լինի:

Եակօ — (Առանձին) Ո՛հ, այժմ կատարե-
լապէս ներդաշնակ էք: Բայց կ'երգնում իբ-
րև պարկեշտ մարդ, թէ այդ ներդաշնակու-
թիւնը կազմող թելերը պիտի խզեմ:

Օրէշ. — Եկէ՛ք դղեակն երթանք: — Իմացաք,
բարեկամներս, պատերազմը վերջացաւ, մեր
լծնամիները ծովակուր եղան:

(Կիպրացիներուն ուղղելով իւր խօսքը) Ի՞նչ
պէս են այս կզզւոյն մեր հին ծանօթները:

(Տեգսեմօնային) Ո՛վ իմ անուշիկս, մեծ հիւ-
րընկալութիւն պիտի գտնես Կիպրոսի մէջ, ա-
նոնց քով մեծ համակրութիւն վայելեցի ես:
Սիրելիք իմ, խառն 'ի խուռն կը խօսիմ, և իմ
ուրախութեանս մէջ կը զառանցեմ: — Կ'աղաչեմ,
բարի Եակօ, ծովեզերը գնա՛, և իմ տունտուկ-
ներս դուրս հանել տո՛ւր: Նաւապետը միջնա-
բերդը հրաւիրէ՛, նա բարի և յարգանաց ար-
ժանի մէկն է: — Եկո՛ւր, Տեղտեմօնա, կրկին
անգամ Կիպրոսի մէջ քեզի բարի դալուստ կը
մաղթեմ:

(Կը մեկնին Օրէշօ, Տեգսեմօնա եւ հետևորդք:)

Եակօ — (Քօսրիկօյին) Եկո՛ւր զիս գտի՛ր ան-
միջապէս նաւահանգստին մէջ: Հոս քովս ե-
կո՛ւր: Եթէ քաջ մէկն ես, մտիկ ըրէ՛ ինձի.
Կ'ըսեն թէ վեհերոտ մարդիկ՝ երբ կը սիրահա-
րին, գերբնական ազնուութիւն մը կ'ստանան:
Տեղակալը պիտի պահակերէ այս գիշեր պա-
հակատան մէջ: Նախ, այս ըսեմ, որ Տեղտե-
մօնան սաստիկ սիրահարուած է անոր:

Քօս. — Անո՞ր, այդ կարելի չէ:

Եակօ — (Իւր ցուցաւնսք բերնին վրայ դը-
նելով) Մտող այսպէս դի՛ր, — և թող հոգիդ
իմանայ: Գիտես թէ նա առաջին անգամ ի՞նչ
բուռն սիրով զարնուեցաւ Մաւրին, պարզա-
պէս խաբուելով անոր մնապարծութենէ, և սը-
տայօդ առասպելներէն, զոր անոր կը պատ-
մէր: Միթէ տակաւին պիտի սիրէ՞ զայն իւր
չաղակրատութեանց համար: Թող քու խոհա-
կան սիրող չհաւատայ ընաւ: Պէտք է որ իւր
աչքերը յագեցնան. և ի՞նչ հաճութիւն պիտի
զգայ սատանային երեսը նայելով: Երբ արիւ-
նը վայելքներու հետեանօք կը տկարանայ,
նոյնը վերստին արծարծելու, և յազուրդին նոր
ճաշակ տալու համար, պէտք է հրապուրիչ սի-
րուն դէմք մ'ունենալ, տարիքի, ձևերու և
գեղեցկութեան յարմարութիւն մի, և այս ա-
մէնը կը պակսի Մաւրին: Արդ այս կարևոր հա-
ճոյքներէ ինքզինքը զրկուած տեսնելով՝ իւր
փափուկ զգացումներուն մէջ խաբուած լինելը
պիտի հասկնայ. սիրտը պիտի ելնէ, և մի միայն
զըզուանք և սոսկում պիտի զգայ Մաւրի համար:
Բնութիւնն իսկ պիտի զգացնէ զայս իրեն, և
պիտի պարտաւորէ զինքը երկրորդ ընտրութիւն
մ'ընելու: Հիմա, պարօն, ընդունինք թէ այս
այսպէս է, (և այս բնական և պարզ հետևու-
թիւնն է,) կը հարցնեմ թէ Բասիօյէն զատ՝
կա՞յ մէկը՝ որ այս բաղդին աւելի յարմարու-
թիւն ունենայ: Անպիտանին մէկը, որուն խիղճը

կը թեւադրէ իրեն միայն մարդավար և վայելուչ ձևեր առնուլ, լաւ ևս գոհացնելու համար իւր ծածուկ փափաքները և միտումները: Այո՛, չկայ ուրիշ մէկը. և ոչ մէկը: Խորամանկ և ճարպիկ մէկը, առիթներէ օգտուող, որ ինքզինքն արտաքուստ ամէն բարի յատկութիւններով օժտեալ կը ձևացնէ, առանց զանոնք ունենալու: Խաբբայ սատանայ մը: Ասկէ զաւանակտանը գեղեցիկ և նորատի է, և ունի այն ամէն առաւելութիւնները, որուն ետեւէն կը վազեն յիմարսութիւնը և անփորձ գլուխները: Կատարեալ ժանտախտ մ'է այդ թշուառականը, և կինը որսաց զինքը արդէն:

Բօժ. — Անոր նկատմամբ այդպէս չեմ կրնար խորհիլ. Տէղտէմօնա ամենաօրհնեալ հանդամանքներով օժտեալ մէկն է:

Եակօ — Օրհնեալ, պարապ խօսք: Գինին զոր նա կը խմէ, խաղողէ շինուած է. եթէ նա օրհնեալ եղած լինէր՝ Մաւրը երբէք չպիտի սիրէր: Օրհնեալ Ռուտինի: Չտեսա՞ր ինչպէս Քասիօյի ձեռքը իւր մատերովը կը շօշափէր, չնչմարեցի՞ր:

Բօժ. — Այո՛, նշմարեցի. բայց այդ պարզ քաղաքավարութիւն մ'էր:

Եակօ — Պարզ անառակութիւն, կ'երգնում այս ձեռքիս վրայ: Այդ թաքուն նախաբանն է ցանկութեան, և անպարկեշտ խորհուրդներու պատմութեան: Իրենց չրթունքները այնչափ իրարու մօտ էին, որ շունչերնին

զիրար կը համբուրէին: Ամօթալի խորհուրդներ, Բօսրիկօ՛, Երբ այս փոխադարձ նախաքայլերն այսպէս ճամբան կը հարթեն, գործողութիւնը՝ անվրէպ լուծման մը յանգեցով, մօտէն կը հետևի: Ա՛հ, պարոն, գործին ուղղութիւնը ինծի թող տո՛ւր. Վենետիկէն ես բերիքզի: Պահակերէ՛ այս դիշեր. պէտք եղած հրահանգը ես պիտի տամ քեզ: Քասիօն չճանչնար քեզի... — Ես քեզմէ հեռու չպիտի լինիմ...: Առիթ մը գտի՛ր Քասիօն զայրացնելու համար շատ բարձրաձայն խօսելով, կամ կանոնազանց գտնուելով, կամ որ և է ուրիշ պատճառ մը, զոր ժամանակը աւելի նպաստաւոր կերպիւ պիտի հայթայթէ քեզի:

Բօժ. — Լաւ:

Եակօ — Պարոն, նա դիւրագրգիռ և խիստ բարկացոտ է, և գուցէ իւր գաւազանովը զարնէ քեզի: Պատճառ տո՛ւր, և գրգռէ՛ զինքը, որ այդպէս ընէ, և ես այդ դէպքէն օգտուելով՝ Կիպրոսի մէջ ապստամբութիւն մ'առաջ պիտի բերեմ, զոր լաւ մը հանգարտեւելու համար պէտք պիտի լինի Քասիօն պաշտօնանկ ընել: Այսպէս քու փափաքիդ աւելի շուտով պիտի հասնիս իմ ՚ի գործ գրած միջոցներով, երբ օգտակարապէս վերցուի արգելքը. ապա թէ ոչ մեր յաջողելուն յոյս չկայ:

Բօժ. — Պիտի ընեմ այդպէս, եթէ կարենամ առիթ մը ձեռք բերել:

Եակօ — Կը հաւատեմ քեզի: Պահ մը ետքը

եկո՛ւր գտի՛ր զիս միջնաբերդին մէջ. պէտք է որ երթամ այժմ իւր ծրարները ցամաք հանելու համար: Յտեսութիւն:

Բօժ. — Երթաս բարով:

(Կը մեկնի:)

Եակօ — Թէ Գասիօն կը սիրէ Տէգտէմօնան, հաստատապէս կը հաւատամ. թէ Տէգտէմօնան կը սիրէ զինքը, այդ ևս տրամաբանական և շատ հաւանական է: Մաւրը, — թէ և զինքը չեմ կրնար տանիլ, — հաւատարիմ, սիրալիր և ազնիւ բնութեան տէր մէկն է. և կրնամ հաւատալ, թէ Տէգտէմօնայի համար շատ սիրելի ամուսին մը պիտի լինի: Արդ ես ևս կը սիրեմ Տէգտէմօնան, ոչ բացարձակ սիրոյ ցանկութեամբ, (թէ և այսպիսի ծանր մեղքի մը համար կրնայի յանցապարտ լինել.) այլ մասամբ իմ վրէժխնդրութիւնս պարարելու համար, քանզի կը կասկածիմ, որ տուփոտ Մաւրը իմ անկողնոյս մէջ սպրդած լինի: Այս խորհուրդը հանքային թոյնի մը պէս կը մաշէ զիս ներքնապէս. և ոչինչ կրնայ կամ պիտի կրնայ իմ հոգիս գոհացնել, մինչև որ անոր հետ հաւասար լինիմ, կնիկ կնիկի փոխարէն. կամ եթէ չյաջողիմ այսպէս, գոնէ Մաւրը այնպիսի բուռն նախանձով մը պիտի գրգռեմ, զոր բանականութիւնը չկարենայ բուժել: Ասիկա ընելու համար, — եթէ այս Վենետիկի անպիտան շունը, զոր կը գործածեմ իւր շուտ որսալուն համար, հաստատուն մնայ, մեր Միքայէլ Գասիօյին կո-

կորդէն պիտի բռնեմ. զինքն անխնայ պիտի մրտեմ Մաւրին քով, — քանզի կը վախնամ Գասիօյէն մինչև իսկ գլխանոցիս համար, — և այնպէս պիտի ընեմ, որ Մաւրը շնորհակալ լինի ինձմէ, սիրէ և վարձատրէ զիս, զինքը վարպետութեամբ աւանակ մ'ընելուս, և իւր հոգւոյ հանդարտութիւնը՝ կատղեցնելու աստիճան՝ վրդոված լինելուս համար: (Ճակատք զարնեղով) Հոս է, թէ և տակաւին շփոթ: Խորամանկութիւնը գործի մէջ միայն ինքզինքը կը ցուցնէ:

(Կը մեկնի:)

Տ Ե Ս Ս Ր Ա Ն Բ.

Փողոց մը:

Կը մտնէ մուսետիկ մի յայտարարութիւն մը ձեռքը: Փողովուրդը իրեն կը հետեւի:

Մռն. — Օթէլլօ, մեր ազնիւ և քաջ զօրավարին հաճութիւնն է յայտարարել, թէ թըշնամի նաւատորմին կործանման լուրը այժմ հասնելով՝ ամէն մարդ տօնէ զայն իբրև յալթութիւն. ոմանք պարելով, ուրիշներ ուրնախութեան կրակներ վառելով, ամէն ոք իւր ճաշակին համեմատ՝ զուարճութեան և զբօսանաց ցոյցեր ընելով. քանզի այս շահեկան լուրերէ զատ իւր հարսանեաց հանդէսը կը տօնենք այսօր:

Աւասիկ ինչ որ նա յայտարարել հաճեցաւ:

Գղեակին բոլոր սենեակները բաց են, և ամէն ազատութիւն տրուած է հոն խընճոյքներ կազմելու՝ ժամը հինգէն սկսեալ, մինչև որ զանգակը տասնևմէկ զարնէ: Թող Աստուած օրհնէ Կիպրոս կղզին, և մեր աղնիւ զօրավարն Օթէլլօ:

(Կը սեկնի:)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ.

Սրահ մը դղեակին մէջ:

Կը մտնեն Օթէլլօ, Տէգտէմօնա, Քասիօ եւ հետևորդք:

Օրէջ. — Սիրելի Միքայէլ, պահակերու թեան վրայ հսկեցէ՛ք այս գիշեր. գիտնանք մեր զուարճութեան մէջ պատուաբերաբար չափաւոր լինել:

Քաս. — Եակօն պէտք եղած հրահանգն ընդունած է, սակայն և այնպէս ես անձամբ ամէն ինչ աչքէ պիտի անցունեմ:

Օրէջ. — Եակօն շատ պարկեշտ մէկն է:— Գիշեր բարի, Միքայէլ, վաղն առտու կանուխ ձեզի հետ պիտի խօսիմ:

(Տէգտէմօնային) Եկո՛ւր սիրեցեալդ իմ, առուծախը լննցած լինելով՝ ժամ է պտուղը վայելելու. այդ երջանկութիւնն իմ և ձեր մէջ տակաւին տեղի պիտի ունենայ:

(Քասիօյին) Գիշեր բարի:

(Կը մեկնին Օրէջօ, Տէգտէմօնա եւ հետևորդք:)

Կը մտնէ Եակօ:

Քաս. — Բարի եկար, Եակօ. պէտք ենք երթալ պահակերել:

Եակօ — Ոչ այս ժամուս, տեղակալ. տակաւին ժամը տասը չէ: Մեր զօրավարը կանուխէն ճամբեց ձեզի իւր Տէգտէմօնայի սիրոյն համար, սակայն չպիտի պախարակենք զինքը, քանզի տակաւին անոր հետ զուարթ գիշեր մը չանցուց. Արամազդայ արժանի կտոր մ'է այն:

Քաս. — Ամենաաղնիւ տիկին մի:

Եակօ — Կ'երաշխաւորեմ, որ նա զուարթառատ մէկն է:

Քաս. — Ստուգիւ շատ դալարագեղ և փափուկ արարած մ'է:

Եակօ — Եւ ի՛նչ աչքեր, կարծես հրապոյր կ'արտափայլեն:

Քաս. — Յանկեցուցիչ աչքեր, սակայն և այնպէս շատ համեստ:

Եակօ — Եւ երբ կը խօսի, չէ՞ որ սիրահրաւէր զանգակ մ'է:

Քաս. — Արդարեւ նոյն ինքն կատարելութիւնն է:

Եակօ — Ինչ որ է, երջանիկ անկողին մաղթենք իրենց: Եկէ՛ք, տեղակալ, շիշ մը գինի ունիմ, և հոս դուրսը կը գտնուի խումբ մը Կիպրոսցի զուարթաբարոյ երիտասարդներ, որ պատրաստ են սեռակ Օթէլլօյի կենացը բաժակ պարպելու:

Քաս. — Ոչ այս գիշեր, սիրելի Եակօ. խումբ մեկու համար շատ ակար և ողորմելի ուզեղ

մ'աւնիմ: կը փափաքէի արդարև որ մարդա-
վարութիւնը զուարճանալու համար ուրիշ մի-
շոց մը հայթայթէր:

Եսկօ — Ո՛հ, անոնք մեր բարեկամներն են.
Եկէ՛ք, բաժակ մը միայն. ես ձեզի համար պի-
տի խմեմ:

Քաս. — Այո գիշեր գաւաթ մը միայն խը-
մեցի, և այն ևս բաւական ջրով խառնուած,
և տեսէ՛ք ի՞նչ փոփոխութիւն ըրաւ իմ վրայ:
Դժբաղդ եմ այս թերութեան համար, և այլ
ևս չեմ համարձակիր փորձել իմ տկարութիւնս:

Եսկօ — Ի՞նչ կ'ըսես, ո՛վ մարդ, ուրախու-
թեան գիշեր մ'է այս. մեր զուարթ կիպրացի-
ներն են, որ կը փափաքին զայն:

Քաս. — Ո՛ւր են անոնք:

Եսկօ — Հոս դուրսն են. կ'աղաչեմ ներս
հրամցուցէ՛ք զանոնք:

Քաս. — Այդպէս պիտի ընեմ. բայց այս
հաճելի չէ ինձ:

(Կը սեկնի Քասիօ:)

Եսկօ — (Առանձին) Եթէ կարենամ գաւաթ
մը միայն խմցունել իրեն, իւր արդէն այս գի-
շերուան խմածովը՝ կռուասէր և զայրացկոտ
պիտի դառնայ իմ նորատի տիրուհոյս շնիկին
պէս: Արդ իմ հիւանդ յիմար Ռօտրիկօն, զոր
սէրը գրեթէ բոլորովին այլայլած է, այս գի-
շեր Տէզաէմօնայի կենացը բաժակներ պարպեց.
և ինքն ևս պիտի պահակերէ: Յետոյ երեք
կիպրացի մեծամիտ երիտասարդներ — իրենց

պատուոյն համար յոյժ դիւրագրգիռ, — այս պա-
տերազմասէր կղզւոյն բուն իսկ տարերքը — ա-
սոնց գլուխները առատ գինիով տաքցուցի, և
անոնք ևս պիտի պահակերեն: Աստի պիտի
թողում, որ Քասիօն այս գինովներուն խմբին
մէջ կռիւի բռնուի, և այս կերպիւ խռովութիւն
ճագի կղզւոյն մէջ: — Բայց աւասիկ կը գան,
եթէ արդինքը հաստատէ իմ երազս, նաւակս
ազատօրէն պիտի սահի հողմով և հոսանքով:

Նորէն կը մտնեն Քասիօ, Մօնթանօ, եւ պարոնները:

Քաս. — Երկինք վկայ, որ արդէն չափա-
զանց խմցուցին ինձի:

Մօնթ. — Պատուոյս վրայ, շատ քիչ բան. և
ոչ իսկ բաժակ մը, յանուն զինուորի՛:

Եսկօ — Գինի՛, գինի՛, հօ՛:

(Կ'երգէ)

Թող որ բաժակըս զարնեմ,

Թող որ բաժակըս պարպեմ.

Զինուորը մարդ մ'է.

Կեանքը վայրկեան մ'է.

Թող զինուորը խմէ:

Տղաքներ, քիչ մը գինի՛:

(Գինի կը բերեն:)

Քաս. — Յանուն երկնից, ահա գեղեցիկ
երգ մը:

Եսկօ — Անգղիա սորվեցայ զայն, ուր կոն-
ձելու մասին խիստ նշանաւոր են: Չեր դանիա-
ցին, գերմանացին, և ձեր մեծափոր հոլան-

տացին— հօ՛, գինի բերէ՛ք— ոչինչ են անգղիա-
ցիին քով:

Քաս. — Ձեր անգղիացին այսպէս վա՛րժ է
խմելու մասին:

Եակօ — Ա՛հ, երբ դանիացին գինովցած
գետին կ'իյնայ, անգղիացին կը շարունակէ խը-
մելը, և առանց քրտնելու գետինը կը տապալէ
գերմանացին. և երբ հոլանտացին փոխելու կը
հարկադրուի, անգղիացին ուրիշ շիշ մը պար-
պելու կը պատրաստուի:

Քաս. — Մեր զօրավարին կենա՛ցը:

Մօնթ. — Ձեզ կը միանամ, տեղակալ, ձեզի
գահացում պիտի տամ:

Եակօ — Ո՛ր անուշիկ Անգղիա՛:
(Կ'երգէ:)

Ստեփան արքայն ազնիւ իշխան մ'էր,
Անդրավարտիքը տօլար մը կ'արժէր.
Վեց բէնա անգամ շատ սուղ կը գոնէր,
Եւ իւր դերձակը ապուշ կ'անուանէր:

Նա մեծահոշակ թագաւոր մ'էր. տե՛ս,
Գոհիկ դասէ դու գեղացի մ'ես.
Գոտողութիւնն է, որ գերկիւր քանդէ,
Ինչ հին վերարկուդ վրադ փաթթուէ:

Օ՛ն, քիչ մը գինի՛:

Քաս. — Ա՛հ, այս երգը միւսէն աւելի ըն-
տիր է:

Եակօ — Կ'ուզէ՞ք նորէն լսել:

Քաս. — Ոչ, քանզի իւր աստիճանին անար:

ժան կը համարի՞մ այն մարդը՝ որ այս բաները
կ'ընէ: Լա՛ւ. երկինքն ամէն բանէ վեր է. կան
հողիներ, որ պէտք է փրկուին, և կան ուրիշ-
ներ որ պէտք չէ փրկուին:

Եակօ — Ստոյգ է, սիրելի տեղակալ:

Քաս. — Իմ մասիս, — առանց վիրաւորելու
զօրավարը, կամ որ և է բարձր աստիճան մէկը, —
կը յուսամ որ պիտի փրկուիմ:

Եակօ — Ես ևս այսպէս կը յուսամ, տեղա-
կալ:

Քաս. — Ա՛հ, ներեցէ՛ք, ոչ ինձմէ յառաջ
Տեղակալը պէտք է որ դրօշակիրէն յառաջ
փրկուի: Այլ ևս չխօսինք ասոր վրայ. գանք
գործերուն: — Ներէ՛ մեզի մեր մեղքե՛րը: Պա-
րոններ, մեր գործերը նայինք: Մի՛ կարծէք,
պարոններ, որ գինով եմ. տեսէ՛ք այս իմ դրօ-
շակիրս է. — այս՝ իմ աջ ձեռքս է, և այս՝ ձախ
ձեռքս: Գինով չեմ հիմա. կրնամ բաւական ա-
ղէկ ոտքի վրայ կայնիլ, և բաւական լաւ խօսիլ:

Ամէնք — Գերազանցապէս լաւ:

Քաս. — Եթէ շատ լաւ, ուրեմն պէտք չէ
խորհիք, թէ գինով եմ:

(Կը սեկնի:)

Մօնթ. — Եկէք, վարպետներ, պատնէշն եր-
թանք պահակերութիւնը հաստատելու:

Եակօ — Կը տեսնէ՞ք այս տղան, որ հիմա
դուրս ելաւ. — զինուոր մ'է նա կեսարի քով
կանգնելու, և հրամայելու արժանի: Բայց տե-
սէ՛ք իւր մոլութիւնը, որ զուգահաւասար մ'է

իւր առաքինութեան . — մին միւսին հաւասար : Դժբաղդութիւն մ'է իրեն համար, քանզի կը վախնամ որ այն մեծ վստահութիւնը՝ զոր Օթէլ-լօ ունի անոր վրայ, իւր այս մոլութեան բեր- մամբ՝ օր մը տակնուվրայ ընէ կզղին :

Մօնք. — Բայց միթէ յաճախ այսպէս է :

Եակօ — Այս միշտ իւր քնոյ նախաբանն է. նա քսաննչորս ժամ պիտի հսկէր ժամացոյցով, եթէ արբեցութիւնը զինք չորորէր :

Մօնք. — Լաւ պիտի լինէր, եթէ զօրավա- ըին իմաց արուէր : Թերեւս նա չտեսներ, և իւր բարի բնաւորութեամբ Քասիօյի վրայ երեցած առաքինութիւնը միայն կը գնահատէ, և անոր թերութիւնները չնշմարեր . ճիշդ չէ՞ ըսածս :

Կը մտնէ Բօտրիկօ :

Եակօ — Ինչպէ՞ս ես, Բօտրիկօ : (Առանձին) Կ'աղաչեմ, տեղակալին ետեէն վաղէ', գնա' :

(Կը մեկնի Բօտրիկօ :)

Մօնք. — Խիստ ցաւալի է, որ ազնիւ Մաւրը այսպիսի կարեւոր պաշտօն մը վտանգէ, յանձ- նելով զայն՝ այսօրինակ ապիկար մէկու մը . պարկեշտ գործ մը պիտի լինէր՝ Մաւրին իմա- ցնելով զայն :

Եակօ — Ոչ ես, մինչև իսկ եթէ այս գեղե- ցիկ կզղին ինձի պարգևէին : Կը սիրեմ արդա- րև Քասիօն, և կը փափաքէի ընել ինչ որ կա- րելի էր զինքը այս մոլութեանէն բուժելու հա- մար : — Բայց յո՛ւշ, ի՞նչ աղմուկ է այս :

(Ներսիս — Օգնուրի՛ւն, օգնուրի՛ւն :)

Նորէն կը մտնէ Քասիօ ներս քշելով Բօտրիկօն :

Քաս. — Անզգամ անպիտա՞ն :

Մօնք. — Ի՞նչ պատահեցաւ, տեղակալ :

Քաս. — Անպիտան մը, որ կը համարձակի իմ պարտաւորութիւնս ինձ սորվեցնել . պիտի ծեծեմ թշուառականը մինչև որ ոգորահիւս շի- շի մը մէջ խօթեմ զինքը :

Բօտ. — Ծեծել ինձի՞ :

Քաս. — Տակաւին կը խօսի՞ս, անզգա՛մ : (Կը զարնէ Բօտրիկօն :)

Մօնք. — Ոչ, սիրելի տեղակալ :

(Կեցնելով զինքը :)

Կը խնդրեմ, պարոն, վար առէ՛ք ձեռ- քերնիդ :

Քաս. — Թողէ՛ք զիս, պարոն, եթէ ոչ ծնոտդ կը ջախջախեմ :

Մօնք. — Եկէ՛ք, եկէ՛ք, դուք գիտնով էք :

Քաս. — Գինո՞վ :

(Կը կոռիկն :)

Եակօ — (Առանձին Բօտրիկօյին) Գնա՛, կ'ը- սեմ, դուրս ելի՛ր, և ապստամբութիւն պօռա՛ : (Բօտրիկօ դուրս կ'ելնէ :)

Ոչ, սիրելի տեղակալ : — Աւա՛ղ, պարոն- ներ, — օգնութիւն, հօ՛. — Տեղակալ. — պարոն, Մօնթա՛նօ, — պարոն. — օգնութի՛ւն, տեարք իմ : Աւասիկ գեղեցիկ պահակերութիւն արդարե՛ւ : (Զանգակը կը զարնէն :)

Ո՞վ է որ զանգակը կը զարնէ : — Սատանայ,

հօ: Բազաքը ոտք պիտի ելնէ: Յանուն Աստուծոյ, տեղակալ, դադրեցո՛ւր. յաւիտեանս պիտի ամչնաս:

Կը մանեն Օթէլլօ եւ հետեւորդք:

Օրէջ. — Ի՞նչ է, ի՞նչ պատահեցաւ հոս:

Մօնթ. — Արիւնս կը հոսի տակաւին, մահացու կերպիւ վիրաւորուած եմ: — Թո՛ղ մե՛ռնի:

Օրէջ. — Դադրեցուցէ՛ք, ձեր կենացը համար:

Եակօ — Դադրեցուցէ՛ք, դադրեցուցէ՛ք, տեղակալ. — պարոն Մօնթանօ, — պարոններ: — Մոռցա՞ք արդեօք, թէ ո՛ւր կը գտնուիք, և ի՞նչ ձեր պարտաւորութիւնը, կեցի՛ք, դադրեցուցէ՛ք, զօրավարը կը խօսի ձեզի, դադրեցուցէ՛ք, ամօթ ձեզի՛:

Օրէջ. — Ինչո՞ւ համար, ի՞նչ է այս, հօ. ուսկի՞ց ծագեցաւ այս կռիւր: Մի՞թէ մենք մեր թշնամիները դարձանք, և կ'ընենք մեզի՛ ինչ որ երկինք արգիլեց անոնց՝ մեզի ընելու: Յանուն Քրիստօնէութեան վերջ տուէ՛ք այս վայրագ կռիւին: Այն՝ որ առաջին շարժումը կ'ընէ իւր կատաղութիւնը յագեցընելու համար, իւր կեանքն առռչինչ կը գրէ, և կը մեռնի անմիջապէս: — Լռեցուցէ՛ք այդ սոսկալի զանգակը, որ կը զարհուրեցնէ այս կզզին: — Խնդիրն ի՞նչ է, պարոններ:

Պարկեշտ Եակօ, որ քու վշտեղ մեռած կ'երևիս, խօսէ՛, ո՞վ եղաւ սկզբնապատճառն.

կը պարտաւորեմ զքեզ, որ խօսիս քու առ իս ունեցած սիրոյդ համար:

Եակօ — Չգիտեմ. — դեռ հիմա, ճիշդ հիմա, ամէնքը բարեկամներ էին հոս, հարսի և փեսայի պէս իրարու սիրահար՝ իբր անկողին մը անելու պատրաստուած, և յետոյ, ճիշդ հիմա, (կարծես թէ մոլորակ մը մարդիկը յիմարեցուցած էր,) սուրբը քաշած՝ արիւնալից կատաղութեամբ իրարու կուրծք կը զարնէին: Չեմ կրնար ըսել, թէ ի՞նչպէս ծագեցաւ այս անախորժ կռիւր, և լաւ ևս էր որ մեծ և փառաւոր պատերազմի մը մէջ կորսնցունէի այս սըրունքները, որ հոս բերին զիս ականատես լինելու համար:

Օրէջ. — Ի՞նչպէս եղաւ, Միքայէլ, որ այսպէս ինքզինքդ մոռցար:

Բաս. — Կ'աղաչեմ, ներեցէ՛ք ինձի, չեմ կրնար խօսիլ:

Օրէջ. — Իսկ դու, ազնիւ Մօնթանօ, որ միշտ քաղաքավար եղած ես, աշխարհս ճանչցած է քու երիտասարդութեանդ ծանրաբարոյութիւնը, և հանդարտութիւնը, և մեծ է քու անունդ ամենախիստ քննադատներու բերնին մէջ իսկ. ի՞նչպէս եղաւ, որ համբաւդ այսպէս կը մրտտես գիշերային աղմկարարի տիտղոսը առնելով. պատասխանէ՛ ինձի:

Մօնթ. — Բաշդ Օթէլլօ, վտանգաւոր կերպիւ վիրաւորուած եմ. ձեր պաշտօնակալը Եակօ կրնայ ձեզի ամէն ինչ հաղորդել, խնայելով

որ ես խօսիմ, քանի որ խօսիլն ինձ այժմ կը վնասէ:— Որչափ որ դիտեմ, մեղադրելի բան մը չըսի, և չըրի այս գիշեր. եթէ երբէք ինքնասիրութիւնը մոլութիւն մը չհամարուի, կամ ինքնապաշտպանութիւնը մեղք մը՝ երբ բռնութիւնը մեր վրայ կը յարձակի:

Օրհյ. — Ահ, վկայ է երկինք, արիւնս կը սկսի մտքիս վրայ իշխել, և զայրոյթը նսեմացնելով իմ լաւագոյն դատողութիւնս, կ'սպառնայ՝ զիս յառաջ մղել: Եթէ անգամ մը շարժիմ, կամ այս թեւ վեր վերցնեմ, լաւագոյնը ձեր մէջէն զոհ պիտի իյնայ իմ բարկութեանս: Ըսէ՛ք ինծի, ի՞նչպէս այս ամօթալից կռիւը սկսաւ, և ո՞վ եղաւ անոր շարժառիթը. և այն՝ որ յանցաւոր ճանչցուի, թէ և ծննդեամբ երկուորեակ իսկ լինի ինձ՝ պիտի հեռացնեմ ինձմէ:— Ի՞նչպէս, տակաւին սարսափահար պատերազմիկ քաղաքի մը մէջ, ուր ժողովրդի սիրտը լի է զարհուրանքով, առտնին կռիւի բռնուիլ գիշերով, և պահակերութեան դաւիթին մէջ, ահ, հրէշային է այս: Ըսէ՛ք, Եակօ, ո՞վ սկսաւ այս կռիւը:

Մօնր. — Եթէ կողմնակալութեամբ, կամ զինուորակցութեան բերմամբ բուն իսկ ճշմարտութիւնը չխօսիս, զինուոր չես դուն:

Եակօ. — Այդչափ մօտէն ինծի մի՛ դպչիր. լաւ ևս պիտի համարէի լեզուս կտրել, քան թշնամանք ընել Միքայէլ Քասիօյի: Բայց և այնպէս համոզուած եմ, թէ կրնամ ճշմարտու-

թիւնը խօսիլ առանց անոր վնաս մը պատճառելու:— Աւասիկ իրողութիւնը, զօրավար: Երբ Մօնթանօ և ես իրարու հետ կը խօսէինք, մարդ մը վրայ հասաւ լոգնութիւն պօռալով, և անոր կը հեռուէր Քասիօ սուրբ քաջած՝ անոր զարնելու համար: (Մօնթանօն ցուցրեցնով) Այս պարոնը Քասիօյի առջև կը նետուի, և կ'ազաչէ զինքը որ ետ կենայ: Իսկ ես պսոզսող անձին ետեւէն սկսայ վազել, որպէս զի մի՛ գուցէ քաղաքը թունդ ելնէ: (Ինչպէս որ այնպէս եղաւ:) Բայց նա այնչափ թեթեաքայլ էր, որ ինձմէ խուսափեցաւ, և ետ դարձայ այնչափ շուտով որ լսեցի սուրերու շառաչիւնը, և Քասիօն որ բարձրաձայն կը հայհոյէր. բան մը՝ որ կրնամ ըսել մինչև այս գիշեր երբէք ըրած չէր: Երբ ետ դարձայ, (քանզի այս շատ կարճ տևեց.) տեսայ որ իրարու հետ սուրերով կը զարնուէին ճիշդ միւկնոյն ձևով ինչպէս երբ դուք եկաք, զիրենք իրարմէ բաժնեցիք: Ասկէ աւելին չեմ կրնար ձեզ տեղեկացնել:— Սակայն մարդս՝ մարդ է, և ամենէն լաւագոյնն ինքզինքը երբեմն կը մոռնայ:— Քասիօ թէպէտև փոքր ինչ անիրաւ գանուեցաւ այս պարոնին նկատմամբ.— ինչպէս կատրած մարդիկ կը հարուածեն անոնց՝ որ իրենց բարիք ընել կ'ուզեն.— բայց և այնպէս կը հաւատամ արդարև, որ Քասիօ փախչող անձէն այնպիսի անարգանք մը կրեց, որուն ոչ ոք կրնայ համբերել:

Օրհյ. — Դիտեմ, Եակօ, որ պարկեշտու-

Թիւնդ և բարեկամութիւնդ կը ջանան թեթևցընել Քասիօյի յանցանքը:— Քասիօ, քեզի կը սիրեմ, բայց երբէք այլ ևս ինձի պաշտօնատար չպիտի լինիս:—
 Կը մանէ Տէգտէմօնա, և հետևորդք:

Տեսէ՛ք, թէ իմ աղնիւ սիրուհիս արթնցած է: (Քասիօյիև) Քեզի այլոց օրինակ պիտի ընեմ: Տեգ. — Ի՞նչ պատահեցաւ, սիրելիդ իմ: Օրէյ. — Ոչինչ, ամէն ինչ լաւ է այժմ, սէր իմ. անկողին եկ՛ուր:

(Մօկրանօյիև) Պարոն, ձեր վէրքերուն համար ես պիտի լինիմ ձեր վիրաբոյժը:— Թող տանին զինքը:

(Կը սակին Մօկրանօն:)

Եակօ, հողածութեամբ քաղաքին ամէն կողմը պտըտէ՛, և հանդարտեցո՛ւր զանոնք, որ այս շփոթութեանց պատճառաւ վրդոված են:

Եկո՛ւր, Տէգտէմօնա, զինուորական կեանքի պայմանն է անուշ քունէն զրկուիլ իրարանցումի մը պատճառաւ:

(Կը մեկնին ամենք՝ բացի Եակօյէ, և Քասիօյէ:)

Եակօ — Ինչպէ՛ս, վիրաւորուած ես, տեղակալ:

Քաս. — Այո՛, անբուժելի կերպիւ:

Եակօ — Ա՛հ, Աստուած մի՛ արասցէ:

Քաս. — Անու՛նս, անու՛նս, բարի անո՛ւնս, ո՛հ, կորսնցուցի իմ բարի անո՛ւնս: Իմ էութեանս անմահ մասը կորսնցուցի, պարոն, և ինչ

որ կը մնայ, անասնական է:— Իմ անու՛նս, Եակօ, իմ բարի անո՛ւնս:

Եակօ— Իբրև պարկեշտ մարդ կ'ըսեմ, կարծեցի, թէ մարմնոյդ վրայ վէրք մ'առիր. ասորը մէջ աւելի ցաւ կայ, քան բարի անուան մէջ: Բարի անունը ունայն և սնտոյի պատրանք մ'է, յաճախ առանց արժանիքի ձեռք բերուած, և անարժանաբար կորսուած: Բու բարի համբաւը ամենեկին չկորսնցուցիր, բայց եթէ դու՛ն այդպէս կ'երեւակայես:— Օ՛ն, ո՛վ մարդ, միջոցներ կան զօրավարին սիրտը նորէն շահելու: Արանեղութեամբ քեզի ճամբայ տուաւ, այս՝ քաղաքական պատիժ մ'է, և ոչ թշնամութեամբ եղած բան մը. միևնոյն կերպիւ ինչպէս երբ մէկը իւր անմեղ շունը կը ծեծէ, դուռոց առիւծ մը վախցնելու համար: Իւր ներման արժանանալու հետամուտ եղի՛ր, և զինքը պիտի շահիս նորէն:

Քաս. — Աւելի ևս հետամուտ պիտի լինիմ իւր արհամարհանայ արժանանալ, քան տեսնել, որ այնպիսի բարի հրամանատար մը խաբուի սասնկ թեթևօլիկ զինով, և անխոհեմ պաշտօնատարէ մը: Գինովալ, թութակի պէս չաղակրատել, կուրիլ, կանչուրուտել, հայհայել, ճամարտակել իւր ստուերին հետ:— Ո՛վ դու, զինի՛ր անտեսանելի ոգի, եթէ դու՛ն անու՛նս չունիս, որով քեզի կ'անուանեն, թող որ քեզի սատանայ կոչենք:

Եսաիօ — Ո՞վ էր այն՝ զոր կը հալածէիր սրովդ: Ի՞նչ ըրած էր քեզի:

Քաս. — Չգիտեմ:

Եսաիօ — Կարելի՞ է:

Քաս. — Շատ մը բաներ կը յիշեմ, բայց որոշակի ոչինչ. — կռիւ մը, բայց անոր շարժումը չգիտեմ: — Ո՛հ, կարելի՞ բան է, որ մարդ զիկ իրենց բերանին մէջ թշնամի մը մտցնեն՝ իրենց ուղեղը յափշտակելու համար. եւ թէ մեզի ուրախութիւն, հաճոյք և հեշտութիւն համարինք զմեզ անասուն դարձնելով:

Եսաիօ — Բայց դուն այժմ բաւական աղէկ ես, ի՞նչպէս այսպէս սթափեցոր:

Քաս. — Սատանայ գինովութիւնը հաճեցաւ տեղի տալ սատանայ բարկութեան. մէկ թերութիւն մը ուրիշ մը կը ցուցընէ, որպէսզի իմ անձն ազատութիւն արհամարհեմ:

Եսաիօ — Ա՛հ, դուն խտապահանջ բարոյազէտ մ'ես: Ի նկատի առնելով ժամանակը, տեղը, և այս երկրին հանգամանքը՝ սրտովս պիտի փափաքէի, որ այս բանը չպատահէր. բայց քանի որ եղածը եղած է, ջանա՛ դարձանել զայն քու բուն օգտիդ համար:

Քաս. — Եթէ իմ պաշտօնիս վերահաստատումը խնդրեմ, պիտի ըսէ ինծի՝ թէ գինով մ'եմ ես: Եթէ Հիտրայի պէս շատ մը բերաններ ունենայի, այսպիսի պատասխան մը պիտի պապանձեցնէր զանոնք ամէնքը: Հիմա ողջա-

միա մարդ լինել, պահ մը ետքը յիմար մը, և հուսկ յետոյ անասուն մը: Ո՛հ, ի՞նչ տարօրինակ բան: Մէն մի աւելորդ բաժակ անիծեալ է, և սատանայէն բաղադրուած:

Եսաիօ — Օ՛ն, օ՛ն, լաւ գինին ընտանի բարի բան մ'է, երբ լաւ կը գործածենք զայն: այլ ևս մի՛ գանգատիր անոր դէմ: — Սիրելի տեղակալ, կը խորհիմ, թէ գիտես, որ կը սիրեմ քեզի:

Քաս. — Փորձով տեսայ զայդ, պարոն, — ես գինովս:

Եսաիօ — Գուն կամ որ և է ապրող մարդ կրնայ երբեմն գինովնալ: Պիտի ըսեմ քեզի, թէ ի՞նչ պէտք ես ընել: Մեր զորավարին կինն է հիմա զորավարը. — այսպէս կրնամ ըսել այն մտօք, թէ նա բոլորովին կը պաշտէ իւր կինը անոր ընտիր ձիրքերուն և շնորհալի գեղեցկութեան համար: — Խոստովանէ՛ անոր ամէն ինչ, և թախանձանօք խնդրէ՛ որ քու պաշտօնդ վերստանալու համար օգնէ քեզի: Նա այնչափ ազնիւ, բարի և օրհնեալ բնաւորութեամբ օժտեալ մէկն է, որ իւր բարութեան մէջ թերացած պիտի համարի, եթէ իրմէ պահանջուածէն աւելին չընէ: Քու և անոր ամուսնոյն մէջ խըղուած այս կապը՝ խնդրէ իրմէ որ միացնէ, և իմ բաղդս գրաւ կը զնեմ հաւասար գրաւի մը դէմ, որ քու խախտուած գիրքդ առաջուանէ աւելի պիտի ամրապնդի:

Քաս. — Լաւ է ինձ տուած խորհուրդդ:

Եակօ — Կ'երդնում իմ բարեկամութեան, և իմ պարկեշտ սիրոյս անկեղծութեան վրայ:

Բաս. — Անաարակոյս կը հաւատամ այս պէս. և վաղն առտու կանուխ պիտի թախանձեմ առաքինի Տէղտէմօնան, որ ինծի համար միջամտէ: Պիտի վհատիմ իմ բաղդէս, եթէ այս յոյսս ՚ի դերեւ ելնէ:

Եակօ — Ուղիղ կը խորհիս: Գիշեր բարի, տեղակալ, պահակերելու համար պէտք է երթամ:

Բաս. — Գիշեր բարի, պարկեշտ Եակօ:

(Կը մեկնի Բասիօ:)

Եակօ — (Առանձին) Եւ ո՞վ պիտի ըսէ ուրեմն, թէ խաբեբայի դեր կը խաղամ, երբ այս օրինակ պարզ և պարկեշտ խրատներ կը տամ այնքան մտքի մօտ՝ որ ստուգիւ միակ միջոցն է Մաւրը վերստին շահելու համար: Քանզի շատ դիւրին է դիւրահաւան Տէղտէմօնան պարկեշտ դաւադրութեան մը մատնել. նա ազատ տարերց պէս ամէն բարեմասնութեամբ օժտեալ մէկն է: Եւ ի՞նչ է իրեն համար Մաւրը շահիլը, — եթէ հարկ լինի իւր մկրտութիւնն, և իւր փրկութեան նուիրագործութիւնն իսկ ուրանալ իւր հոգին անոր սիրովն կաշկանդուած է, որ կրնայ ուղածին պէս դարձնել զինքը, և իւր քմայքին համեմատ իբրև աստուած իշխել Մաւրի տկար բնութեան վրայ: Ի՞նչպէս խաբեբայ կրնամ լինել ուրեմն, երբ Քասիօյին կը ցուցնեմ շիտակ ճամբան՝ որ ուղղակի յաջողութեան կը տանի: Դժոխային աստուածու-

թիւն: Երբ սպտանաներն ամենասե ոճիրներ գործել կ'ուզեն, ՚ի սկզբան երկնային երեւոյթով մը կը ներկայացնեն զանոնք. — ինչպէս ես այժմ կ'ընեմ: Քանզի երբ այս պարկեշտ տըխմարը թախանձանօք Տէղտէմօնային կը դիմէ իւր պաշտօնը նորէն ձեռք բերելու համար, և սա ևս շերմապէս կը պաշտպանէ անոր դատը Մաւրի քով: Ես ևս Մաւրին ակնյլին մէջ այս թոյնը պիտի թափեմ, թէ Տէղտէմօնա իւր մարմնական ցանկութեանց համար է, որ կը պաշտպանէ Քասիօն, և որչափ աշխատի ա՛նոր բարիք ընել, այնչափ ևս Մաւրին քով իւր վարկը պիտի կորսնցնէ: Այսպէս անոր առաքինութիւնը պիտի արատաւորեմ, և անոր բարեւրտութեան հետեանօք պիտի պատրաստեմ այն ցանցը՝ որ զանոնք ամէնքը պիտի թակարդէ: — Ի՞նչ է այն, Բօտրիկօ:

Կը մտնէ Բօտրիկօ:

ԲօՏ. — Որսալու ետեէ եմ ոչ որսող՝ հապա հաչող շան մը պէս: Ստակս գրեթէ բոլորովին վատնեցի. այս գիշեր լաւ մը ծեծ կերայ, և հետևութիւնն այս պիտի լինի, որ բազում փորձառութիւն պիտի ունենամ իմ յոգնութեանցս համար, այնպէս որ առանց ամենեւին ստակ մ'ունենալու, և քիչ մ'աւելի խելքով՝ վենետիկ պիտի դառնամ:

Եակօ — Որչա՞փ ողորմելի են անոնք՝ որ համբերութիւն չունին: Չէ՞ որ ամէն վէրք աստիճանաբար կը բուժի: Ի՞նչն գիտես, թէ մենք

խելքով կը գործենք. և ոչ կախարդութեա իր.
 և խելքը ժամանակի յապաղման ենթակայ է:
 Չէ՞ որ ամէն բան յաջող է. Քասիօն քեզի ծե-
 ծեց, և դուն այս աննշան ծեծին հետևանօք՝
 Քասիօն կործանեցիր: Թէպէտև շատ բաներ
 կան, որ արևին տակ կ'աճին, սակայն պտուղ-
 ները նախ ծաղիկ կը տան, յետոյ կը հասուն-
 նան. պահ մը համբերութիւն ունեցի՛ր: — Պա-
 տարագ զկայ, աւանդիկ առտու եղաւ. զուար-
 ճութիւն և գործք, կարծես ժամանակը կը
 կարճեցնեն: — Հեռացի՛ր, զնա՛ բնակարանդ,
 զնա՛, կ'ըսեմ. այսուհետև աւելի բաներ պիտի
 իմանաս. օ՛ն, երթալը նայէ՛:

(Կը մեկնի Քօսրիկօ:)

Երկու բան կը մնայ ընելիք. — կինս պէտք
 է գործէ Քասիօյի համար իւր տիրուհւոյն քով.
 զինքը յառաջ պիտի մղեմ. իսկ ես նոյն պա-
 հուն Մաւրը մէկդի պիտի քաշեմ, և յանկարծ
 պիտի թողում որ վրայ հասնի՝ երբ Քասիօ իւր
 կնօջը միջնորդութիւնը կը հայցէ: Ա՛հ, այս է
 միակ միջոցը. չթուլցնենք այս խորհուրդը ան-
 հոգութեամբ և յապաղմամբ:

(Կը մեկնի:)

(Վերջ Բ. Արարուածի:)

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Ինչպիսիք կը գործենք... և ինչպիսիք ժամանակի յայտարարումը... և ինչպիսիք ժամանակի յայտարարումը... և ինչպիսիք ժամանակի յայտարարումը...

ԲՂՈՂԴԺ ԾԱԿՈՂԱՂԱ

Եւ զորոք Բասիլի համար իւր սիրտը... և զորոք Բասիլի համար իւր սիրտը... և զորոք Բասիլի համար իւր սիրտը...

աշա . զմեծարդարի . ըրա՛ր . ձեզմեջ լինողսր իրո՛ծ
զմէ ձեզիս զի փառնա զգափազօրս մ . իրո՛ծ յատու
-րա սմ յիս . իցափափ զի զօ . զմեջ լինողսր լազմ
- իրո՛ծա գժմեջ իւրիս

ԱՐԱՐՈՒԿ ԵՐՐՈՂ

... լինողսր լազմ իւրիս գժմեջ լինողսր լազմ իւրիս
... լինողսր լազմ իւրիս գժմեջ լինողսր լազմ իւրիս
... լինողսր լազմ իւրիս գժմեջ լինողսր լազմ իւրիս

ՏԵՍՍՐԱՆ Ա.

... լինողսր լազմ իւրիս գժմեջ լինողսր լազմ իւրիս
... լինողսր լազմ իւրիս գժմեջ լինողսր լազմ իւրիս
... լինողսր լազմ իւրիս գժմեջ լինողսր լազմ իւրիս

(Երաժշտութիւն)

Հոսպիտը կը մտնէ :
Հայ. — Ի՞նչպէս, վարպետներ, միթէ՞ ձեր
գործիքները նարօղի եղած են, որ այսպէս քը-
թէն կը խօսին :

Ա. Երժ. — Ի՞նչպէս, պարոն, ինչո՞ւ համար :
Հայ. — Ասո՞նք են, կը խնդրեմ, որ հովի
գործիքներ կը կոչուին :

Ա. Երժ. — Այո՛, ասոնք են, պարոն :
Հայ. — Ո՛հ, ադկէ պոչ մը կախուած է :
Ա. Երժ. — Ուսկի՞ց կախուած է պոչը,
պարոն :

Հայ. — Ահ, որչափ որ գիտեմ, շատ մը

հովի գործիքներէ: Բայց, վարպետներ, ահա ստակ ձեզի. և զօրավարը այնչափ կը սիրէ ձեր երաժշտութիւնը, որ կը փափաքի, այլ ևս աղմուկ չընէք անով:

Ա. Երժ. — Լաւ, պարոն. չպիտի ընենք:

Հսպ. — Եթէ ունիք այնպիսի երաժշտութիւն, որ անլսելի լինի. կրնաք շարունակել. բայց ինչպէս կ'ըսեն, երաժշտութիւն լսելու համար զօրավարը այնչափ փոյթ չընէր:

Ա. Երժ. — Այդ տեսակը չունինք, պարոն:

Հսպ. — Ուրեմն ձեր փողերը ձեր պարկին մէջ դրէ՛ք, ինչու որ ես պիտի մեկնիմ. դնացէ՛ք, օ՛ն, հեռացէ՛ք ասկից:

Քաւ. — Կը լսե՞ս, իմ պարկեշտ բարեկամս:

Հսպ. — Ոչ, չեմ լսեր քու պարկեշտ բարեկամդ. կը լսեմ քեզի:

Քաւ. — Կ'աղաչեմ, դադրեցո՛ւր քու կատակներդ: Աւանակ սոկի մը քեզի. եթէ զօրավարին տիկնոջ ընկերացող կինն ելած է, ըսէ՛ իրեն, թէ Քասիօ անուն մէկը իրեն հետ խօսելու շնորհքը կը խնդրէ: Պիտի ընե՞ս ինծի այս ծառայութիւնը:

Հսպ. — Նա ելած է, պարոն, և եթէ հոս գալ ուզէ, հաւանական է որ իրեն հաղորդեմ ձեր փափաքը:

Քաւ. — Լաւ, սիրելի բարեկամս:

(Կը մեկնի Հսպիսը:)

Գիտաց, Եմոյք ցո փայցո, Էմ — քաւ

Կը մտնէ Եակօ:

Յարմար ժամանակին եկար, Եակօ:

Եակօ — Անկողին չմտա՞ր ուրեմն:

Քաւ. — Ահ, ոչ. արդէն առաւօտ եղած էր, երբ իրարմէ բաժնուեցանք: Համարձակութիւն ունեցայ, Եակօ, մէկը կնոջդ զրկելու. խնդիրքս այս է, որ առաքինի Տէղտէմօնայի քով մօտենալու միջոց մը հայթայթէ ինծի համար:

Եակօ — Զինքը ձեզի պիտի զրկեմ հիմա անմիջապէս. և միջոց մը պիտի գտնեմ Մաւրը մէկդի հեռացնելու, որպէսզի աւելի ազատութեամբ կարենաք խօսակցել ձեր գործոյն վրայ:

Քաւ. — Խոնարհաբար շնորհակալ եմ քեզի: Երբէք աւելի բարի, և պարկեշտ Ֆլօրանսցի մը ճանչցած չեմ:

Կը մտնէ Էմիլիա:

Էմիլի. — Բարի լոյս, սիրելի տեղակալ. կը ցաւիմ ձեզի պատահած այս անհաճոյ դէպքին համար, բայց ամէն ինչ լաւ պիտի կարգադրուի անշուշտ: Զօրավարը և իւր կինն ասոր վրայ կը խօսէին. Տէղտէմօնան ձեզի շերտօրէն կը ջատագովէ. Մաւրը կը պատասխանէ, թէ այն զոր դուք վիրաւորեցիք, մեծ համբաւ կը վայելէ Կիպրոսի մէջ, և ազնիւ ընտանիքի կը վերաբերի. և թէ խոհեմութեամբ ամէն ինչ կը շուքուի, հաւանական է, որ մերժէ ձեր խնդիրքը. բայց կը հաւատօ՞ւնէ, թէ կը սիրէ ձեզի, և այնչափ համակրութիւն ունի ձեզի համար, որ

ուրիշ ջատագովութեան պէտք չկայ, և առաջին առիթն որ ներկայի, նորէն ձեր պաշտօնին մէջ պիտի հաստատէ զձեզ:

Քաս. — Բայց և այնպէս կ'աղաչեմ ձերի — եթէ յարմար կը դատիք, կամ եթէ կարելի է, առիթ մը ձեռք բերել ինծի համար Տէղտէմօնայի հետ առանձին կարճ խօսակցութիւն մ'ունենալու:

Էմիլ. — Կ'աղաչեմ, ներս եկէ՛ք. այնպէս պիտի յարմարցնեմ, որ կարենաք անոր հետ արձակ համարձակ խօսիլ:

Քաս. — Զիտ շատ կը պարտաւորէք:
(Կը մեկնին:)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ.

Կը մտնեն Օթէլլօ, Եակօ, և պարոններ:

Օթէլ. — Այս նամակները նաւուղիդին տո՛ւր, Եակօ, և պատուիրէ՛ իմ մեծարանքներս մաւտուցանել Ծերակոյտին: — Յետոյ պիտի երթամ ամբուլթիւնները աչքէ անցնել, հոն եկօ՛ւր, զիս գտիր:
Եակօ. — Լաւ, սիրելի տէր իմ, այդպէս պիտի ընեմ:

Օթէլ. — Այս ամբուլթիւնները, պարոններ, զանոնք տեսնելու երթա՞նք:

Պրնր. — Զեր մեծութեան պիտի ընկերացնանք:
(Կը մեկնին:)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ.

Դղեակին առջև:

Կը մտնեն Տէղտէմօնա, Քասիօ և Էմիլիա:

Տէղ. — Հաւաստի եղի՛ր, բարի Քասիօ, որ իմ բոլոր ճարտարութիւնս ի դորձ պիտի դնեմ քեզի օգնելու համար:

Էմիլ. — Սիրելի տիկին, ըրէ՛ք այնպէս, կը հաւատտեմ որ ամուսինս շատ ցաւած է, իբր թէ այս խնդիրն իրեն վերաբերէր:

Տէղ. — Ո՛հ, նա պարկեշտ մէկն է: — Մի՛ տարակուսի՛ր, Քասիօ, պիտի աշխատիմ, ամուսինս և զձեզ իրարու հետ առաջուան պէս բարեկամացնել:

Քաս. — Վեհանձն տիկին, Միքայէլ Քասիօ ի՛նչ վիճակի իսկ ենթարկուի՛ նա միշտ ձեր հաւատարիմ ծառան պիտի մնայ:

Տէղ. — Ո՛հ, պարոն, դիտեմ և շնորհակալ եմ ձեզի: Դուք կը սիրէք իմ ամուսինս, երկար ժամանակ ճանչցաք զինքը, և հաւաստի եղի՛ք, որ քաղաքական պատճառներն են, որ զինքը ձեզմէ հեռու կը պահեն:

Քաս. — Սակայն, տիկին, այդ քաղաքակա- նութիւնը կրնայ այնչափ երկարիլ կամ սնանիլ այնպիսի նուրբ և հասանուտ պատրուակներով, կամ այնպիսի պարագաներ կրնան ծաղիլ, որ ես բացակայ և իմ պաշտօնս ուրիշի յանձնուած

լինելով, իմ զօրավարս պիտի մոռնայ իմ անձնուրումը, և ծառայութիւններս :

Տեգ. — Ադոր համար մի՛ տարակուսիր. հոս էմիլիայի առջև կ'երաշխաւորեմ քու պաշտօնդ. հաւասար եղի՛ր, որ երբ բարեկամութիւն կ'ուխտեմ, մինչև վերջին կէտը կ'ուզեմ կատարել զայն : Ամուսինս հանգիստ չպիտի թողում, անքուն պիտի պահեմ զինքը, և իւր համբերութիւնը կորսնցնելու չափ պիտի խօսիմ անոր . իւր անկողինը դպրոց մը պիտի թուի, և իւր սեղանը՝ խոստովանարան մի, և ամէն իւր ըրածին պիտի խառնեմ Քասիօյի խնդիրը : Ուրախ եղի՛ր ուրեմն, Քասիօ, որովհետև փաստաբանդ լաւագոյն պիտի համարի մեռնիլ, քան լքել քու դատդ :

Կը մտնեն Օթէլլօ, եւ Եակօ հետուէն :

Էմիլ. — Տիկին, աւասիկ կը գայ իմ տէրս :

Գաս. — Տիկին, ձեզմէ բաժնուելու հրաման պիտի խնդրեմ :

Տեգ. — Ինչո՞ւ համար, կեցի՛ք և լսեցէ՛ք ինչ որ պիտի խօսիմ :

Գաս. — Ոչ հիմա, տիկին, անհանգիստ կ'զգամ զիս, և անկարող իմ դատիս պաշտպանութեան համար :

Տեգ. — Լաւ, ինչպէս որ կ'ուզէք :

(Կը մեկնի Քասիօ :)

Եակօ — Հա՛, այդ չեմ սիրեր :

Օթէլ. — Ի՞նչ կ'ըսես :

Եակօ — Ոչինչ, տէր իմ, կամ եթէ . . . չգիտեմ ի՞նչ :

Օթէլ. — Քասիօն չէ՞ր, որ կնոջմէս բաժնուեցաւ :

Եակօ — Քասիօն, տէր իմ : Ստուգիւ ոչ, չեմ կրնար հաւատալ, որ նա յանցաւորի մը պէս սպրդի հեռանայ ձեր գալուստը տեսնելով :

Օթէլ. — Հաստատապէս կը հաւատամ, որ այն էր :

Տեգ. — Ի՞նչպէս, տէր իմ : Խնդարկուի մը հետ կը խօսէի հոս, մարդ մը՝ որ ձեզի վշտացուցած լինելուն համար կը տառապի :

Օթէլ. — Չո՞վ կ'իմանաս :

Տեգ. — Չեր տեղակալը, Քասիօն, սիրելի տէր իմ : Եթէ փոքր ինչ շնորհ ունիմ ձեր քով, կամ ազդեցութիւն ձեր սիրտը շարժելու համար, այժմէն հաշտութիւն ըրէ՛ք անոր հետ . քանզի եթէ այդ մարդը չէ՛ որ ձեզի ստուգապէս կը սիրէ, և թէ տգիտութեամբ սխալած է, կը խոստովանիմ որ պարկեշտ դէմք մը դատելու կարողութիւնը չունիմ . կ'աղաչեմ ետ կանչեցէ՛ք զինքը :

Օթէլ. — Ա՞յն էր, որ հիմա ասկից դուրս ելաւ :

Տեգ. — Այո՛, ստուգիւ . բայց այնչափ նուաաստացած և վշտաբեկ, որ ես ևս իւր վշտով համակուեցայ, և կը տառապիմ անոր համար : — Տէր իմ, ետ կանչէ՛ զինքը :

Օրեղ. — Ոչ այս պահուս, անուշիկ Տէղտէմօնա. ուրիշ ժամանակ մը:

Տէգ. — Բայց շուտով, այնպէս չէ՞:

Օրեղ. — Որչափ որ կարելի է շուտով, անուշիկս, քեզի հաճելի լինելու համար:

Տէգ. — Ա՞յս գիշեր, մեր ընթրիքի ժամանակ:

Օրեղ. — Ոչ, ոչ այս գիշեր:

Տէգ. — Վաղը ճաշի՞ ժամանակ ուրեմն:

Օրեղ. — Տունը չպիտի ճաշեմ. միջնաբերդին մէջ պաշտօնատարներուն հետ պիտի լինիմ:

Տէգ. — Ուրեմն, վաղը գիշեր. կամ երեքշաբթի առտու, կամ երեքշաբթի ցերեկը, կամ գիշերը. կամ չորեքշաբթի առտու: — Կ'ազատեմ, ժամանակ մը որոշէ՛, բայց երեք օրը չանցնի: Նա արդարև զղջացած է, սակայն և այնպէս իւր յանցանքը, մեր պարզ դատողութեամբ գրեթէ յանցանք մը չէ՝ առանձին յանդիմանութեան մ'արժանանալու, բաց 'ի այն պարագայէն՝ երբ պատերազմի հարկը օրինակ մը տալ կը պարտաւորի լաւագոյնները պատժելով: Ե՞րբ պիտի գայ, ըսէ՛ ինձի, Օթէլլօ: Կը փնտրուեմ հոգւոյս մէջ, թէ ի՞նչ կրնայիր ինձմէ պահանջել, և ես մերժէի քեզի, կամ այսպէս վարանէի պատասխան մը տալու: — Ի՞նչպէս, Միքայէլ Քասիօն, որ ձեր սիրային այցելութիւններուն կ'ընկերանար, և շատ անգամ ձեր կողմը կը բռնէր, երբ ձեր նկատմամբ աննպաստ խօսք մ'ըսէի, այսչա՛փ դժուարութիւն ընել

ձեր քով բերելու համար: Հաւատացէ՛ք ինձի, ես չպիտի մերժէի:

Օրեղ. — Կ'ազատեմ, բաւ է այլ ևս. թող գայ երբոր կամի, չեմ ուզեր քեզի բան մը զլանալ:

Տէգ. — Ինչո՞ւ. շնորհ մը չէ այս. հապաբսեմք թէ խնդրէի ձեզմէ որ ձեռնոցնիդ կրէիք, կամ սննդաւէտ կերակուր առնէիք, կամ ինքզինքնիդ տաք պահէիք. կամ թէ աղաչէի ձեզի, որ մասնաւոր հոգ տանէիք ձեր անձին: Ոչ, երբ խնդիր մ'առնեմ, որով իրապէս քու սէրդ փորձել ուզեմ, պէտք է, որ այն՝ ծանրակշիռ և շատ դժուարին լինի, և զայն շնորհելը լի ամենամեծ վտանգներով:

Օրեղ. — Ձեմ ուղեր բան մը մերժել քեզի. ուստի կը խնդրեմ շնորհք ըրէ՛, զիս պահ մը առանձին թողուլ:

Տէգ. — Միթէ՞ պիտի մերժեմ քեզի այս, ոչ. մնաս բարով, տէր իմ:

Օրեղ. — Մնաս բարով, Տէղտէմօնաս. անմիջապէս քեզի պիտի միանամ:

Տէգ. — Եկու՛ր, էմիլիա:

(Օրեղոյ յին) Թող քու քմացդ համաձայն լինի, և ինչ որ լինի, կը հնազանդիմ:

(Կը մեկնի էմիլիայի հետ:)

Օրեղ. — Պաշտելի թշուա՛ւ: Դժոխքն առնուհոգիս, եթէ քեզի չեմ սիրե՛ր, և երբ քեզի չսիրեմ, քասօը պիտի պատէ զիս նորէն:

Եակօ — Իմ ազնիւ տէրս :

Օրէջ. — Ի՞նչ կ'ըսես, Եակօ :

Եակօ — Մի քայէլ Քասիօն ձեր սիրաբանութեան վրայ տեղեկութիւն ունէ՞ր, երբ իմ տիրուհւոյս սիրային յայտարարութիւններ կ'ընէիք :

Օրէջ. — Սկիզբէն մինչև վերջը գիտէր . ինչո՞ւ համար կը հարցնես :

Եակօ — Իմ մտածումս գոհացնելու համար, և ոչ այլ ինչ :

Օրէջ. — Եւ ի՞նչ է քու մտածումդ, Եակօ :

Եակօ — Չգիտէի, թէ Քասիօ անոր հետ ծանօթացած էր :

Օրէջ. — Այո՛, և շատ անգամ մեր մէջ կը միջամտէր :

Եակօ — Ստուգի՞ւ :

Օրէջ. — Ստուգի՛ւ, այո՛, ստուգիւ : — Ադոր մէջ բան մը կը նշմարե՞ս . պարկեշտ մէկը չէ՞ :

Եակօ — Պարկե՛շտ, տէր իմ :

Օրէջ. — Պարկե՛շտ . այո՛, պարկե՛շտ :

Եակօ — Տէր իմ, ինչ որ ես գիտեմ :

Օրէջ. — Ի՞նչ կը խորհիս գունն :

Եակօ — Խորհի՛մ, տէր իմ :

Օրէջ. — Խորհի՛մ, տէր իմ : Երկինք վկայ ըսածիս արձագանդ կը տայ, այնպէս որ կարծես թէ զարհուրելի հրէջ մը կայ իւր մտքին մէջ : Լեզուիդ տակը բան մ'ունիս . ճիշդ հիմա ըսեցի որ կ'ըսէիր, — Դուն աչք չես սիրեր, երբ Քասիօն կնոջմէս բաժնուեցաւ . ի՞նչ էր, որ չսիրեցիր : Եւ երբ քեզի ըսի, թէ ինձի խորհրդա-

կից էր իմ բոլոր սիրաբանութեան ընթացքի մէջ, գուն պոռացիր, Ստուգի՛ւ, և յօնքդ կծկեցիր, և պոստեցիր, այնպէս որ իբր թէ գլխոյդ մէջ ծածկուած լինէր սուկալի խորհուրդ մը . եթէ զիս կը սիրես, յայտնէ՛ ինձի քու մտքդ :

Եակօ — Տէր իմ, գիտէք թէ կը սիրեմ ձեզի :

Օրէջ. — Կը հաւատամ, որ կը սիրես . և, — քանզի գիտեմ թէ պարկեշտ մէկն ես, և ինձի համար մեծ սէր կը տածես, և խօսքերդ կը կշռես, զանոնք արտասանելէ յառաջ, — անոր համար այդ քու ընդհատումներդ ինձի աւելի երկիւղ կը պատճառեն, ինչու որ այս խօսքերը խաբբայ և անհաւատարիմ մէկու մը բերնին մէջ սովորական կատակներ են, իսկ ուղիղ անձի մը բերնին մէջ՝ գաղտնի նշաններ են բխած՝ սրտէ մը, զոր կերքը չկրնար զսպել :

Եակօ — Մի քայէլ Քասիօյի համար կրնամ երդնուլ . կը հաւատամ, թէ նա պարկեշտ է :

Օրէջ. — Ես ևս այնպէս կը խորհիմ :

Եակօ — Մարդիկ լինել պէտք էին, ինչ որ կ'երևին . կամ անոնք՝ որ չեն, ինչ որ կ'երևին, իցի՛ւ թէ չերևէին, ինչ որ չեն :

Օրէջ. — Արդարև, մարդիկ պէտք էին լինել ինչ որ կ'երևին :

Եակօ — Ուրեմն, կը խորհիմ, թէ Քասիօն պարկեշտ մարդ մ'է :

Օրէջ. — Ո՛չ, աւելի բան մը կայ ասոր մէջ : Կ'աղաչեմ քեզի, խօսէ՛ ինձի, ինչպէս որ կը խոր-

հիս, ինչպէս որ մտքիդ մէջ կ'որոճաս. և վատթարագոյն խորհուրդներդ՝ վատթարագոյն բառերով բացատրէ՛ :

Եսկօ — Սիրելի տէր իմ, ներեցէ՛ք ինձի . թէպէտև ամէն բանի մէջ ձեզի հնազանդութիւն կը պարտիմ, բայց չեմ կարող հնազանդիւ ձեզ այնպիսի բանի մը համար, որմէ ստրուկներն անդամ ազատ են : — Արտարեւել իմ մտածումներս : — Ի՞նչպէս, ըսենք թէ անոնք ցած և կեղծ են, — ո՞րն է այն պալատը՝ ուր զաղիր բաներ երբեմն մուտ չդանեն. ո՞վ ունի այնպիսի մաքուր կուրծք մը՝ ուր անիրաւ կասկածներ չսպրդին, և ուր չնստին՝ իբր դատաւոր ամենաարդարացի խորհրդածութեանց քով :

Օրէջ. — Դուն քու բարեկամիդ գէմ կը դաւաճանես, Եսկօ, եթէ կը կարծես, թէ նա թշնամանուած է, և քու խորհուրդներդ անորմէ կը ծածկես :

Եսկօ — Կ'ազաչեմ ձեզի, — թերևս անիրաւ եղած լինիմ իմ ենթադրութեանս մէջ, ինչպէս որ կը խոստովանիմ, իմ բնութեանս մէկ զբժբազդութիւնն է չարութիւն ընդհարել ամէն ուրեք, և յաճախ նախանձս՝ թերութիւններ կ'ստեղծէ, որ գոյութիւն չունին : — Կ'ազաչեմ ձեզի ուրեմն նկատողութեան չառնուլ այնպիսի մէկու մը կարծիքները, որ տկար է իւր դատողութեան մէջ, և ձեզի անձկութեան պատճառ չտալ անոր բրած ասարտամ և անստոյգ դիտու-

ղութիւններով : Լաւ ևս է, ձեր հանդատութեան և օգտին համար, իմ մարդկութեանս, պարկեշտութեանս, և խոհեմութեանս համար, որ իմ խորհուրդներս ձեզի չյայտնեմ :

Օրէջ. — Ի՞նչ ըսել կ'ուզես :

Եսկօ — Բարի անունը թէ մարդու և թէ կինը համար, սիրելի տէր իմ, իրենց հօգուոյ չքնաղ գօհարն է : — Այն՝ որ քսակս կը գողնայ, չնչին բան մը կը գողնայ . բան մը, և ոչինչ : իմս էր այն, անորն է, և հազարներու ստրուկ եղած է : Բայց այն՝ որ բարի անունս ինձմէ կը յափշտակէ, կը գողնայ ինձմէ այն բանը, որ զինքը չհարստացներ, և որ, զիս կ'աղքատացնէ արդարև :

Օրէջ. — Յանուն երկնից, քու միտքդ պիտի իմանամ :

Եսկօ — Չպիտի կարենայիք մինչև իսկ, եթէ սիրտս ձեր ձեռքին մէջ եղած լինէր, և չպիտի կարենաք, քանի որ այն՝ իմ պաշտպանութեանս տակն է :

Օրէջ. — Հա՛ :

Եսկօ — Ո՛հ, նախանձէ զգուշացէ՛ք, տէր իմ. այն՝ կանաչ աչքով հրէչն է, որ կը ծաղրէ այն սնունդը, որով կը սնանի : Երջանիկ կ'ապրի կաւտը, որ դիտակ իւր ճակատագրին՝ չսիրեր զինքը խարսղ կինը : Բայց, ո՛հ, ի՞նչ գժօխային վայրկեաններու դատապարտուած է այն՝ որ կաթողին կը սիրէ, բայց և այնպէս կը կասկա-

ծի, կը տարակուսի, սակայն խելայեղօրէն կը սիրէ:

Օրէջ. — Ո՛վ թշուառութի՛ւն:

Եսկօ — Աղքատը՝ որ գոհ է, հարուստ է, և բաւական հարուստ. բայց անհուն հարստութիւնը ձմեռի պէս աղքատ է անոր համար՝ որ միշտ կը վախնայ թէ աղքատ պիտի լինի: — Գթառատ երկի՛նք, պահէ՛ նախանձէ իմ բոլոր տոհմիս հոգիները:

Օրէջ. — Ինչո՞ւ, ի՞նչ կը նշանակէ այս: Կը կարծե՞ս թէ նախանձոտի կեա՞նք պիտի վարեմ նոր նոր կասկածներով անդադար լուսնի փոփոխութիւններուն հետեւելու համար: Ոչ. անգամ մը որ կը կասկածիմ, անմիջապէս կը վրձուեմ: Այժի մը հետ փոխէ՛ զիս, եթէ հոգիս զբաղի այս ծայրայեղ և սնոտի կասկածներով, զորոնք դուն կ'ենթադրես: Իմ նախանձս չչարժիր, երբ ըսուի թէ կինս գեղեցիկ է, փափկաճաշակ է, ընկերութիւնը կը սիրէ, ազատ կը խօսի, կ'երգէ, կը խաղայ, և կը պարէ: Ուր որ է առաքինութիւնը՝ հոն այս ամէնը առաքինութիւններ են: — Եւ ոչ իսկ իմ տկար արժանիքովս ամենափոքր երկիւղ կամ կասկած պիտի երևակայեմ անոր հաւատարմութեան վրայ. ինչու որ նա աչք ունէր, և ընտրեց զիս: Ո՛չ, Եսկօ, կասկածելէ առաջ՝ կ'ուզեմ տեսնել. և երբ կը կասկածիմ, կ'ուզեմ ստուգել. և երբ ստուգեմ, այլ ևս ուրիշ բան չմնար, բայց միայն հրաժարիլ սէրէ կամ նախանձէ:

Եսկօ — Ուրախ եմ ասոր համար, քանզի հիմա պատճառներ պիտի ունենամ իմ ձեզի համար ունեցած սէրս, և անձնուիրութիւնս աւելի ազատ ոգւով արտայայտելու. հետեւաբար, ինչպէս որ պարտաւոր եմ, ընդունեցէ՛ք ինձմէ հետեւաւ ազգարարութիւնը. — փաստով չեմ խօսիր տակաւին: Հսկեցէ՛ք ձեր կնոջ վրայ. լաւ դիտեցէ՛ք զինքը Բասիօյի հետ. նայեցէ՛ք ոչ նախանձոտ, և ոչ անկասկած աչօք. չեմ ուզեր որ ձեր անկեղծ և ազնիւ բնութիւնը իւր վեհանձնութեան զոհուելով՝ խաբուի. հսկեցէ՛ք ասոր վրայ: — Մեր երկրին սովորութիւնները լաւ դիտեմ: Վենետիկի մէջ կիները երկինքի առջև կը պարզեն իրենց խայտառակութիւնները, բայց իրենց ամուսիններէն կը ծածկեն զանոնք. իրենց լաւագոյն խղճահարութիւնն է ոչ թէ հրաժարիլ անոնցմէ, այլ գաղտնի պահել զանոնք:

Օրէջ. — Այսպէ՞ս կը խորհիս դուն:

Եսկօ — Նա իւր հայրը խաբեց՝ ձեզի հետ ամուսնանալով. և երբ այնպէս կը թուէր, թէ նա ձեր ակնարկներէն կը դողար, և կը վախնար, շատ աւելի սիրեց զանոնք:

Օրէջ. — Այո՛, այդպէս ըրաւ:

Եսկօ — Ուրեմն հետեցուցէ՛ք, թէ նա այնչափ նորատի լինելով հանդերձ՝ կրցաւ այսպիսի դեր մը խաղալ, և վարագոյր քաշել իւր հօր աչքերուն, որ կարծեց թէ այս ամէնը կախարհութիւն էր. . . . — Բայց մեղադրուելու ար-

ժանի եմ. խոնարհաբար ձեր ներողութիւնը կը խնդրեմ զձեզ շատ սիրելուս համար:

Օրէջ. — Յաւիտեանս պարտաւոր եմ քեզի: Եսկօ—Կը տեսնեմ, որ այս բանը փոքր ինչ շփոթեց ձեր միտքը:

Օրէջ. — Ոչինչ, ոչինչ ամենեկին:

Եսկօ — Հաւատացէ՛ք ինձի, կը վախնամ որ այսպէս է: Կը յուսամ, ինչ որ խօսեցայ, իբրև իմ սիրոյս արտայայտութիւնը պիտի նկատէք:—Բայց կը տեսնեմ, որ յուզուած էք. պէտք եմ խնդրել ձեզմէ, որ իմ խօսքերուս նկատմամբ՝ կասկածանքէ զատ ուրիշ եզրակացութեան չհանդիք:

Օրէջ. — Այո՛, այդպէս պիտի ընեմ:

Եսկօ — Հակառակ պարագային, տէր իմ, իմ խօսքերս կրնան այնպիսի վատթար հետեւութիւն մ'ունենալ, որուն իմ խորհուրդներս չեն ձգտիր: Քասիօն իմ պատուաւոր բարեկամս է:— Կը տեսնեմ, տէր իմ, որ յուզուած էք:

Օրէջ. — Ոչ, շատ յուզուած չեմ:— Կը հաւատամ, որ Տէգտէմօնան առաքինի է:

Եսկօ — Ապրի նա երկար տարիներ այսպէ՛ս, և դուք երկար տարիներ ապրէ՛ք, այսպէս մտածելու համար:

Օրէջ. — Բայց և այնպէս ինչպէս բնութիւնը կրնայ մոլորիլ իւր ուզողութենէն . . . :

Եսկօ — Այո՛, ահա հոս է կէտը:— Այսպէս ձեզի ազատութեամբ խօսելով, — մերժել այնպիսի ամուսնական առաջարկներ՝ որ յարակցու-

թիւն ունէին իւր կլիմային, տոհմին և իւր աստիճանին հետ՝ առ որ, ինչպէս կը տեսնենք, ամէն բանի մէջ բնութիւնը կը ձգտի. հը՛մ, ասոր մէջ կրնայ մէկը հոտոտել ազականեալ կամ մեղուութիւն մը, սոսկալի անհամեմատութիւն, անբնական խորհուրդներ:— Բայց ներեցէ՛ք ինձի, դիտաւորութիւնս որոշակի ձեր կնոջ վրայ խօսիլ չէ. թէև կը վախնամ, որ իւր տրամադրութիւնը լաւագոյն դատողութեան տեղի տալով՝ չփորձէ բաղդատել ձեզի իւր երկրին անձերուն հետ, և թերևս զղջայ:

Օրէջ. — Մնա՛ս բարով, մնա՛ս բարով:— Եթէ աւելի բան մը նշմարես իմացուր ինձի. կինդ մէջտեղը դի՛ր դիտելու համար: Թո՛ղ զիս, Եսկօ:

Եսկօ — Կեցիք բարով, տէր իմ:

(Հեռանալով:)

Օրէջ. — Ինչո՞ւ համար ամուսնացայ:— Այս պարկեշտ արարածը անտարակոյս կը տեսնէ, և գիտէ շատ աւելի բաներ՝ քան ինչ որ խօսեցաւ:

Եսկօ — (Վերադառնալով) Տէր իմ, կ'ուզէի խնդրել ձեր մեծապատուութենէ այս գործը քննութեան չառնուլ այլ ևս, հապա ժամանակի թողուլ զայն: Եւ թէպէտև արգարացի է, որ Քասիօ վերստանայ իւր պաշտօնը, (քանզի տուգիւ մեծ ճարտարութեամբ կը վարէ զայն) սակայն, եթէ հաճելի է ձեզ, ժամանակ մը մէկուսի պահեցէ՛ք զինքը, և այս կերպիւ պիտի դիտէք զինքը, և իւր ի գործ դնելիք մի-

չոցները: Լաւ մը դիտեցէ՛ք. եթէ ձեր տիկինը ստիպողաբար պնդէ Քասիօյի պաշտօնի մէջ վերահաստատումը, շատ բան կրնայ հետեիլ ատկէ: Մի և նոյն ժամանակ թող ես ծայրայեղ համարուիմ իմ կասկածներուս մէջ, (ինչպէս որ իրաւացի պատճառներ ունիմ վախնալու թէ այսպէս եմ,) և ազատ թողէ՛ք Տէզտէմօնան, կը խնդրեմ ձեր մեծապատուութենէն:

Օրէջ. — Մի՛ վախնաք, գիտեմ ինքզինքս կառավարել:

Եակօ — Միանգամ ևս կեցի՛ք բարով:
(Կը մեկնի:)

Օրէջ. — Այս մարդը չափազանց պարկեշտ մէկն է, և փորձառութեամբ գիտէ մարդկային արարքներու ամէն ձգտումները: Եթէ տեսնեմ որ թռչնիկս ինձ անհաւատարիմ է, թէև այն կապերը՝ որով անոր միացած եմ, իմ սրտի թելերով իսկ հիւսուած լինէին, մէկ շունչով պիտի հեռացնեմ զինքը, և հովին պիտի թողում որ իւր որսը փնտռէ ըստ բազրի: Թերևս անոր համար որ սևամորթ եմ, և չունիմ իմ խօսակցութեանս մէջ խորամանկներու յատուկ՝ ձկուն ձևերը. — կամ որովհետև դէպ ՚ի տարիներու ձորը կը հակիմ, — թէև այս բան մը չէ: — Այո՛, կորսուած է այն, ես խաբուած եմ. և իմ միւթ թարուածիւնս պէտք է լինի արհամարհել զինքը: Ո՛վ անէծք ամուսնութեան, քանի որ այս փափուկ արարածները իբրև մերը կը համարինք, բայց ոչ անոնց փափաքները: Լաւ ևս կ'ընտրեմ

դօդօշ մը լինել, և բանտի մը գոլորշիներուն մէջ ապրիլ, քան ունենալ իմ սիրած արարածիս սրտին մէջ անկիւն մը՝ ուրիշի կիրառութեան յատկացեալ: Այս է սակայն մեծամեծաց պատիժը. անոնք ստորակարգներէն նուազ առանձնաշնորհեալ են: Մահու պէս անխուսափելի ճակատագիր մը. այո՛, այս սաստիկ պատուհասը մեղ վերապահուած է, երբ կ'սկսինք ապրիլ: Ահա Տէզտէմօնա կը դայ:

Կը մտնեն Տէզտէմօնա, և Էմիլիա:

Եթէ նա կեղծ է, ո՛հ ուրեմն երկինք ինքզինքը կը ծաղրէ՛: — Չեմ ուզեր հաւատալ:

Տէգ. — Ի՞նչպէս այժմ, սիրելիդ իմ Օթէլլօ. ճաշը պատրաստ է, և ազնիւ կղզեցիք, զոր հրաւիրեցիք, քեզի կ'սպասեն:

Օրէջ. — Ես եմ մեղադրելին:

Տէգ. — Ինչո՞ւ համար տկար է ձայնդ, անհանդի՞ստ ես:

Օրէջ. — Հոս ճակտիս վրայ ցաւ կ'զգամ:

Տէգ. — Տքնութենէ յառաջ եկած է այդ անշուշտ. կ'անցնի նորէն. թո՛ղ որ պինդ մը կապեմ. մէկ ժամուան մէջ պիտի աղէկնայ:

Օրէջ. — Քու թաշկինակդ շատ փոքր է:

(Մեկդի կ'առնու իւր ճակտէն թաշկինակը՝ որ գետնի կ'իջնայ:)

Թո՛ղ այդ այժմ, եկո՛ւր քեզի հետ ներս երթանք:

Տէգ. — Եստ կը ցաւիմ, որ աղէկ չես:

(Կը մեկնին Օրէջո, և Տէգետմօնա:)

Էմիլի. — Ուրախ եմ որ այս թաշկինակը գտայ: Ասիկայ՝ Մաւրէն ընդունած Տէղոտէմօնայի առաջին յիշատակն էր: Իմ դժուարահասն ամուսինս հարիւր անգամ գգուեց զիս, որ դողնամ զայն. բայց տիրուհիս այնչափ կը սիրէ այս գրաւականը, (քանզի իւր ամուսինը երգմանցուց զինքը, որ միշտ իւր քով պահէ զայն,) որ իւր վրայ կը կրէ միշտ համբուրելու և անոր հետ խօսելու համար: Անոր նմանը չինեւ տալով՝ Եակօյին պիտի տամ. թէ ի՞նչ պիտի ընէ զայն, երկինք գիտէ, բայց ոչ ես: Իւր քրմահաճոյքը կատարել կ'ուզեմ միայն:

Կը մտնէ Եակօ:

Եակօ. — Ի՞նչպէս. ի՞նչ կրնես հոս առանձին:

Էմիլի. — Մի յանդիմաներ. բան մ'ունիմ քեզի համար:

Եակօ. — Բա՞ն մը ինծի համար: Ծառ հասարակ բան մ'է անշուշտ:

Էմիլի. — Հա՛:

Եակօ. — Խենդուկ կնիկ մ'ունենալ:

Էմիլի. — Ո՛հ, ա՞յդ է ամէնը: Ի՞նչ պիտի տաս հիմա ինծի այս թաշկինակին համար:

Եակօ. — Ի՞նչ թաշկինակ:

Էմիլի. — Ի՞նչ թաշկինակ. այն զոր Մաւրը առաջին անգամ Տէղոտէմօնային ընծայեց, և զոր քանի քանի անգամ ուզեցիր որ գողնամ:

Եակօ. — Գողցա՞ր անորմէ:

Էմիլի. — Մտուգիւ ոչ. նա անհողութեամբ

դետինը ձգեց, և ես բարեբաղդաբար հոն գլտնուելով, առի զայն. տե՛ս աւասիկ:

Եակօ. — Ահա բարի աղջիկ մը. տո՛ւր ինծի:

Էմիլի. — Ի՞նչ պիտի ընես, որ այնչափ թախանձագին կ'ուզէիր որ գողնամ զայն:

Եակօ. — Ինչո՞ւ համար, քեզի ի՞նչ:

(Ձեռքն յախշակելով:)

Էմիլի. — Եթէ կարևոր նպատակի մը համար է, ետ տո՛ւր նորէն: Խեղճ տիկինը պիտի խնայեմ, երբ նորէն չգտնէ զայն:

Եակօ. — Գուն չգիտնալու եկո՛ւր. ես պիտի գործածեմ զայն: Բանդ գնա՛:

(Կը մեկնի Էմիլիս:)

Փասիօյի սենեակին մէջ պիտի կորսնցնեմ այս թաշկինակը, և թող ինք գտնէ: Մնտաի բաներն, օգին պէս թեթեւ, նախանձոտի մը համար՝ Սբ. Գրոց փաստերուն չափ զօրաւոր են: Այս կրնայ բանի մը ծառայել: Մաւրը արդէն այլալլած է իմ թոյնիս ազդեցութեամբ: Աղէտաբեր խորհուրդներն իրենց բնութեամբ թոյն են, որ թէև ՚ի սկզբան ոչ այնչափ դառնահամ, բայց երբ փոքր ինչ արեան վրայ կ'սկսին ներգործել, կը տոչորեն ծծմբային հանքերու պէս: — Այսպէս ըսի: —

Կը մտնէ Օթէլլօ:

Ահա ինքն իսկ կը գայ: Ոչ խաչխաչը, ոչ մանրագորը, և ոչ աշխարհիս որ և է քնաբեր օջարակը չպիտի տան քեզի այն անուշ քունը, զոր ունէիր երէկ:

Օրհչ. — Հա՛, հա՛, անհաւատարիմ ինձի՛, ինձի՛ դէմ՝ :

Եակօ — Ինչպէ՞ս, զօրավար, այլ ևս մի՛ խորհի՛ք ադոր վրայ :

Օրհչ. — Կորսուէ՛, հեռացի՛ր . զիս անիւին վրայ փաթտեցիր : Կ'երդնում որ լաւագոյն է բոլորովին խաբուած լինել, քան դոյզն կասկած մ'ունենալ :

Եակօ — Ի՞նչպէս, տէր իմ :

Օրհչ. — Ի՞նչ կ'զգայի ես, երբ նա հեշտութեան ժամեր կը գողնար ինձմէ : — Չէի տեսներ, չէի խորհեր անոր վրայ, և չէի տառապեր, հետեեալ գիշերը լաւ կը քնանայի, ազատ և զուարթ էի . Քասիօյի համբոյրները անոր շրթունքներուն վրայ չէի գտներ : Այն՝ որմէ բան մը գողցուած է, նոյն բանին պէտք չունենալով՝ թող անգիտակ լինի . այսպէս ամենևին բան մը գողցուցած չլինիր :

Եակօ — Կը ցաւիմ ասիկայ լսելով :

Օրհչ. — Երջանիկ պիտի լինէի, եթէ բոլոր բանակը, մինչև յետին զինուորը, վայելէր անոր չքնաղ մարմինը . այսպէս անգէտ պիտի մնայի : Բայց հիմա, յաւիտեանս մնա՛ք բարով մտքի հանդարտութի՛ւն, մնա՛ք բարով գոհունակութի՛ւն, մնաք բարով փետրաւոր զօրագունդեր, և մեծամեծ պատերազմներ, որ փառասիրութիւնը առաքինութիւն կը համարի՛. ո՛հ, մնաք բարով, մնաք բարով, վրնջող նժոյգ, և բարձրաշունչ չեփոր, սրտաթունդ թմբուկ,

խլացուցիչ սրինգ, արքայական դրօշ, պերճութիւն, հպարտութիւն, շուք և հանդէս փառաւոր պատերազմի՛ : Եւ դուք, մահաշունչ գործիներ, որոնց բիրտ կոկորդները անմահ Արամազդայ ահագնագոչ ձայնին նմանութիւնը կը բերեն, մնաք բարով, Օթէլլօյի դերը լմնցա՛ւ :

Եակօ — Կարելի՞ բան է — տէր իմ : —

Օրհչ. — Թշուառական, ստուգապէս պիտի ապացուցանես, թէ իմ սիրելի կինս պոռնիկ մ'է . աղէկ ուշ դի՛ր ատոր . ականատես վկայութիւն մը տո՛ւր ինձի :

(Անոր կոկորդէն բռնեղով :)

Եթէ ոչ, անմահ հողւոյս վրայ կ'երդնում, որ լաւ ևս էր քեզի համար որ շուն ծնէիր, քան իմ բորբոքեալ զայրոյթիս պատասխանէիր :

Եակօ — Գործը հո՞ս հասաւ ուրեմն :

Օրհչ. — Թող որ տեսնեմ, կամ գտնէ այնպիտի ապացոյց մը տուր, որ բնաւ կասկած չվերցնէ, եթէ ոչ, վա՛յ քու կեանքիդ :

Եակօ — Ազնիւ տէր իմ :

Օրհչ. — Եթէ դուն զինքը կը զրպարտես, և զիս կը տանջես, այլ ևս մի՛ աղօթեր երբէք մէկգի դի՛ր խղճմտանք և գութ . սոսկում սոսկումի վրայ բարդէ՛, գործէ՛ այնպիտի արարքներ որ երկինքը լացընեն, և բոլոր երկիրը զարհուրեցնեն . ոչ, ոչ, ասկէ աւելի ահուելի բան մը չես կրնար աւելցնել քու դատապարտութեանդ վրայ :

Եսկօ — Ո՛վ երկնային շնորհք, ո՛վ երկինք. պաշտպանեցէ՛ք զիս :

Մա՞րդ մ'եօ դուն . ունի՞ս հոգի մը կամ զգացում :—

Աստուած հետդ լինի, ետ առէ՛ք իմ պաշտօնս :— Ո՛վ թշուառական յիմար, որ կ'ապրիս, պարկեշտութիւնդ՝ մոլութեան փոխուած տեսնելու համար :— Ո՛վ հրէշային աշխարհք : Վըկայ եղի՛ր, վկայ եղի՛ր, ո՛վ աշխարհք, թէ ուղիղ և պարկեշտ լինելը վտանգաւոր է :— Ծնորհակալ եմ այս դասին համար, և այսուհետև և ոչ մէկ բարեկամ պիտի սիրեմ . քանի որ բարեկամութիւնն այսօրինակ թշնամանք կը ծնուցանէ :

Օրբէյ. — Ոչ, կեցի՛ր. — դուն պարկեշտ մէկը պէտք է լինիս :

Եսկօ — Խօհեմ պէտք էի լինել . քանզի պարկեշտութիւնը յիմարութիւն է, և կը կորսնցընէ զայն՝ որու համար կ'աշխատի :

Օրբէյ. — Յանուն տիեզերաց, կը հաւատամ, որ կինս առաքինի է, և կը հաւատամ, որ չէ. կը հաւատամ, որ դուն ուղիղ ես, և կը հաւատամ, որ չես . կ'ուզեմ ապացոյցներ ունենալ : Իւր անունը՝ որ Անահիտի դէմքին պէս թարմաւէտ էր, այժմ իմ դէմքիս պէս աղօտացած և սևցած է :— Բանի որ կան չուաններ, կամ դանակներ, թոյն, հուր, կամ հեղձուցիչ շրգիներ, չպիտի հանդուրժեմ ազոր :— Ո՛հ, եթէ կարենայի ստուգութիւնը հաստատել :

Եսկօ — Կը տեսնեմ, պարոն, որ կիրքով չարաչար կը տանջուիք. կը զղջամ որ ես գըրգռեցի ձեզի : Կ'ուզէի՞ք ստուգել ճշմարտութիւնը :

Օրբէյ. — Կ'ուզէի՞ք . ոչ, կ'ուզեմ :

Եսկօ — Եւ կրնաք բայց ի՞նչպէս, ի՞նչպէս կ'ուզէք ստուգել, տէր իմ : Կ'ուզէի՞ք ներկայ գտնուիլ, և ափիբերան ուրիշի մը գրկաց մէջ տեսնել զինքը :

Օրբէյ. — Մահ, և դատապարտութիւն, ո՛հ :

Եսկօ — Դիւրին բան չպիտի լինէր, կարծեմ, այսօրինակ տեսարանի մը ենթարկել զանոնք : Դատապարտութիւն ուրեմն, եթէ իրենցմէ զատ ուրիշ մահկանացու աչեր կը տեսնեն զանոնք միևնոյն բարձի վրայ : Ի՞նչ ուրեմն, ի՞նչպէս ուրեմն, ի՞նչ պիտի ըսեմ, ինչպէ՞ս համոզում գոյացնել : Անկարելի է որ տեսնէիք զայս, եթէ նոյն իսկ նոխազի պէս անժոյժ, և կապիկի պէս տուփոտ լինէին անոնք, գայլերու պէս ցանկութեամբ գրգռուած, և այնչափ մոլեղնած որչափ մէկը կրնայ լինել զինովութեան մէջ : Բայց և այնպէս կ'ըսեմ, եթէ որ և է նշան, և ակներև պարագաներ, որոնք ուղղակի ճշմարտութեան դուռը կ'առաջնորդեն՝ կըրնան գոհացնել ձեզի, պիտի ունենաք զանոնք :

Օրբէյ. — Կենդանի ապացոյց մը տո՛ւր ինձի, թէ նա անհաւատարիմ է :

Եսկօ — Չեմ սիրեր այս պաշտօնը, սակայն քանի որ իմ անհեթեթ պարկեշտութենէս, և

սէրէս մղեալ՝ այսչափ միջամուխ եղայ այս գործին՝ պիտի շարունակեմ : Վերջերս գիշեր մը Քասիօյի քով անցուցի, և սոսկալի ակռայի ցաւէ մը տանջուելով չէի կրնար քնանալ : Կան մարդիկներ՝ որ այնչափ թուլահոգի են, որ քունի մէջ իրենց ըրածներուն վրայ կը բարբանջեն : Ասոնցմէ մին է Քասիօ : Լսեցի, որ իւր քունին մէջ կ'ըսէր. — Անուշիկ Տեգեմօնա, զգոյշ շինիմ, եւ մեր սերը ծածկեմ : Յետոյ, պարոն, ձեռքս կը բռնէր, և սաստիկ կը սեղմէր պօռալով ո՛վ անուշիկ արարած, և ապա կը համբուրէր զիս ուժգին, իբր թէ համբոյրները շըրթունքներէս արմատախիլ ընէր : Յետոյ սրունքը ազդրիս վրայ դնելով՝ կը հառաչէր, կը համբուրէր, և կը պօռար, — Ո՛վ անխօսեալ բա՛ղր, որ քեզի Մարիկն տուա :

Օրէջ. — Ո՛հ, հրէշայի՛ն, հրէշայի՛ն :

Եակօ — Ո՛չ, այս միայն իւր երազն էր :

Օրէջ. — Բայց այս՝ նախընթաց գործողութիւն մը կ'ակնարկէ. չարագուշակ կասկած մ'է, թէ և երազ լինի այն :

Եակօ — Եւ այս կրնայ 'ի լոյս բերել ուրիշ ապացոյցներ, որ ցանցառ երևոյթ մ'ունին :

Օրէջ. — Զինքը կտոր կտոր պիտի ընեմ :

Եակօ — Ոչ, հանդարտ եղիք. տակաւին բան մը չենք տեսներ, նա կրնայ տակաւին պարկեշտ լինել : Ըսէ՛ք ինձի մի միայն, չտեսա՞ք երբեմն ելակի նկարներով ասղնեգործուած թաշկինակ մը ձեր կնոջ ձեռքին մէջ :

Օրէջ. — Այդպիսի թաշկինակ մը ես տուի իրեն. իմ առաջին պարզեւս էր :

Եակօ — Այդ չգիտեմ. բայց այդպիսի թաշկինակ մը տեսայ այսօր, (հաւաստի եմ որ ձեր կնոջն էր,) որով Քասիօ իւր մօրուքը կը սրբէր :

Օրէջ. — Եթէ նոյնն է . . . :

Եակօ — Եթէ նոյնը լինէր, կամ ուրիշ մը, այդ ևս միւսներուն պէս իրեն դէմ խօսող ապացոյց մ'է :

Օրէջ. — Ո՛հ, թշուառական ստրուկը ինչո՞ւ համար քառասուն հազար կեանք չունենար. մին շատ ոչինչ է իմ վրէժխնդրութեանս համար : Այժմ կը տեսնեմ որ ճշմարիտ է. — Ինձ նայէ՛, Եակօ, բոլոր իմ յիմար սերս այսպէս երկնից դէմ կը փչեմ. անհետացաւ ա՛յն. — Դուրս ելի՛ր, սև վրէժխնդրութի՛ւն, քու դժոխային անդունդէ՛դ. — Ո՛վ սէր, լիք քու թագդ, և իմ սրտի աթոռը բռնաւոր ատելութեան յանձնէ՛. ուռեցի՛ր լանջք իմ, քու մէջդ իժի լեզուներ կան միա՛յն :

Եակօ — Կը խնդրեմ, հանդարտեցէ՛ք :

Օրէջ. — Ո՛հ, արիւն, Եակօ, արի՛ւն :

Եակօ — Համբերութիւն, կը խնդրեմ. միտքերնիդ թերևս փոխուի :

Օրէջ. — Երբէք, Եակօ : Ինչպէս որ Պոնտոսի ծովը՝ որոյ սառնեղէն հոսանքը, և բուռն ընթացքը տեղատուութեան երբէք չեն ենթարկիր. անդադար կը յառաջանայ դէպ 'ի Պրոպոնտոս, և Հելլեսպոնտոս. նոյնպէս իմ արիւ-

նալից խորհուրդներս իրենց բուռն ընթացքին մէջ երբէք յետո չպիտի նային, երբէք չպիտի ընկրկին դէպ ՚ի խոնարհ սէրը, մինչև որ խորասուզին անհուն և անյատակ վրէժխնդրութեան մէջ:— Այժմ, յանուն մարմարեայ երկնից ՚ի վեր սըբազան ուխտի մը ակնածու Ֆեամբ կ'երգնում:

(Կը ծնրադրե:)

Եակօ — Մի՛ ելներ տակաւին:—

(Կը ծնրադրե:)

Վկայ եղի՛ք, ո՛վ երկնային լուսափայլ ատուղե՛ր. դուք, տարերք որ կը շրջապատէք զմե՛զ, վկայ եղի՛ք, որ Եակօ կը նուիրէ հոս իւր մտքի, ձեռքի և սրտի գործունէութիւնը անպատուեալ Օթէլլօյի ծառայութեան, թող հրամայէ, և իրեն հնազանդիլը խղճիս դէմ չպիտի լինի, որչափ իսկ արիւնալից լինին իւր հրամանները:

Օրէջ. — Կ'ողջունեմք ու անձնուիրութիւնդ ոչ սին շնորհակալութեամբ, այլ անկեղծ երախտագիտութեամբ. և անմիջապէս պիտի փորձեմք եղի. — մինչև երեք օր թող լսեմք եղմէ, թէ Քասիօ կենդանի չէ այլ ևս:

Եակօ — Բարեկամս մեռած է. այս լինցած բան մ'է ձեր խնդրանաց համեմատ. բայց թողէ՛ք որ Տէղտէմօնան ապրի:

Օրէջ. — Դատապարտութի՛ւն անոր, անամօթ խաբեբան, ո՛հ, դատապարտութիւ՛ն. Օ՛ն, եկօ՛ւր ինձի հետ, պիտի երթամ ձեռք բերել

մահուան շուտափոյթ միջոցներ գեղանի սատանին համար:

Այս վայրկեանէն դուն իմ տեղակալս ես:

Եակօ — Ձերն եմ առյաւէտ:

(Կը մեկնի:)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ.

Կը մտնեն Տէղտէմօնա, Էմիլիա, և Մադրամու:

Տէգ. — Գիտե՞ս արդեօք թէ տեղակալ Քասիօ ո՞ւր պահուած է:

Մադր. — Ձեմ համարձակիր ըսել, թէ նա պահուած է:

Տէգ. — Ինչո՞ւ համար:

Մադր. — Քանզի նա զինուոր մ'է, և ինձի համար ըսել, թէ զինուոր մը կը պահուրտի, զինքը հարուածել ըսել է:

Տէգ. — Տեսնենք, ըսէ՛, ո՞ւր կը բնակի:

Մադր. — Ըսել ձեզի, թէ ո՞ւր կը բնակի, ինձի համար ստել ըսել է:

Տէգ. — Ի՞նչ պէտք է հետեցնել ադկէ:

Մադր. — Ձգիտեմ թէ ո՞ւր կը բնակի. և ինձի համար երևակայել բնակարան մի, և ըսել թէ հոս կամ հոն կը բնակի, պարզապէս ստել կը նշանակէ:

Տէգ. — Կրնայի՞ր արդեօք հարցուփորձ ընել, և տեղեկանալ անոր վրայ:

Մադր. — Ամէն մարդ պիտի հարցաքննեմ ա

նոր մասին, և իմ հարցումներու պատասխանները պիտի ընդունիմ:

Տեգ. — Փնտռէ՛ զինքը, և ըսէ՛ որ հոս գայ. իմացուր իրեն որ ամուսնոյ սիրտը ըրի իրեն ՚ի նպաստ. կը յուսամ թէ ամէն ինչ լաւ պիտի կարգադրուի:

Ծաղր. — Ասիկայ ընելը մարդուս իմացակա նութեան սահմանին մէջն է, հետեւաբար պիտի փորձեմ գործադրել զայն:

(Կը մեկնի:)

Տեգ. — Ո՞ւր կորսնցուցի արդեօք այդ թաշկինակը, էմիլիա:

Էմիլ. — Չգիտեմ, տիկին:

Տեգ. — Հաւատա՛, լաւ ևս կ'ուզէի որ քրուզատօ ոսկիներով լի քսակս կորսնցնէի, քան այդ թաշկինակը: Բարեբաղդաբար իմ աղնիւ Մաւրս ուղղամիտ մէկն է, և նախանձոտ արարածներու ստորնութիւնը չունի. եթէ ոչ այս բաւական պիտի լինէր անոր վատթար խորհուրդներ ներշնչելու:

Էմիլ. — Նախանձոտ չէ՞ միթէ:

Տեգ. — Ո՞վ, ա՞ն. կը հաւատամ որ արեւը, որու տակ ծնած է, արտաքսած է անոր սրտէն ամէն յուր ընաւորութիւն:

Էմիլ. — Տեսէ՛ք, ահա կը գայ:

(*) Քրուզատօ, Փորթուգալի ոսկի մը 15 ֆրանք արժողութեամբ:

Տեգ. — Չպիտի թողում զինքը, մինչև որ Քասիօն իւր քով չկանչէ:

Ի՞նչպէս էք, տէր իմ:

Կը մասնէ Օթէլլօ:

Օրեկ. — Ի՞նչպէս, սիրելի տիկինս:

(Առանձին) Ո՛հ, որչափ դժուար բան է կեղծելը:

Ի՞նչպէս ես, Տէղտէմօնա:

Տեգ. — Լաւ, սիրելի տէր իմ:

Օրեկ. — Տօ՛ւր ինձի քու ձեռքդ. այս ձեռքը տամուկ է, տիկին:

Տեգ. — Այն տակաւին տարիներու և վիշտերու հարուածները կրած չէ:

Օրեկ. — Այս կը նշանակէ յորդութիւն, և լիաձիր սիրտ. տաք, տաք, և տամուկ: Այս քու ձեռքդ կը պահանջէ որ ազատութենէ ետ քաշուիս, պահք պահես, և աղօթես, ապաշխարես և բարեպաշտական արարք գործես. ինչու որ նորատի քրտնալից սատանիկ մը կայ հոս, որ սովորաբար կ'ապստամբի. . . Բարի ձեռք մ'է, անկեղծ ձեռք մը:

Տեգ. — Արդարեւ կրնաք այդպէս ըսել, որովհետև այս ձեռքն էր, որ իմ սիրտս ձեզ նուիրեց:

Օրեկ. — Լիաձիր ձեռք մը: Հին ժամանակները սիրտերն էին, որ կը տային ձեռքերը. իսկ մեր նոր սերունդը իւր ձեռքը կը տայ բայց ոչ սիրտը:

Տեգ. — Ասոր վրայ ոչինչ կրնամ խօսիլ : Գանք հիմա ձեր խոստման :

Օրեղ. — Ի՞նչ խոստում, հաւիկ :

Տեգ. — Լուր զրկեցի Քասիւղին, որ դայ ձեզի հետ խօսի :

Օրեղ. — Սաստիկ գէշ հարբուխ մ'ունիմ, որ զիս կը նեղէ. տո՛ւր ինձի քու թաշկինակդ :

Տեգ. — Աւասիկ, տէր իմ :

Օրեղ. — Այն՝ զոր քեզի տուի :

Տեգ. — Քովս չէ :

Օրեղ. — Քովդ չէ՞ :

Տեգ. — Ոչ, արդարև, տէր իմ :

Օրեղ. — Պակասութիւն մ'է այդ. այն թաշկինակը եգիպտացուհի մը տուաւ իմ մօրս. վըհուկ մ'էր, և գողցես մարդիկներու միտքը կրնար կարգաւ : Նա ըսած էր, թէ որչափ որ նոյն թաշկինակը պահէր, սիրելի պիտի ընծայէր զինքը, և բոլորովին իւր սիրոյն պիտի ենթարկէր իմ հայրս. բայց եթէ կորսնցնէր զայն, կամ ուրիշի մը ընծայէր, հայրս զգուանօք պիտի նայէր անոր վրայ, և իւր սիրտը նոր հաճոյքներու հետամուտ պիտի լինէր : Մայրս մեռնելու ժամանակ ինձի տուաւ նոյն թաշկինակը, և յանձնարարեց, որ երբ բազմը բերէ, և ամուսնանամ, կնոջս տամ զայն : Այսպէս իսկ ըրի, ուստի հոգ տար ագոր և աչքիդ լոյսին պէս նայէ : Կորսնցնել զայն, կամ ուրիշի մը տալ մեծ աղէտք մը պիտի լինէր, քանզի ոչինչ կըրնար անոր հաւասարիլ :

Տեգ. — Կարելի՞ է միթէ :

Օրեղ. — Ճշմարիտ է. դիւթական բան մը կայ անոր հիւսուածքին մէջ : Սիպիլ մը՝ որ աշխարհիս վրայ երկու հարիւր անգամ արևին բոլորիլը տեսած էր, իւր մարդարէական մուշգնութեան մէջ հիւսած էր այս ձեռագործը : — Շերամները՝ որ մետաքսը շինեցին, նուիրագործեալ էին, և ներկուած մոմացած կոյսերու սրտերով, զոր հմուտ արուեստագործը հայթայթած էր :

Տեգ. — Ստուգի՛ւ. ճշմարիտ է :

Օրեղ. — Բացարձակապէս ճշմարիտ. ուստի լաւ հոգ տա՛ր անոր :

Տեգ. — Երանի՛ թէ երբէք տեսած չլինէի զայն :

Օրեղ. — Հա՛, ի՞նչ պատճառաւ :

Տեգ. — Ինչո՞ւ համար ինձի հետ այսպէս խիտ և կոշտաբար կը խօսիք :

Օրեղ. — Կորսուեցա՞ւ արդեօք, անհետացա՞ւ. խօսէ՛, անյա՞յտ եղաւ :

Տեգ. — Երկինք օրհնեն մեզի :

Օրեղ. — Ի՞նչ կ'ըսես :

Տեգ. — Կորսուած չէ այն. բայց ի՞նչ, եթէ այդպէս լինէր :

Օրեղ. — Հա՛ :

Տեգ. — Կ'ըսեմ, թէ կորսուած չէ :

Օրեղ. — Գնա՛, բե՛ր ուրեմն, որ տեսնեմ :

Տեգ. — Այո՛, կրնամ, պարոն, բայց ոչ հիմա : Այս՝ վարպետութիւն մ'է իմ խնդիրս չկատա

րելու համար: Կ'աղաչեմ, թողէք որ Քասիօն
իւր պաշտօնին վերականչուի:

Օրէջ. — Գնա՛, բե՛ր թաշկինակը. միտքս կը
յուզուի:

Տեգ. — Հաւատտի եղի՛ք, որ անկէ աւելի
կարող մէկը երբէք չպիտի գտնէք:

Օրէջ. — Թաշկինակը:

Տեգ. — Կ'աղաչեմ, Քասիօյի վրայ խօսեցէ՛ք
ինձի:

Օրէջ. — Թաշկինակը:

Տեգ. — Մարդ մը՝ որ իւր բաղդը միշտ ձեր
բարեկամութեան վրայ հիմնած էր. և ձեզի
հետ վտանգներու մասնակցած:

Օրէջ. — Թաշկինակը:

Տեգ. — Ստուգիւ մեղադրելի էք:

Օրէջ. — Կորսուէ՛ ասկից:

(Կը մեկնի Օրէջոյ:)

Էմիլ. — Այս մարդը միթէ նախանձու չէ՞:

Տեգ. — Երբէք զինքն այսպէս տեսած չէի
առաջ: Ստուգիւ այս թաշկինակին մէջ հրաշա-
լիք մը պէտք է լինի. խիստ շատ դժբաղդ եմ
զայն կորսնցնելու համար:

Էմիլ. — Մէկ կամ երկու տարի բաւական
չէ մարդու մը՝ ինքզինքը ճանչցնելու համար:
Մարդիկ միայն ստամոքսներ են, և մենք կե-
րակուրներ. կ'ուտեն մեզի անյազաբար, և երբ
կը յագեան, դուրս կը տան: — Տեսէ՛ք Քասիօն
և ամուսինս, որ կը գան:

Կը մտնեն Եակօ և Քասիօ:

Եակօ — Ուրիշ միջոց չկայ, նա պէտք է որ
ընէ. և ահա ինչ բարեբաղդ հանդիպում. գնա՛,
և թախանձէ՛ զինքը:

Տեգ. — Ի՞նչպէս էք, սիրելի Քասիօ, ի՞նչ
լուր:

Քաս. — Տիկին, միշտ իմ առաջին խնդիրս.
կ'աղաչեմ այնպէս ըրէ՛ք, որ ձեր առաքինասէր
միջնորդութեամբ նորէն կենդանութիւն առ-
նում, իւր բարեկամութիւնը շահելով, քանզի
հողուոյս բոլոր անձնուիրութեամբը կը յարգեմ
զինքը: Ո՛հ, ի՛նչ յապաղում. եթէ իմ յանցանքս
այնչափ մահացու էր, որ իմ անցեալ ծառայու-
թիւններս, իմ կրած կսկիծներս, և ապագային
համար ըրած որոշումներս չեն կարող վերստին
շահիլ իւր բարեկամութիւնը, գոնէ գիտնամ,
և այս ինձի համար նպաստաւոր պիտի լինի:
Այսպէս բռնի գոհունակութեամբ պիտի շատա-
նամ, և ուրիշ ասպարէզի մը մէջ նետուելով՝
բաղդին գթութեանը պիտի ապաւինիմ:

Տեգ. — Աւա՛ղ, երիցս ազնիւ Քասիօ, իմ
բարեստութիւնս անլսելի է այժմ. իմ տէրս
չէ իմ տէրս. և չպիտի ճանչնայի զինքը, եթէ
իւր դէմքը ևս իւր բնաւորութեան պէս փոխ-
ուած լինէր: Թող սուրբ հոգիները պաշտպա-
նեն զիս, թէ ես ի՛նչպէս ջերմօրէն քու դատդ
պաշտպանեցի. և իւր տհաճութեանն արժանա-
ցայ իմ աղատ խօսելովս: Պէտք է որ ժամա-
նակ մը համբերես. ինչ որ կրնամ ընել պիտի
ընեմ. և աւելի ևս պիտի ընեմ, քան ինչ որ

ինծի համար պիտի համարձակէի : Թող այս բաւական լինի քեզի համար :

Եսկօ — Իմ տէրս բարկացած է միթէ :

Էմիլյո. — Ճիշդ հիմա ասկից մեկնեցաւ, և սատուգիւ տարօրինակ յուզման մէջ :

Եսկօ — Միթէ նա կրնա՞յ բարկանալ : Տեսայ թնդանօթը, որ իւր զօրքերու շարքը օղը կը հանէր, և սատանայի մը պէս բուն իսկ իւր եղբայրը իւր բազուկներէն կը կորզէր : — Կարեւրի՞ է որ նա բարկանայ : Ծանրակշիռ պատճառ մը կայ ուրեմն. զինքը գտնելու պիտի երթամ. անշուշտ պատճառ մը կայ, քանի որ բարկացած է :

Տէգ. — Կ'աղաչեմ այդէս ըրէ՛ :

(Կը մեկնի Եսկօ :)

Պետական գործ մը անշուշտ. — Վենետիկէն հասած լուրեր. կամ երևան ելած դաւադրութիւն մի հոս Կիպրոսի մէջ՝ իւր խաղաղ միտքը վրդոված պիտի լինին. և այսպիսի պարագայի մէջ մարդկային բնութեան յատուկ է չնչին բաներու համար կուռիլ, թէև մեծ խնդիրներ զինք զբաղեցնեն : Այսպէս է միշտ. քանզի երբ մեր մտքը ցաւի, մեր միւս առողջ անդամներուն ևս կը հաղորդուի նոյն ցաւը : Ոչ, պէտք է որ խորհինք թէ մարդիկ աստուածներ չեն. և չենք կրնար սպասել անոնցմէ այն նուրբ փափկանկատութիւնը զոր սովորաբար կը ցուցնեն հարսանեաց օրը : — Լաւ մը սաստէ՛ զիս, էմիլիա, (իբր անվարժ զինուոր) իւր անաղնուու

թեան համար իմ հոգւոյս մէջ զինքը մեղադրելու համար. բայց հիմա կը դանեմ, որ վրկան հրապուրած էի, և նա յանիրաւի ամբաստանուած է :

Էմիլյո. — Տա՛ր երկինք, որ պետական գործերը լինէին պատճառ, ինչպէս դուք կը կարծէք, և ոչ թէ նախանձու գաղափար մը, կասկած մը ձեր նկատմամբ :

Տէգ. — Աւա՛ղ, ի՞նչ դժբաղդ օր պիտի լինէր : Իրեն երբէք պատճառ մը չտուի :

Էմիլյո. — Բայց նախանձ հոգիները չեն դոհանար այդպիսի պատասխանով. անոնք միշտ պատճառի մը համար չեն նախանձիր : Հասկա կը նախանձին, քանզի նախանձոտ են : Նախանձը հրէջ մ'է, ինքնին դոյացած և ինքնին ծնած :

Տէգ. — Ո՛հ, երկինք հեռացնէ այդ հրէջը Օթէլլօյի մտքէն :

Էմիլյո. — Ամէն, տիկին :

Տէգ. — Պիտի երթամ զինքը փնտռեմ : — Քասիօ, այս տեղուանքը շրջագայեցէ՛ք. եթէ բարեյօժար գտնեմ զինքը, ձեր խնդիրը պիտի առաջարկեմ, և ամէն ջանք ի գործ պիտի դրնեմ յաջողելու համար :

Քաս. — Խոնարհաբար շնորհակալ եմ ձեր շնորհափայլութենէ :

(Կը մեկնին Տէգսկոսու եւ Էմիլիա :)

Կը մտնէ Պիանքա :

Պիան. — Երկինք պահէ ձեզի, բարեկամ Քասիօ :

Քաւ. — Ի՞նչպէս եղաւ, որ դուրս ելաք: Ի՞նչպէս էք, ամենագեղեցիկդ Պիանքա: — Հաւատացէ՛ք, սէր իմ, ձեր տունը գալու վրայ էի:

Պիան. — Եւ ես ձեր բնակարանը պիտի երթայի, Քասիօ: — Ինչպէ՞ս, շաբաթ մը հեռու մնա՛լ, եօթն օր, և եօթը գիշե՛ր, քսան անգամ ութ ժամե՛ր: Եւ սիրահարի մը բացակայութեան ժամերը արեացոյցի ժամերէն հարիւր վաթսուն անգամ աւելի երկար են: Ո՛վ տա՜ ժանելի հաշի՛ւ:

Քաւ. — Ներեցէ՛ք ինձի, Պիանքա. վերջերս կապարեայ մտածումներ կը ճնշէին զիս. բայց երբ աւելի ազատ ժամանակ ունենամ, լիուրի պիտի վճարեմ ձեզի այս երկար բացակայութեանս փոխարէնը:

(Անոր կը տայ Տեգսեւօնայի քաշկիւնակը:)

Սիրելի Պիանքա, ասոր օրինակը առէ՛ք ինձի համար:

Պիան. — Ո՛հ, Քասիօ, ուսկի՞ց գտար ասիկա. նոր բարեկամուհիի մը ընծան պէտք է լինի այն. հիմա կը հասկնամ քու բացակայութեանդ պատճառը. գործը հոս հասաւ, այնպէս չէ՞, լաւ, լաւ:

Քաւ. — Կին դու, քու գծուծ ենթադրութիւններդ սատանային ակռային մէջ նետէ՛, ուսկից առած ես զանոնք: Կը նախանձիս խորհելով, թէ սիրուհիէ մը իբրև յիշատակ ինձ տրուած լինի այն. ոչ, ստուգիւ ոչ, Պիանքա:

Պիան. — Որո՞ւ է ուրեմն:

Քաւ. — Չգիտեմ, սիրելիդ իմ. սենեակիս մէջ գտայ զայն. բանուածքը շատ սիրեցի. և ինձմէ նոյնը պահանջուելէ առաջ, (ինչպէս որ շատ հաւանական է, որ այսպէս պիտի լինի,) կը փախաքէի օրինակել տալ զայն. ա՛ռ ուրեմն, և ըսածիս պէս ըրէ. և առ այժմ թող զիս:

Պիան. — Թողո՞ւլ քեզի՛. ի՞նչ պատճառաւ:

Քաւ. — Չօրավարը կ'սպասեմ հոս, և փափաքելի յանձնարարութիւն մը չէ, երբ զիս կընոյ՛ մը ընկերութեան մէջ գտնէ:

Պիան. — Ինչո՞ւ համար, կը խնդրեմ:

Քաւ. — Ոչ թէ քեզի չեմ սիրեր:

Պիան. — Բայց թէ զիս չես սիրեր. կ'աղաչեմ քանի մը քայլ ինձի ընկերացի՛ր. և ըսէ՛, թէ արդեօք այս գիշեր կանուխ պիտի տեսնե՞մ քեզի:

Քաւ. — Շատ հեռու քեզի չեմ կրնար ընկերանալ, ինչու որ հոս կ'սպասեմ զինքը. բայց շուտով պիտի տեսնեմ քեզի:

Պիան. — Շատ լաւ, պարագայից պէտք է որ համակերպիմ:

(Կը մեկնի:)

(Վերջ Գ. Արարուածի:)

ԱՐԱՐՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա .

Դղեակին առջև :

Կը մտնեն Օթէլլօ, և Եակօ :

Եակօ — Այսպէս կը կարծէ՞ք :

Օրթը. — Կարծե՞լ այսպէս, Եակօ :

Եակօ — Գաղտնի համբոյր մը առնուլ :

Օրթը. — Ապօրէն համբոյր մը :

Եակօ — Կամ մերկ՝ անկողնոյ մէջ լինիլ իւր բարեկամին հետ, ժամ մը կամ աւելի՝ առանց գէշ խորհուրդ մ'ունենալո՞ւ :

Օրթը. — Մերկ, անկողնոյ մէջ, Եակօ, և գէշ դիտաւորութիւն չունենա՞լ. այս կեղծաւորութիւն մ'է սատանայի դէմ : Անոնք որ բարի դիտաւորութեամբ այսպէս կ'ընեն, սատանան անոնց առաքինութիւնը կը փորձէ, և իրենք երկինքը կը փորձեն :

Եակօ — Այսպէս բան մը չեն ըներ, ներելի յանցանք մ'է : Բայց երբ կնոջս թաշկինակ մը կը տամ

Օրթը. — Ի՞նչ կը հետեցնես ադկէ :

Եսկօ — Թէ նոյն թաշկինակը իւր սեփնա-
կանութիւնն է, տէր իմ, և իրենը լինելով՝ նա
կրնայ կարծեմ նուիրել որու որ ուզէ :

Օրեջ. — Նա իւր պատուոյ պահպանն է նաև .
կրնա՞յ տալ զայն :

Եսկօ — Իւր պատիւը անտեսանելի էու-
թիւն մ'է : Շատ կիներ զայն ունենալ կը ձևա-
ցընեն առանց զայն ունենալու :— Բայց թաշկի-
նակին համար . . . :

Օրեջ. — Երկինք վկայ, յօժարակամ պիտի
մոռնայի զայն . դուն ըսիր . — ո՛հ, յիշողութեանս
վրայ կ'անդրադառնայ այս, ինչպէս չարագու-
շակ ազուաւը վարակեալ տան մը վրայ . — դուն
ըսիր, թէ նա իմ թաշկինակս ունէր :

Եսկօ — Այո՛, ազկէ ի՞նչ կը հետևի :

Օրեջ. — Ուրեմն այդ աւելի ծանր նշանա-
կութիւն ունի :

Եսկօ — Ի՞նչ արդեօք. եթէ ըսէի, թէ տե-
սայ զինքը որ ձեզի կը թշնամանէր. կամ լսե-
ցի, որ կ'ըսէր թէ կան աշխարհիս մէջ այնպիսի
անպիտաններ որ իրենց ձանձրացուցիչ վարմուն-
քով, կամ սիրուհիի մը ինքնակամ քմահաճոյ-
քի հետևանք՝ կին մը խտրելէ ետքը, անար-
դել կը շաղկրատեն :

Օրեջ. — Բան մը ըսա՞ւ միթէ :

Եսկօ — Ըսաւ, տէր իմ, բայց հաւատտի ե-
զի՛ք, ոչինչ քան ինչ որ նա պատրաստ է երդ-
մամբ ուրանալու :

Օրեջ. — Ի՞նչ ըսաւ :

Եսկօ — Սաուգապէս, թէ նա ըրաւ . — չգի-
տեմ ի՞նչ ըրաւ :

Օրեջ. — Ի՞նչ, ի՞նչ :

Եսկօ — Մուտ գտաւ :

Օրեջ. — Անո՞ր քով :

Եսկօ — Անոր քով, կամ անոր մօտ . ինչ-
պէս որ կ'ուզէք :

Օրեջ. — Մուտ գտնել անոր քով, կամ ա-
նոր մօտ, կամ անոր անկողնոյ մէջ . ա՛հ,
սոսկալի բան . . . — թաշկինակ . — խոստովանու-
թիւն — թաշկինակ :— Խոստովանցնել, և յետո՛վ
չուանը վիզը անցունել :— Ոչ . նախ չուանը վի-
զը անցունել, յետոյ խոստովանցնել :— Այս խոր-
հաւրդը զիս կը զարհուրեցնէ : Բնութիւնը այսօ-
րինակ բուռն կիրքով մը չպիտի յուզուէր ա-
ռանց հզօր պատճառի մը :— Բառեր չեն, որ զիս
կը ցնցեն այսպէս :— Բո՛ւհ . — Քիթեր, ականջ-
ներ, շրթունքներ . . . կարելի՞ բան է :— Խոս-
տովանութիւն : — Թաշկինակ . — ով սատանայ :

(Գեթիս կ'իյնայ եւ կը մտի :)

Եսկօ — Ա՛հ, գործէ՛, իմ զեզս, գործէ՛ :
Այսպէս դիւրահաւան յիմարները ծուղակի մէջ
կ'իյնան . և շատ պատուաւոր և առաքինի կի-
ներ բողբոլին անմեղ՝ եպերանաց կ'ենթար-
կուին :—

Է՛հ, տէր իմ :

Կը մանէ Գասիօ :

Տէր իմ, տէր իմ, Օթէլլօ: — Ի՞նչ լուր
Քասիօ:

Քաս. — Ի՞նչ կայ, ի՞նչ պատահեցաւ:

Եակօ — Իմ տէրս Օթէլլօ լուսնոտութեան
մէջ ինկաւ. այս երկրորդ հարուածն է. երէկ
ևս հարուած մ'ունեցաւ:

Քաս. — Քունքերը շփեցէ՛ք:

Եակօ — Ո՛չ, թողէք զինքը: Թմբբութիւնը
պէտք է որ իւր հանդարտ ընթացքն ունե-
նայ, եթէ ոչ բերանը կը փրփրի, և երթալով
վայրագ յիմարութեան մէջ կ'իյնայ: — Տեսէ՛ք,
չարժեւու վրայ է. պահ մը հեռացէ՛ք, նա ինք-
զինքին պիտի գայ. և երբ մեկնի, կ'ուղէի շատ
կարևոր գործի մը վրայ ձեզի հետ խօսիլ:

(Կը մեկնի Քասիօ:)

Ի՞նչպէս էք, զորավար, գլուխնիդ վիրա-
ւորեցի՞ք արդեօք:

Օրեղ. — Կը ծիծաղի՞ս իմ վրայ:

Եակօ — Ե՞ս ծիծաղիմ ձեր վրայ: Ո՛չ, յա-
նուն երկնից. կը փափաքէի մի միայն, որ իբ-
րև մարդ կարենայիք տանիլ ձեր ճակատագրին:

Օրեղ. — Եղջիւրներ կրող մարդ մը հրէշ
մ'է, և անասուն:

Եակօ — Բազմամարդ քաղաքի մը մէջ շատ
անասուններ կան ուրեմն, և շատ քաղաքակիրթ
հրէշներ:

Օրեղ. — Խոստովանեցա՞ւ ըրածը:

Եակօ — Սիրելի տէր իմ, մարդ եղի՛ք.
խորհեցէ՛ք թէ ամէն մօրուքաւոր մարդ՝ որ ա-

մուսնութեան լուծին տակն է, ձեզի բաղդա-
կից է:

Միլիօններով կը հաշուին անոնք՝ որ դարչ
անկողնոյ մէջ կ'անցունեն գիշերը, և կը յան-
դրգնին երգնուլ, թէ իրենց սեփհականու-
թիւնն է. ձեր վիճակը լաւագոյն է: Ո՛հ, դը-
ժոխային հեգնութիւն, դիւական գերագոյն
ծաղրանք մ'է, համբուրել անպարկեշտ կին մը
ապահով անկողնոյ մը մէջ, և ենթադրել թէ
անարատ է ա՛յն: Ոչ, պէտք է որ ամէն ինչ
գիտնամ. և գիտնալով թէ ինչ եմ, գիտեմ թէ
ինչ պիտի ընեմ:

Օրեղ. — Ո՛հ, դուն իրաւունք ունիս. ստոյգ
է այս:

Եակօ — Պահ մը մէկդի կեցի՛ք. համբե-
րութեան սահմանէն դուրս մի՛ ելնէք: Երբ հոս
կը գտնուէիք ցաւերու տակ ճնշուած, (բան մը՝
որ անվայել է ձեզի պէս մարդու մը համար,)
Քասիօն եկաւ, և ճամբեցի զինքը, ձեր մարե-
ւու նկատմամբ չնչին պատճառ մը մէջ բերելով.
Ինդրեցի իրմէ, որ շուտով ետ դառնայ, հոս
ինձի հետ խօսելու համար. և այսպէս խոստա-
ցաւ: Ուստի պահուեցէ՛ք այստեղ, և դիտե-
ցէ՛ք իւր դիմագիծին վրայ նկարուած ծամա-
ձուութիւնները, հեգնութիւնները, և արհամա-
րանաց նշանները. ինչու որ իրեն նորէն կրկնել
պիտի տամ բոլոր պատմութիւնը. — ո՛ւր, ի՞նչ-
պէս. քանի՞ անգամ, որչա՞փ ժամանակէ ի վեր,
և ե՞րբ կ'ննջէ հետ գտնուած է, և նորէն պի-

տի գանուի. կ'ըսեմ մի միայն որ իւր շարժումն ներք դիտէ.ք: Ի՛նչ ընենք, համբերութի՛ւն, եթէ ոչ, պիտի ըսեմ թէ բոլորովին բարկացող մէկն է.ք, և մարդու յատկութիւններէ զուրկ:

Օրէջ. — Կը լսե՞ս, Եակօ, պիտի աշխատիմ խիստ համբերատար լինել, բայց միանգամայն, (կը լսե՞ս) խիստ արիւննուշտ . . . :

Եակօ — Այդ գէշ չէ. բայց ամէն բանի ժամանակ տուէ՛ք:— Խնդրեմ, հեռացի՛ք ասկից:

(Օրէջո կը հեռանայ եւ կը պահուրճի:)

Հիմա Քասիօն պիտի հարցափորձեմ Պիանքայի նկատմամբ, — հասարակ կին մը, որ իւր գգուանքը ծախելով՝ հաց և զդետտ կը գնէ. այնպիսի արարած մը՝ որ Քասիօյի վրայ կը խենթենայ, ինչպէս որ պոռնիկի մը տխուր բաժինն է խաբել շատերը, և խաբուիլ մէկէ մը: Երբ Պիանքային խօսքը ընես իրեն, նա բարձրաձայն կը ծիծաղի: Աւասիկ կը գայ:

Նորէն կը մտնէ Քասիօ:

Երբ նա սկսի ժպտիլ, Օթէլլօ խենթ պիտի գառնայ, և իւր կոյր նախանձը բոլորովին պիտի խեղաթիւրէ խեղճ Քասիօյի ժպտները, ձեւերը, և թեթև վարմունքը:—

Ի՛նչպէս էք, տեղակալ:

Քաս. — Շատ աւելի գէշ, բանի որ տեղակալի տիտղոսը կը տաք ինձի, որմէ զրկուիլս զիս կ'սպաննէ:

Եակօ — Թախանձանօք Տէզտէմօնային դե-

մեցէ՛ք, և հաւատօրի եղի՛ք որ կը յաջողիք:

(Յաճ ճայնով) Եթէ այս գործը Պիանքայէն կախեալ լինէր, ի՛նչպէս շուտով վերջ մը պիտի գտնէր:

Քաս. — Աւա՛ղ, խեղճ արարա՛ծը:

Օրէջ. — (Մեկուսի) Տեսէ՛ք, ինչպէս սրտէն կը ծիծաղի:

Եակօ — Երբէք ճանչցած չեմ կին մը, որ մարդու մը հետ այսպէս սիրահարի:

Քաս. — Աւա՛ղ, անպիտան ջրդիկը, կը հաւատամ արդարև թէ զիս կը սիրէ:

Օրէջ. — (Մեկուսի) Թեթևապէս կ'ուրանայ, և կը ծիծաղի:

Եակօ — Կը լսէ՞ք. Քասիօ:

Օրէջ. — (Մեկուսի) Այժմ զինքը կը յողնեցնէ նոյն բանը կրկնելու համար: Շարունակէ՛, շատ լաւ, շատ լաւ:

Եակօ — Նա այնպէս կը հասկցնէ, թէ իրեն հետ պիտի ամուսնանաք. այսպիսի դիտաւորութիւն մ'ունի՞ք:

Քաս. — Հա՛, հա՛, հա՛:

Օրէջ. — (Մեկուսի) Դուն կը յաղթանակես, Հռովմէացի, կը յաղթանակես:

Քաս. — Իրեն հետ ամուսնանա՞մ. ի՛նչ, վողոցի կնոջ մը հետ: Կը խնդրեմ, քիչ մը դուրս ունեցիր իմ իմացականութեանս համար, և այնչափ հիւանդ մի՛ համարիր զայն: Հա՛, հա՛, հա՛:

Օրէջ. — (Մեկուսի) Այսպէս, այսպէս, այս-

պէս . կը ծիծաղին անոնք՝ որ կը շահին :

Եակօ — Ստուգիւ, այնպէս կ'ըսեն թէ պիտի ամուսնանաք անոր հետ :

Քաս. — Կ'աղաչեմ քեզի, ստոյգ ըսէ՛ :

Եակօ — Ապիրատ մ'եմ, եթէ այդպէս չէ :

Օրեղ. — (Մեկուսի) Միթէ իմ օրերս համբեցի՞ր : Լաւ :

Քաս. — Ատնք կապիկի ծաղրաբանութիւններ են. նա համոզուած է իւր սէրէն, և ինքնասիրութենէ ներշնչեալ, և ոչ իմ խոստմունքէս, թէ պիտի ամուսնանամ իրեն հետ :

Օրեղ. — (Մեկուսի) Եակօն ինծի նշան կ'ընէ. Քասիօ կ'սկսի հիմա իւր պատմութիւնը :

Քաս. — Ճիշդ հիմա հոս էր նա. ամէն ուրեք զիս կը հալածէ : Միւս օր ծովեզերքը նստարանի մը վրայ մի քանի վենետիկցիներու հետ կը խօսէի. յանկարծ այս խենթը վրայ կը հասնի, և վիզս կը նետուի այսպէս :

Օրեղ. — (Մեկուսի) Պօռալով, ո՛վ իմ սիրելի Քասիօս : Իւր ձեւերն այսպէս կը ցուցնեն :

Քաս. — Այսպէս վիզէս կը կախուի, կը փակի, կը լայ, կը հրէ, կը քաշէ . հա՛, հա՛, հա՛ . . . (Ցած ձայնիւ կը խօսի Եակօյիմն :)

Օրեղ. — (Մեկուսի) Հիմա անոր կը պատմէ, թէ ի՞նչպէս նա քաշքշեց, և իմ սենեակս տաբալ զինքը :— Ո՛հ, քու ցռուկդ կը տեսնեմ, բայց ոչ շունը՝ որուն պիտի նետեմ զայն .

Քաս. — Այո՛, պէտք է որ թողում զինքը :

Եակօ — Իմ առջևս. տեսէք, աւասիկ նա կը գայ :

Կը մտնէ Պիանքա :

Քաս. — Ահա ուրիշ կուզ մը, բայց լաւ մը հոտաւետեալ : (Պիանքայիմն) Ի՞նչ կ'իմանաս զիս այսպէս հալածելով :

Պիանք. — Թող սատանան և իւր մայրը հալածեն քեզի : Ի՞նչ ըսել ուզեցիր երբ պահ մ'առաջ այս թաշկինակը ինծի տուիր . խենթութիւն ըրի զայն առնլով. և պէտք է որ օրինակեմ զայն, այնպէս չէ՞ : Ի՞նչ հաւանականութիւն, որ քու սենեակիդ մէջ գտած լինիս, և չգիտնաս, թէ ո՞վ ձգեց հո՞ն : Ձրթիկ աղջկան մը պարգևն է այն . և ես պէտք եմ օրինակե՞լ : Ետ առ զայն, և քու սիրուհւոյդ տո՛ւր, ուսկից որ առիր, ես չեմ ուզեր օրինակել :

Քաս. — Ի՞նչպէս, անուշիկ Պիանքա, ի՞նչպէս, ի՞նչպէս :

Օրեղ. — (Մեկուսի) Երկինք վկայ, այդ իմ թաշկինակս պէտք է լինի :

Պիանք. — Եթէ կ'ուզես գալ ինծի հետ ընթրել այս գիշեր, բարի . իսկ եթէ չես ուզեր, եկո՛ւր երբ յօժարութիւն ունիս :

(Կը մեկնի :)

Եակօ — Ետեէն գնա՛, ետեէն գնա՛ :

Քաս. — Ստուգիւ պէտք է որ երթամ, եթէ ոչ փողօցին մէջ պիտի շաղակրատէ :

Եակօ — Անոր հետ պիտի ընթրե՞ս :

Քաս. — Այո՛, այնպէս է դիտաւորութիւնս :

Եակօ — Ուրեմն շատ հաւանական է, որ քեզի տեսնելու գամ. քանզի քեզի հետ խօսելու պէտք ունիմ :

Քաս. — Կը խնդրեմ որ գաս, այնպէս չէ՞ :

Եակօ — Գնա՛, այլ ևս մի՛ խօսիր :

(Կը մեկնի Քասիօ :)

Օրէշ. — Ի՞նչպէս պիտի սպաննեմ զինքը, Եակօ :

Եակօ — Նշմարեցի՞ք, ի՞նչպէս կը ծիծաղէր իւր ամօթալի վարմունքին վրայ :

Օրէշ. — Ա՛հ, Եակօ :

Եակօ — Եւ տեսա՞ք թաշկինակը :

Օրէշ. — Իմ թաշկինակս էր :

Եակօ — Կ'երդնում թէ ձերն էր. և տեսա՞ք ի՞նչ նուազ յարդանօք կը խօսէր այդ յիմար կնոջ — ձեր ամուսնոյն վրայ. որ այդ թաշկինակը անոր տուաւ, և նա իւր տարփածուին :

Օրէշ. — Պիտի փափաքէի ինն տարի շարունակ սպաննել զինքը : — Սքանչելի կի՛ն մը, գեղանի կի՛ն մը, պաշտելի կի՛ն մը :

Եակօ — Ոչ, պէտք է որ մոռնաք զայդ :

Օրէշ. — Այո՛, թող փտի, կորսուի, և անիծուի այս գիշեր. քանզի չպիտի ապրի : Ոչ, սիրտս քար դարձած է. կը զարնեմ անոր, և այն իմ ձեռքիս կը վրասէ : Ո՛հ, աշխարհս տեսած չէ երբէք անոր նման պաշտելի արարած մը. նա արժանի էր կայսեր մը կողակից լինելու, և անոր հրամայելու :

Եակօ — Ոչ, ձեր միտքն այդ չէ :

Օրէշ. — Կախուելու արժանի անիծեալը. կ'ըսեմ միայն ինչ որ է նա. ասնեգործութեան համար այնչափ նրբաճաշակ, սքանչելի երաժիշտ : Ո՛հ, նա իւր երգովը մինչև իսկ արջի մը վայրագութիւնը պիտի ամոքէր. և ի՛նչ բարձր լիմացականութի՛ւն, և ի՛նչ ճոխ երեակայութի՛ւն :

Եակօ — Եւ այս ամենուն համար աւելի յանցապարտ է նա :

Օրէշ. — Ո՛հ, հազա՛ր, հազար անգամ աւելի՛ : — Եւ ասկէ զատ ի՛նչ սիրուն և ազնիւ բնաւորութեամբ օժտուա՛ծ :

Եակօ — Այո՛, շատ սիրուն :

Օրէշ. — Այո՛, ստոյգ է այդ. բայց և այնպէս ի՛նչ դժբաղդութիւն, Եակօ՞ : — Ո՛հ, Եակօ, ի՛նչ դժբաղդութի՛ւն :

Եակօ — Եթէ անոր ապիրատութենէն այդչափ կ'զգածուիք, վկայագրով արտօնեցէք իրեն չարիք գործելու. քանզի եթէ այդ ձեզի չդպչեր, ուրիշ մը ոչինչ կը վրասէ :

Օրէշ. — Պիտի բզկտեմ զինքը : — Զիս կաւատ ընե՛լ :

Եակօ — Ո՛հ, ի՛նչ սոսկալի բա՛ն :

Օրէշ. — Իմ պաշտօնատարիս հե՛տ :

Եակօ — Աւելի սոսկալի :

Օրէշ. — Գնա՛, թոյն ծախու ա՛ւ, Եակօ. չեմ ուզեր իրմէ բացատրութիւն պահանջել այս գիշեր, զի մի՛ գուցէ իւր մարմինը և գեղեց-

կութիւնը նորէն իմ միտքս փոխեն : Այս գիշեր, Եակօ :

Եակօ — Թոյն մի՛ գործածէք, խեղդեցէ՛ք զինքը իւր անկողնոյն մէջ, այո՛, իւր պղծած անկողնոյն մէջ :

Օրէջ. — Լաւ, լաւ. կը սիրեմ այդ արդարութիւնը. շատ լաւ :

Եակօ — Իսկ Քասիօյին դալով՝ այդ գործը ինձի յանձնեցէ՛ք. կէս գիշերուան մէջ կ'իմանաք անոր վրայ :

(Փողի մը ձայն ներսէն :)

Օրէջ. — Սքանչելի :— Ի՞նչ փողի ձայն է այս :

Եակօ — Պատգամաւորութիւն մ'անշուշտ վենետիկէն : Լօտովիքօն է, որ դուքսին կողմանէ կը գայ. և տեսէ՛ք, ձեր կինը իւր հետն է :

Կը մտնեն Լօտովիքօ, Տէգտէմօնա, և հետևորդք :

Լօս. — Աստուած պահէ զձեզ, քաջ զօրավար :

Օրէջ. — Բոլոր սրտովս, պարոն :

Լօս. — Դուքսը, և վենետիկի ծերակուտականները կ'ողջունեն ձեզի :

(Նախկին մը կը յանձնէ :)

Օրէջ. — Կը համբուրեմ անոնց բարձր հաճութեանց գործիքը :

(Կը բանայ նախկին և կը կարդայ :)

Տէգ. — Ի՞նչ լուր, սիրելի հօրեղբորդի իմ, Լօտովիքօ :

Եակօ — Շատ ուրախ եմ ձեզի տեսնելով, պարոն, բարի եկաք Կիպրոս :

Լօս. — Շնորհակալ եմ. ի՞նչպէս է տեղակալ Քասիօն :

Եակօ — Կ'ապրի, պարոն :

Տէգ. — Հօրեղբորդի իմ, անոր և իմ տիրոջ մէջտեղ անհաճոյ գժտութիւն մի տեղի ունեցաւ. բայց դուք ամէն ինչ լաւ պիտի կարգադրէք :

Օրէջ. — Վստահ էք ադոր վրայ :

Տէգ. — Տէ՛ր իմ :

Օրէջ. — (Կարդալով) Անշուշտ մի՛ շինիք գործարեղու, ինչպէս որ պիտի... :

Լօս. — (Տէգտէմօնային) Ձեզի մտադրութիւն չըրաւ. նամակովը զբաղած է :— Գժտութիւն մի կայ ամուսնոյդ, և Քասիօյի մէջ :

Տէգ. — Դժբաղդ գժտութիւն մի. ամէն միջոց 'ի գործ պիտի դնէի զանոնք հաշտեցնելու Քասիօյի նկատմամբ ունեցած բարեկամութեանս համար :

Օրէջ. — Հուր և ծծո՛ւմբ :

Տէգ. — Տէ՛ր իմ :

Օրէջ. — Խեղքդ գլո՛ւխդ է արդեօք :

Տէգ. — Ի՞նչ, միթէ բարկացած է :

Լօս. — Հաւանականաբար նամակը զինքը յուզած է. քանզի, ինչպէս կը կարծեմ, հրամայած են իրեն, որ վենետիկ դառնայ, Քասիօյի յանձնելով իւր կառավարութիւնը :

Տէգ. — Ո՛հ, որչա՛փ ուրախ եմ ասոր համար :

Օրէջ. — Յիրա՛ւի :

Տէգ. — Տէ՞ր իմ :

Օրէջ. — Ուրախ եմ տեսնելով որ խենթեցեր ես :

Տէգ. — Ի՞նչպէս, անուշիկ Օթէլլօ :

Օրէջ. — Սատանայ :

(Չարեկոյնի ակնուր :)

Տէգ. — Ադոր արժանի չէի :

Լօս. — Տէր իմ, այսպիսի բան մը չպիտի հաւատային երբէք Վինետիկի մէջ, եթէ երգնուի իսկ թէ աչքովս տեսայ զայն : Շատ սաստիկ է այն . ներում լսնդրեցէ՛ք իրմէ . տեսէ՛ք ի՞նչպէս կը լայ :

Օրէջ. — Ո՛վ սատանայ, սատանայ : — Եթէ կնոջ մ'արտօսը կարենար երկիրս բեղնաւորել, անոր մէն մի կաթիլը կոկորդիլոս պիտի դառնար : — Կորսուէ՛ առջե՛ս :

Տէգ. — Չպիտի կենամ ձեզի չբարկացնելու համար :

(Հեռանալով :)

Լօս. — Ստուգիւ, հնազանդ տիկին մի. — Կը լսնդրեմ ձեր մեծութենէ, ետ կանչեցէք զինքը :

Օրէջ. — Տիկինն :

Տէգ. — Տէ՞ր իմ :

Օրէջ. — (Լօսով իջօյիկն) Ի՞նչ կուղէք անորմէ, պարոն :

Լօս. — Ո՞վ, ե՞ս, տէր իմ :

Օրէջ. — Այո՛, ուղեցիք որ զինքը ետ կանչեմ. պարոն, նա կրնայ դառնալ, և դառնալ, և միանգամայն երթալ, և դառնալ նորէն, և կրնայ լալ, պարոն, լալ. հնազանդ է նա, ինչ-

պէս կ'ըսէք, — հնազանդ, — շատ հնազանդ : —

(Տէգսեմօնայիկն) Շարունակէ՛ քու հեծկըլտանքդ :

(Լօսով իջօյիկն) Այս նամակին դալով, պարոն : — Ո՛հ ի՞նչպէս իւր դերը գիտէ խաղալ : — Հրաման եկած է, որ Վինետիկ դառնամ : —

(Տէգսեմօնայիկն) Կորսուէ՛ դնա . պահ մը ետքը քեզի պիտի կանչեմ : —

(Լօսով իջօյիկն) Պարոն, պիտի հնազանդիմ անոնց հրամանին, և Վինետիկ պիտի դառնամ :

(Տէգսեմօնայիկն) Դուրս ելի՛ր, կորսուէ՛ դնա՛ :

(Կը հեռանայ Տէգսեմօնայիկն :)

Քասիօ ինծի պիտի յաջորդէ : Եւ — պարոն, — կ'ազաչեմ որ այս գիշեր մէկտեղ ընթրենք : — Բարի եկաք, պարոն ՚ի Կիպրոս : Նոխազներ և կապիկներ :

(Կը մեկնի :)

Լօս. — Ա՛յս է միթէ այն ազնիւ Մաւրը, որ մեր բոլոր Ծերակոյտը իւրեւ կատարելութիւն կը նկատէ : — Ա՛յս է միթէ այն ազնիւ հողին, զոր կիրքը չէր կրնար յուզել . և որուն անյողդողդ արիութիւնը ոչ դէպքերու գնդակը, և ոչ բազդին սլաքները կրնան հպիլ, կամ թափանցել :

Եակօ — Շատ փոխուած է :

Լօս. — Միտքը առողջ է, ուղեղը փլատուած չէ՛ :

Եակօ — Նա է, ինչ որ է . իմ դատողու-

Թիւնս չեմ ուզեր արտասանել: Եթէ չէ ինչ որ պէտք էր լինել. իցէ՛ թէ լինէր ինչ որ պէտք էր:

Լօճ. — Ի՞նչ. իւր կնոջը զարնե՛լ:

Եակօ — Ստուգիւ, այդ լաւ բան մը չէր. սակայն կ'ուզէի ապահով լինել թէ այդ պիտի լինէր ամենէն ծանր հարուածը:

Լօճ. — Միթէ իւր սովորութիւնն է այս. կամ Վենետիկէն եկած նամակներն են, որ իւր արեան վրայ աղգեցին, և այս սխալը գործել տուին:

Եակօ — Աւաղ, աւա՛ղ: պարկեշտ բան չպիտի լինէր իմ կողմանէ ըսել ինչ որ տեսայ և իմացայ: Դուք պիտի դիտէք, և իւր ընթացքէն պիտի իմանաք, այնպէս որ իմ խօսելուս հարկ չպիտի լինի: Հետեւեցէ՛ք իրեն, և դիտեցէ՛ք թէ ի՞նչպէս կը վարուի:

Լօճ. — Կը ցաւիմ, որ իւր վրայ սխալած եմ:
(Կը մեկնին:)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ.

Սենեակ մը դղեակին մէջ:

Կը մանեն Օթէլլօ, և Էմիլիա:

Օրէջ. — Բան մը չտեսա՞ր, ուրեմն:

Էմիլ. — Երբէք բան մը չլսեցի, և ոչ երբէք կասկածեցի:

Օրէջ. — Այո՛, տեսար Քասիօն և զինքը իրարու հետ:

Էմիլ. — Բայց պակաս բան մը չտեսայ, թէև իրարու մէջ արտասանուած մէն մի բառը կը լսէի:

Օրէջ. — Ի՞նչ, իրարու հետ երբէք չփոխուսացի՞ն:

Էմիլ. — Երբէք, տէր իմ:

Օրէջ. — Եւ ոչ իսկ քեզի հեռացուցին:

Էմիլ. — Երբէք:

Օրէջ. — Իւր հովահարը բերելու համար, կամ իւր ձեռնոցները, իւր դիմակը, կամ վերջապէս ոչինչ բան մը:

Էմիլ. — Երբէք, տէր իմ:

Օրէջ. — Զարմանալի բա՛ն:

Էմիլ. — Կը համարձակիմ երգնուլ, տէր իմ, թէ նա պարկեշտ է, հոգիս դրաւի կը դնեմ. եթէ հակառակը կը մտածէք, մէկդի ըրէ՛ք այդ խորհուրդը, որ ձեր սիրտը չարաչար կը խաբէ: Եթէ ապիրատ մէկը այսպիսի կասկած մը ձեր դիտոյն մէջ դրաւ, թող երկինք պատժէ զինքը օձին տրուած անէծքով: Քանզի եթէ նա չէ առաքինի, անարատ և հաւատարիմ, պիտի ըսեմ թէ երջանիկ մարդ չկայ աշխարհիս վրայ. ամենէն մաքուր կինը զրպարտութեան պէս աղտոտ է:

Օրէջ. — Ըսէ՛ իրեն, որ հոս դայ. — դնա՛: (Կը մեկնի Էմիլիա:)

Խօսք չպակսիր իրեն. բայց պարզ միջնորդութի մ'է, և ասկէ աւելի չկրնար խօսիլ. իսկ միւսը վարպետ պոռնիկ մ'է, որ վատ

գաղտնիքներ նիզի և բանալիի տակ ծածկած է. բայց և այնպէս կը ծնրագորէ, և կ'աղօթէ. այսպէս ընելը տեսայ :

Նորէն կը մտնէ Էմիլիա Տէգտէմօնայի հետ :

Տէգ. — Տէր իմ, ի՞նչ է ձեր կամքը :

Օրէշ. — Կ'աղաչեմ, հաւիկս, մօտեցի՛ր ինձի :

Տէգ. — Ի՞նչ է ձեր հաճութիւնը :

Օրէշ. — Տեսնեմ աչքերդ, ուղղակի երեսոնայէ՛ :

Տէգ. — Ի՞նչ սոսկալի քմահաճոյք մ'է այս :

Օրէշ. — (Էմիլիայի) Գու պաշտօնիդ բերմամբ առանձին ձգէ՛ տարվածուները, և դուռը վակէ՛. հաղա՛, կամ պօռա՛, հր՛ճ, եթէ մէկը վրայ գայ. քու արհե՛ստդ, քու արհե՛ստդ, օ՛ն, շտապէ՛ :

(Կը մեկնի Էմիլիա :)

Տէգ. — Ննրագիր կ'աղաչեմ, ի՞նչ կը նշանակեն այդ խօսքերը. խօսքերուդ մէջ կատաղութիւն մը կը տեսնեմ, բայց ըսածներդ չեմ հասկնար :

Օրէշ. — Ի՞նչ ես դուն :

Տէգ. — Գու կինդ, տէր իմ, քու առաքինի և հաւատարիմ կինդ :

Օրէշ. — Օ՛ն, երգուի՛ր ասոր համար, դու զբեզ գատապարտէ՛. զի մի՛ դուցէ երկնային հրեշտակի մը նմանելով՝ բուն իսկ սատանաները վախնան քեզի մօտենալու. հետևաբար երկնցս անիծուած եղի՛ր. երգուի՛ր թէ առաքինի ես :

Տէգ. — Երկինք զիտէ արդարեւ :

Օրէշ. — Երկինք գիտէ արդարեւ, թէ դուն գոթութի պէս կեղծ ես :

Տէգ. — Որո՞ւ գէմ, տէր իմ, որո՞ւ հետ. ի՞նչպէս կեղծ եմ :

Օրէշ. — Ո՛վ Տէգտէմօնա՛, կորսուէ՛, կորսուէ՛, կորսուէ՛ :

Տէգ. — Աւա՛ղ, դառնալէտ օ՛ր. — Ինչո՞ւ համար կը լաք. Միթէ ե՞ս եմ այս արցունքներուն շարժառիթը, տէր իմ. Թերևս կը կասկածիք թէ հայրս պատճառ եղած լինի ձեր ետ կանչուելուն, սակայն յանցանքը իմ վրաս մի՛ գնէ՛ք. եթէ զինքը կորուսիք, ա՛հ ես ևս կորուսի զինքը :

Օրէշ. — Եթէ երկինք կամենար վիշտերով զիս փորձել. եթէ իմ մերկ գլխոյս վրայ ամէն տեսակ շարիք և ամօթ տեղար. եթէ մինչև իմ շրթունքներս զիս աղքատութեան մէջ խորատուղէր, և գերութեան դատապարտէր զիս և իմ թանկագին յոյսերս. պիտի գտնէի իմ հոգւոյս մէկ խորշը համբերութեան կաթիլ մը. բայց աւա՛ղ, ընել զիս արհամարհանաց առարկայ, իւր անշարժ մատը դէպ ՚ի ինձ ուղղելով, — Օ՛հ, օ՛հ : Ասոր ևս պիտի կարենայի համբերել, լաւ, շատ լաւ : Սակայն հօն՝ ուր ես իմ սիրաս մթերեցի, հօն կամ պէտք է որ ապրիմ, կամ կեանքս կորսնցնեմ. բայց աղբիւրը՝ ուսկից իմ գոյութիւնս կը հոսի, կամ եթէ ոչ կը ցամքի. կողբատուիլ ազկէ՛. կամ ջրամբարի

մը պէս պահել զայն, որպէսզի գարչ գորտեր հոն զուգաւորին, և ճարակին... — Ո՛հ, փոխէ՛ երեսիդ գոյնը, համբերութիւն, դու վարդ շուրթերով նորատի քերովբէ. և հոն դժոխքի խոժոռ կերպարանքն ա՛ռ:

Տէգ. — Կը յուսամ, որ իմ ազնիւ տէրս զիս առաքինի կը նկատէ:

Օրէջ. — Ո՛հ, այո՛, սպանդանոցի ճանճերուն պէս, սրոնք բղղելով իսկ կը զուգաւորին: Ո՛վ դու ծաղիկ վայրենի, որ այնչափ սքանչելապէս գեղեցիկ ես, և այնչափ անուշ կը բուրես, որ քեզմով միտքերը կը յուզուին, — փափաքելի էր որ երբէք ծնած չլինէիր:

Տէգ. — Աւա՛ղ, ի՞նչ մեղք գործեցի անպիտար:

Օրէջ. — Ի՞նչ. միթէ այս սպիտակ թուզթը, այս գեղեցիկ հոյակապ գիրքը, շինուած են վրան «Պոռնիկ» գրելու համար: Ի՞նչ մեղք գործեցիր, ի՞նչ մեղք գործեցիր, ո՛վ դու հասարակաց աղջիկ. այտերս հնոց պիտի դառնային, և համեստութիւնը պիտի այրէր մօխիւր լինէր, եթէ խօսէի ինչ որ գործեցիր դուն: — Ի՞նչ մեղք գործեցիր: Երկինք իւր քիթը կը գոցէ, և լուսինն իւր աչքերը կը խփէ, և պագշտ քամին, որ ամէն հանգիպածը կը համբուրէ, երկրիս խորերը կը մտնէ կը պահուրտի, և չուզեր լուսիլ զայն: Ի՞նչ մեղք գործեցիր, անամօթ պոռնիկ գո՛ւ:

Տէգ. — Յանուն երկնից զիս կը թշնամանէք:

Օրէջ. — Մի՞թէ դու պոռնիկ չե՞ս:

Տէգ. — Ո՛չ. ինչպէս ճշմարիտ է, որ քրիստոնեայ եմ: Եթէ իմ ամուսնոյս համար զիս անարատ պահելը հեռի ամէն ապօրինաւոր հըպումէ պոռնիկ լինել չէ. — չեմ ես այնպիսի մէկը:

Օրէջ. — Ինչպէ՞ս. դուն պոռնիկ չե՞ս:

Տէգ. — Ո՛չ, կ'երդնում իմ փրկութեանս վրայ:

Օրէջ. — Կարելի՞ բան է:

Տէգ. — Ո՛հ, երկինք թող ներեն մե՛զի:

Օրէջ. — Գու ներողամտութիւնդ կը խնդրեմ ուրեմն. Վենետիկցի խորամանկ պոռնիկը կարծեցի քեզի, որ Օթէլլօյի հետ ամուսնացաւ:

Կը մտնէ էմիլիա:

(Էմիլիայի) Դուն, տիկին, որ Սբ. Պետրոսի հակառակ պաշտօնը կը վարես, և դժոխքի դուռը կը պահես. դո՛ւն, դո՛ւն, այո՛, դո՛ւն. մեր գործը լմնցաւ, — ահա ստակ քեզի քու աշխատութեանդ համար: Կ'աղաչեմ, դարձո՛ւր բանալին, և մեր գաղտնիքը պահէ՛:

(Կը մեկնի:)

Էմիլ. — Աւա՛ղ. ի՞նչ կ'երևակայէ այս պարոնը: — Ի՞նչպէս էք, տիկին, ի՞նչպէս էք, սիրելի տիկինս:

Տէգ. — Կարծեմ, կիսովին թմրած եմ:

Էմիլ. — Սիրելի տիկին, ի՞նչ ունի իմ տէրս:

Տէգ. — Ո՛վ քու տէրդ:

Էմիլ. — Իմ տէրս, տիկին:

Տեղ. — Ո՞վ է քու տէրդ :

Էմիլ. — Այն՝ որ քու տէրդ է, անուշիկ տիկին :

Տեղ. — Ես տէր չունիմ, մի՛ խօսիր ինձի, էմիլիա. չեմ կրնար լալ, և ոչ իսկ կրնամ պատասխանել բայց աշտատուօք միայն : Կ'ազաչեմ, այս գիշեր անկողնոյս վրայ իմ հարսանեկան հաղուստներս զի՛ր, — չմոռնաս. — և ամուսինդ հոս կանչէ՛ :

Էմիլ. — Ի՞նչ փոփոխութիւն, արգարև :

(Կը մեկնի :)

Տեղ. — Արգարացի էր, որ ինձի հետ այսպէս վարուէր, շատ արգարացի : Ի՞նչ տարօրինակ վարմունք ունեցած լինելու եմ, որ այսպիսի ծանր յանցանքի մը ամենափոքր կասկածը տուած լինիմ իրեն :

Նորէն կը մտնէ էմիլիա Եակոյի հետ :

Եակո — Ի՞նչ է ձեր հաճութիւնը, տիկին. ի՞նչպէս է ձեր որպիսութիւնը :

Տեղ. — Ձե՛ք կարող ըսել : Անոնք՝ որ փոքր մանուկները կը կրթեն, հեշտ և դիւրին միջոցներ ՚ի գործ կը գնեն. այսպէս կրնար զիս սաստել, քանզի արգարև մանուկ մ'եմ ես, երբ զիս կը սաստեն :

Եակո — Ի՞նչ պատահեցաւ, տիկին :

Էմիլ. — Աւա՛ղ. Եակո, իմ քէրս պոռնիկ բառով անպատուեց իմ տիկինս, և այնպիսի ծանր և նախատալից խօսքեր տեղաց անոր վը-

րայ, որոնց պարկեշտ հօգի մը չկրնար հանդուրժել :

Տեղ. — Այս անուան միթէ արժանի՞ եմ, Եակո :

Եակո — Ի՞նչ անուն, գեղանի տիկին :

Տեղ. — Այն անունը, զոր էմիլիան կրկնեց, և զոր ամուսինս ըսաւ թէ եմ :

Էմիլ. — Պոռնիկ անունը տուաւ անոր : Մուրացիկ մը իսկ իւր արբեցութեան մէջ այսպիսի բառեր չպիտի ուզղէր իւր պոռնիկ կնոջը :

Եակո — Ինչո՞ւ համար այսպէս ըրաւ :

Տեղ. — Չգիտեմ. հաւաստի եմ, թէ չեմ ես այսպիսի մէկը :

Եակո — Մի՛ լաք, մի՛ լաք. աւա՛ղ, ի՞նչ տխուր օր :

Էմիլ. — Միթէ պոռնիկ կոչուելու համար էր, որ մերժեց նա ամուսնական այնչափ աղնիւ և պատուաբեր առաջարկներ, և թողուց իւր հայրը, իւր հայրենիքը, և իւր բարեկամները. կարելի՞ է որ մէկը չլայ :

Տեղ. — Իմ թշուառ բազդս է :

Եակո — Անէ՛ծք անոր վրայ : Ու՞սկից ունեցու այսպիսի չար խորհուրդներ :

Տեղ. — Երկինք գիտէ միայն :

Էմիլ. — Թող զիս կախեն, եթէ խաբեբայ մը, բանասարկու սրիկայ մը, խորամանկ շողոքորթ մէկը պաշտօն մը ձեռք ձգելու նպատակաւ՝ այս զրպարտութիւնը երևակայած չէ. այո՛, թող զիս կախեն, եթէ այդէս չէ :

Եսակո — Բո՛ւհ, այդպիսի մարդ չկայ աշխարհիս մէջ. անկարելի է :

Տէգ. — Եթէ այդպիսի մէկը կայ, երկինք թող ներէ անո՛ր :

Էմիլ. — Թող խեղդանը ներէ անո՛ր. և դժոխքը կրծէ անոր ոսկորնե՛րը : Ինչո՞ւ համար պոռնիկ պիտի կոչէ իմ տիրուհիս, ո՞վ է որ անոր կ'այցելէ. ի՞նչ տեղ, ի՞նչ ժամանակ, ի՞նչ կերպիւ, և ի՞նչ հաւանականութիւն կայ. — Ամենաթշուառ ապիրատ մը խաբած է Մաւրը, ամենաստորին նշանաւոր խաբեբայ մը, անզգամ անպիտան մը. — Ո՛վ երկինք, ինչո՞ւ համար յերևան չես բերեր այսօրինակ թշուառ արարածները, և մէն մի պարկեշտ մարդու ձեռք՝ գաւազան մը չես դներ զանոնք մերկովին հարուածելու համար աշխարհիս մէկ ծայրէն միւս ծայրը արևելքէն դէպ'ի արևմուտք :

Եսակո — Քիչ մը կամաց խօսէ՛ :

Էմիլ. — Ո՛հ, անէ՛ծք այդ մարդուն վրայ : Այս կարգի մարդերէն մէկն է անշուշտ, որ ըու միտքդ պղտորեց, և իմ և Մաւրի մէջ քեզի՛ ապօրէն յարաբերութիւն մը կասկածել տուաւ :

Եսակո — Խենթ ես դուն. շարունակէ՛ :

Տէգ. — Ո՛վ բարի Եսակո, ի՞նչ ընել պէտք եմ իմ տէրս նորէն սիրաշահելու համար : Սիրելի բարեկամ, գնա՛ գտի՛ր զինքը. ինչու որ յանուն երկնից, չգիտեմ ի՞նչպէս կորուսի զինքը : Ահաւասիկ ծնրադիր կ'ըսեմ, եթէ երբէք անոր սիրոյ դէմ մեղանչեցի խօսքով կամ խորհրդով,

կամ գործով. կամ եթէ իմ աչքերս, ականջներս, կամ իմ ուր և է զգայութիւնս իրմէ զատ ուրիշ առարկայով մը զուարճացած է. կամ թէ ճշմարիտ չէ, որ կը սիրեմ զինքը տակաւին. թէ միշտ սիրեցի զինքը. և թէ միշտ պիտի սիրեմ գորովագին — մինչև իսկ եթէ ամուսնալուծութեամբ զիս իրմէ հեռացնէ. — Թող ամէն սփոփանք խոյս տա՛ն ինձմէ : Անազնուութիւնը կարող է շատ բան ընել, որով ինքն ևս կրնայ իմ կեանքս փճացնել. բայց չկրնար երբէք իմ սէրս այլայլել : Ձեմ կարող պոռնիկ բառը արտասանել, սոսկում կը պատճառէ ինծի այդ. աշխարհիս անբաւ ունայնութիւնները չեն կարող հրապուրել զիս այդպիսի գործ մ'ընելու, որով այս անուան արժանանամ :

Եսակո — Կ'աղաչեմ, հանդարտեցէ՛ք. իւր սրտնեղութիւնն է ասոր միակ պատճառը. պետական գործերը զինքը կը գրգռեն, և իւր բարկութիւնը ձեր վրայ կը թափէ :

Տէգ. — Երանի՛ թէ այդ միայն լինէր :

Եսակո — Հաւաստի եմ, որ այդպէս է :

(Փողախարները :)

Լսեցէ՛ք, ի՞նչպէս այս փողերը ընթրիքի կը հրաւիրեն, և վենետիկի ազնիւ պատգամաւորները ձեզի կ'սպասեն. ներս մտէ՛ք, և մի՛ լաք. ամէն ինչ լաւ պիտի կարգադրուի :

(Կը մեկնին Տեգսեփոս և Էմիլիս :)

Կը մտնէ Բօտրիկո :

Եսկօ — Ի՞նչպէս են գործերը, Բօտրիկօ :
 Բօժ. — Համոզուած եմ, որ ինծի հետ արգարութեամբ չես վարուիր :

Եսկօ — Ի՞նչ ըրի, որ այդպէս կը խօրհչիս :

Բօժ. — Ամէն օր նորանոր պատրուակներով ինծի գլխէդ կը ճամբես, Եսկօ . և ինչպէս այժմ կը նշմարեմ, առաւել ևս ամէն հաւանականութիւն կը հեռացնես ինձմէ, առանց որ և է յուսոյ նշոյլ մ'իսկ հայթայթելու : Ճշմարիտ, այլևս չպիտի կրնամ համբերել, և ոչ իսկ տրամադիր եմ լռութեամբ անցունել ցարդ յիմարաբար կրած զրկանքներս :

Եսկօ — Կ'ուզե՞ս ինծի մտիկ ընել, Բօտրիկօ :

Բօժ. — Ստուգիւ, խիստ շատ մտիկ ըրի քեզի . ինչու որ քու խօսքերդ և գործերդ իրարու հետ խնամութիւն չունին բնաւ :

Եսկօ — Յանիրաւի կը մեղադրես զիս :

Բօժ. — Ամենևին, այլ ճշմարիտ է ինչ որ կ'ըսեմ : Փճացուցի ինքզինքս բոլոր ունեցածս վատնելով : Գոհարները, զոր ինձմէ ստացար Տէղտէմօնային յանձնելու համար, բաւական էին Վեստեան կոյս մը գլխէ հանելու : Ըսիր ինծի, թէ Տէղտէմօնան ստացաւ զանոնք, և ինծի յոյս տուիր, թէ քիչ ժամանակէն իւր շնորհքները պիտի վայելեմ . բայց այդպիսի բան մը չունեցայ :

Եսկօ — Լաւ, շարունակէ՛ . շատ լաւ :

Բօժ. — Շատ լա՛ւ, շարունակէ՛ . չեմ կրնար շարունակել, մարդ գու, ո՛չ, շատ լաւ չէ . և

ձեռամբարձ կ'ըսեմ, թէ շատ վատ բան է, և կ'սկսիմ հաւատալ թէ բոլորովին խաբուած եմ :

Եսկօ — Շատ լաւ :

Բօժ. — Կ'ըսեմ քեզի, թէ շատ լաւ չէ : Ես ինքս պիտի ներկայանամ Տէղտէմօնային . եթէ իմ գոհարներս ինձ ետ դարձնէ, հետապնդութենէ ետ պիտի կենամ, և պիտի զղջամ իմ ապօրինի թախանձանքիս համար . եթէ ոչ, ապահով եղիր, որ քեզմէ հատուցում պիտի պահանջեմ :

Եսկօ — Խօսեցար հիմա ամէն ինչ, այնպէս չէ՞ :

Բօժ. — Այո՛, և ոչինչ խօսեցայ, զոր հաստատապէս սրոյշած չլինիմ գործադրելու համար :

Եսկօ — Ա՛հ, հիմա կը տեսնեմ, որ հոգի կայ քու մէջդ . և մինչև իսկ այս վայրկեանէն լաւադոյն դաղափար մը կը կազմեմ քու վրադ, քան երբէք ունեցած էի առաջ : Չեռքդ ինծի տուր, Բօտրիկօ, դուն իրաւացի կասկածներ ունեցար ինծի դէմ . սակայն և այնպէս կը բողոքեմ, թէ քու գործիդ նկատմամբ ամենայն ուղղութեամբ վարուեցայ :

Բօժ. — Այդպէս չերևցաւ :

Եսկօ. — Կը հաւանիմ արդարև, թէ չերևցաւ, և քու կասկածդ մտքէ և դատողութենէ զուրկ չէ : Սակայն, Բօտրիկօ, եթէ ստուգիւ ունիս քու մէջդ այն բանը՝ ինչ որ հիմա առաւել քան երբէք մեծամեծ պատճառներ ունիմ հաւատալու թէ ունիս—կ'իմանամ հաստատ կամք,

քաջութիւնն և անվեհերութիւնն, — ցուցուր զանոնք այս զիշեր. և եթէ հետեւեալ զիշերը Տէղաէմօնան չվայելես, ա՛ռ իմ կեանքս թաւով, և ամէն տեսակ շարչարանք երևակայէ՛ ինձի համար:

Բօժ. — Տեսնենք ի՞նչ է ըսելիքդ. դատաւորութեան և մտքի մօտ բա՞ն մ՛է:

Եակօ — Պարոն, Վենետիկէն մասնաւոր հրամաններ եկան Քասիօն Օթէլլօյի տեղ պաշտօնի կարգելու համար:

Բօժ. — Ճիշդ է ըսածդ. ուրեմն Օթէլլօն և Տէղաէմօնան կրկին Վենետիկ կը դառնան:

Եակօ — Ոչ, նա Մաւրիտանիա կ'երթայ, և իւր հետ կը տանի գեղանի Տէղաէմօնան. իւր հօս մնալը կրնայ երկարիլ մէկ դիպուածով մը միայն. և այս չկրնար ուրիշ կերպիւ լինիլ, բայց միայն Քասիօն մէջտեղէն հեռացնելով:

Բօժ. — Ի՞նչ կ'իմանաս հեռացնել ըսելով:

Եակօ — Կ'իմանամ Քասիօն անկարող վիճակի մը ենթարկել, Օթէլլօյի տեղը բռնելու համար, իւր ուղեղը պայթեցնելով:

Բօժ. — Եւ ա՞յս է ինչ որ կ'ուզես որ ես ընեմ:

Եակօ — Այո՛, եթէ քաջութիւնն ունիս դունքու անձիդ ծառայութիւնն և արդարութիւնն ընելու: Այս զիշեր պոռնիկի մը հետ պիտի ընթրէ նա, և պիտի երթամ զինքը դտնեմ. — տակաւին իւր պաշտօնի բարձրացումէն անտեղեակ է: — Եթէ անոր տունէն դուրս ելնելուն սպա-

սես, (և ես այնպէս պիտի կարգադրեմ որ կէս զիշերուան և մէկին միջոցները պատահի,) կըրնաս ուղածիդ պէս վրան յարձակիլ. ես քու քովդ պիտի գտնուիմ, քեզի օգնելու համար, և մեր երկուքին մէջտեղ պիտի իյնայ: — Օ՛ն, շուարած մի՛ կենար այդպէս, հապա ինձի հետ քալէ՛: Պիտի ցուցնեմ քեզի, թէ անոր մահը որչա՞փ հարկաւոր է, այնպէս որ դուն ինքդ պիտի պարտաւորիս զայն ՚ի գործ դնել: Հիմա ճիշդ ընթրելու ժամն է, և զիշերը փութով կը յառաջանայ. օ՛ն, գործի սկսինք:

Բօժ. — Այս մասին նոր պատճառներ կ'ուզեմ լսել:

Եակօ — Եւ քեզի գոհ պիտի ընեմ:

(Կը մեկնիւն:)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ.

Ուրիշ սենեակ մը դղեակին մէջ:

Կը մտնեն Օթէլլօ, Լօտովիքօ, Տէղաէմօնա, Էմիլիա, և Կետեւորդը:

Լօժ. — Կ'աղաչեմ, պարոն, այլևս ճանճութիւն մի՛ առնուք:

Օրէջ. — Ո՛հ, ներեցէ՛ք, քալելի ինձ համար օգտակար է:

Լօժ. — Տիկին, զիշեր բարի, խոնարհաբար շնորհակալ եմ ձեր ազնուափայլութեան:

Տէգ. — Չեր յարգութիւնը բարով եկաւ մեզի:

Օրեկ. — Կ'ուզէ՞ք քաշել, պարոն :

Ո՛հ, Տէգաէմօնա՛ :

Տէգ. — Տէր իմ :

Օրեկ. — Անկողին գնա՛ անմիջապէս, շուտով պիտի դառնամ. ճամբէ սպասուէիդ. նայէ՛ որ այսպէս ընես :

Տէգ. — Պիտի ընեմ, տէր իմ :

(Կը մեկնին Օրեկո, Լօսովիֆօ, և Բեսկուորդի :)

Էմիլ. — Ի՞նչպէս է այժմ. առաջուանէ աւելի մեղմ կ'երևի նա :

Տէգ. — Կ'ըսէ թէ անմիջապէս ետ պիտի դառնայ. հրամայեց որ անկողին երթամ, և քեզի ճամբեմ :

Էմիլ. — Ինծի ճամբե՞ս :

Տէգ. — Այս է իւր հրամանը. հետևաբար, սիրելի էմիլիա, գիշերուան զգեստներս տո՛ւր ինծի, և երթաս բարով. պէտք չէ, որ զինքը բարկացնենք հիմա :

Էմիլ. — Լաւ ևս կ'ուզէի, որ զինքը երբէք տեսած չլինէիր :

Տէգ. — Ես չպիտի ուզէի. իմ սէրս այնչափ բուռն է անոր համար, որ մինչև իսկ իւր խըստութիւնն, յանդիմանութիւնները, և իւր խոստոռ նայուածքը. — կ'աղաչեմ կոճակներս քակէ՛. — իրենց հեշտութիւնն և հրապոյրն ունին :

Էմիլ. — Չեր ըսածին պէս սաւանները անկողնոյ ըվայ գրի :

Տէգ. — Ա՛հ, նոյն բանն է :— Բարի հա՛յր. ի՞նչ յիմար գլուխներ ենք :— Եթէ քեզմէ առաջ

մեռնիմ, կ'աղաչեմ, ծածկէ՛ զիս այս կտաւներէն մէկուն մէջ :

Էմիլ. — Ա՛հ, կ'աղաչեմ, ինչե՞ր կը խօսիք :

Տէգ. — Մայրս սպասուէի մ'ունէր Պարպարա անունով. նա սիրահարուած էր, և այն՝ զոր կը սիրէր, անհաւատարիմ գտնուեցաւ, և թողուց զինքը : Պարպարա «Ուռենի» երգ մը ունէր—հին երգ մը—բայց իւր բաղբը կը նկարագրէր, և զայն երգելով մեռաւ :

Այդ երգը մտքէս չպիտի ելնէ այս գիշեր. շատ դժուար է ինծի համար գլուխս մէկ կողմ չձուել, և երգել այս երգը խեղճ Պարպարային պէս :— Կ'աղաչեմ քիչ մը շուտ բրէ՛ :

Էմիլ. — Կ'ուզէ՞ք որ երթամ ձեր գիշերազգեստը բերեմ :

Տէգ. — Ո՛չ, այս տեղը քակէ՛ :— Այս Լոտովիբօն շատ ազնիւ մարդ մ'է :

Էմիլ. — Շատ գեղեցիկ մարդ մը :

Տէգ. — Եւ լաւ կը խօսի :

Էմիլ. — Վեհատիկի մէջ տիկին մը կը ճանչնամ, որ մինչև Պաղեստին բոկոտն պիտի քալէր, անոր շրթունքներէն փոքրիկ համբոյր մը քաղելու համար :

Տէգ. — (Երգելով)

Ա.

« Թգենիին տակ հէզ հոգին տայր հոտաչ,
« Օ՛ն, երգեցէ՛ք դուք ուռենի (*) թարմ կանաչ :

(*) Հին ժամանակները Ուռենին դժբաղդ սիրոյ ծառ կը համարուէր Անգղիոյ մէջ :

« Զեռքն իւր սրտին՝ գլուխը ծուռկին էր յենած .

« Երգեցէ՛ք ուռենի, ուռենի կանաչ :

« Զով առուակներ տան արձագանգ իւր վշտաց .

« Երգեցէ՛ք ուռենի, ուռենի կանաչ :

« Ժայռն ամոքուէր արցունքներէն իւր թափած .

« Երգեցէ՛ք ուռենի, ուռենի կանաչ :

Ասոնց քովը դի՛ր : — (Էմիլիա յիկն՝ սաղով
ասնոր իւր արդուզարդէն մասս մը :))

« Երգեցէ՛ք ուռենի, ուռենի, ուռենի : »

Կ'աղաչեմ, շտապէ՛, պահիկէ մը պիտի դայ : —

« Երգեցէ՛ք ամէնքդ, դալար ուռենի

« Ինձ ծաղկեայ պսակ պէտք է որ լինի : »

Բ.

Թող ոչ ոք մեղադրէ զայն . կը սիրեմ իւր
արհամարհանքը : Ոչ, այդ չէ ինչ որ կը գայ
յետոյ : — Յո՛ւշ, ո՞վ է որ կը զարնէ :

Էմիլ . — Հոմբէ է, որ կը փչէ :

Տէգ . — (Երգելով)

« Իմ սէրս սուտ սէր ես կ'անուանէի .

« Սակայն այն ատեն ի՞նչ կ'ըսէր ինձի .

« Երգեցէ՛ք ուռենի, ուռենի .

« Եթէ ես քծնիմ բազում կիներու .

« Դուք պիտի քծնիք բազում մարդերու : »

Այսպէս, ե՛լ գնա՛ . գիշեր բարի : Աչքերս
կը քերուին . արդեօք լալու նշա՞ն մ'է այս :

Էմիլ . — Այդ բան մը չնշանակեր :

Տէգ . — Ասեցի որ այսպէս կ'ըսեն : — Ո՛հ, այս
մարդիկները, այս մարդիկները : — Ըսէ՛ ինձի,
Էմիլիա, — խղճմտօրէն, կը կարծե՞ս, թէ կա՞ն

կիներ, որ այսպէս կոշտ կերպիւ իրենց ամուս-
նիկները կը խաբեն :

Էմիլ . — Այսպիսիներ կը գտնուին, տարա-
կոյս չկայ :

Տէգ . — Այսպիսի բան մը դուն պիտի ընէի՞ր
բոլոր աշխարհի փոխարէն :

Էմիլ . — Ի՞նչպէս . դուք չպի՞տի ընէիք :

Տէգ . — Ոչ, կ'երգնում այս երկնային լուսով :

Էմիլ . — Ոչ, ես ևս այս երկնային լուսով .
բայց պիտի ընէի մութին մէջ :

Տէգ . — Այսպիսի բան մը պիտի ընէի՞ր բո-
լոր աշխարհի փոխարէն :

Էմիլ . — Աշխարհս ստուար բան մ'է . այդ
մեծ գին մ'է փոքր մեղքի մը համար :

Տէգ . — Բայց և այնպէս կը հաւատամ, որ
դուն չպիտի ընէիր :

Էմիլ . — Բայց և այնպէս կը հաւատամ, որ
պիտի ընէի . և ընելէս յետոյ՝ պիտի քաշուէի :
Անտարակոյս այսպիսի բան մը չպիտի ընէի
մատանի մը, կամ քանի մը կանգուն կերպա-
սի համար, և ոչ չըջազգեստներու, կոճկէննե-
րու, և գլխարկներու, և ոչ ուրիշ զարդի մը
համար : Բայց բոլոր աշխարհի փոխարէն, — ա՛հ,
ո՞վ իւր ամուսինը կաւատ չպիտի ընէր, զինքը
թաղաւոր ընելու համար : Ես մինչև իսկ քա-
ւարանէն զրկուելու վտանգը աչքս պիտի առ-
նէի առք համար :

Տէգ . — Անիծեա՛լ լինիմ, եթէ բոլոր աշ-
խարհի փոխարէն այդպիսի մեղք մը դործեմ :

էմիլի. — Ա՛հ, մեզքը աշխարհիս մէջ միայն մեզք է. արդ ունենալով աշխարհս քու աշխատութեանդ փոխարէն, այդ մեզք մ'է քու աշխարհիդ մէջ, զոր կրնայիր շուտով ուղղութեան բերել:

Տեզ. — Ես չեմ հաւատար, որ այսպիսի կին մը կը գտնուի:

էմիլի. — Այո՛, երկոտասանեակներով, և շատ աւելի, որքան որ պիտի կրնար պարունակել գրաւի գրուած աշխարհը: Բայց կը հաւատամ թէ ամուսիններունն է յանցանքը, երբ կիները կը թերանան: Ըսենք, թէ անոնք իրենց պարտաւորութեանց մէջ կը թուլանան, և մեր գանձերը օտարին ծոցը կը թափեն. կամ անհեթեթ նախանձով մը կը յուզուին, մեր վրայ ճշուժի գործ գնելով. կամ ըսենք թէ մեզի կը զարնեն, կամ մեզի զայրացնելու համար մեր սովորական ծախքերը կը կրճատեն. արդ մենք ևս զայրոյթ ունինք, և որչափ իսկ առաքինի կ'երեկնք, գիտենք վրէժխնդիր լինել: Թող ամուսինները գիտնան, թէ իրենց կիները իրենց պէս զգացում ունին, կը տեսնեն և կը հոտոտեն, և իրենց ամուսիններուն պէս ճաշակ ունին անուշը և թթուն զանազանելու համար: Ի՞նչ բանէ մղուած մեզի ուրիշներու համար կը փոխեն: Հաճո՞յք, կը հաւատամ որ այդպէս է. կրից թա՛փը, այո՛, այդպէս է. թեթեամտութի՛ւնն է, որ զանոնք այսպէս կը մոլորեցնէ. այսպէս իսկ է: Եւ մենք ևս միթէ կիրք չու-

նի՞նք. զուարճանալու համար փափաքնե՞ր, և տկարութի՞ւն, ինչպէս մարդիկ ունին: Ուրեքն թող մեզի հետ լաւ վարուին. եթէ ոչ, թող գիտնան, թէ չարիքը, զոր մենք կը գործենք, իրենք մեզ կը սորվեցնեն:

Տեզ. — Գիշեր բարի, գիշեր բարի: Երկինք թող ինձ ներշնչէ, ոչ թէ չարիքէն չարիք քաղել. հապա չարիքը ՚ի բարին գործածե՛լ:
(Կը մեկնին:)

(Վերջ Դ. Արարուածի:)

Մարտի 1-ին Երևանի քաղաքում
 տեղի ունեցավ հարգելի և
 խաղաղ ժամանակագրության
 համաժողովը, որին մասնակցեցին
 քաղաքի բնակիչներից և քաղաքի
 ղեկավարներից մեծ թիվը։
 Համաժողովը բացվեց քաղաքի
 ղեկավարի կողմից արված
 խոսքով, որի մեջ քաղաքի
 վերջին տարիների զարգացումը
 և քաղաքի վերականգնման
 գործընթացը մանրամասն
 ներկայացվեց։ Համաժողովը
 քննարկեց քաղաքի վերականգնման
 հարցը և որոշեց քաղաքի
 վերականգնման համար
 անհրաժեշտ ձեռնարկներ
 կատարելու մասին։

ՄԱՐՏՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԱՐՏՈՒԱԾ

ՄԱՐՏՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Մարտի 2-ին քաղաքի
 ղեկավարը քաղաքի
 բնակիչներին հարգելի
 խոսքով արեց, որի մեջ
 քաղաքի վերականգնման
 գործընթացը մանրամասն
 ներկայացվեց։

Մարտի 3-ին քաղաքի
 ղեկավարը քաղաքի
 բնակիչներին հարգելի
 խոսքով արեց, որի մեջ
 քաղաքի վերականգնման
 գործընթացը մանրամասն
 ներկայացվեց։

Մարտի 4-ին քաղաքի
 ղեկավարը քաղաքի
 բնակիչներին հարգելի
 խոսքով արեց, որի մեջ
 քաղաքի վերականգնման
 գործընթացը մանրամասն
 ներկայացվեց։

Մարտի 5-ին քաղաքի
 ղեկավարը քաղաքի
 բնակիչներին հարգելի
 խոսքով արեց, որի մեջ
 քաղաքի վերականգնման
 գործընթացը մանրամասն
 ներկայացվեց։

ԲՂՈՂԺՔԿԻ ՇԱՂՈՂԱՂԱ

ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա .

Փողոց մը :

Կը մտնեն Եակօ, և Բօարիկօ :

Եակօ — Հոս, այս պատին ետեը կեցի՛ր . նա անմիջապէս պիտի դայ . սուրդ մերկ պատ ըստ բռնէ՛, և անոր վրայ յարձակէ . շուտ, շուտ, բանէ մը մի՛ վախնար . ես քու քովդ պիտի լինիմ . այս՝ կամ մեզի կ'ազատէ, կամ կը կորսնցնէ . ասոր վրայ խորհէ՛, և խիտ հաստատ պահէ՛ սրոշումդ :

Բօս. — Քովէս մի՛ հեռանար, մի՛ գուցէ վրիպիմ :

Եակօ — Հոս, քու ձեռքիդ տակն եմ : քաջ եղի՛ր, և սուրդ ձեռքդ ա՛ն :

(Փոքր ինչ կը նեղանայ.)

Բօս. — Ամենին տաք չեմ այս գործին հետ . սակայն գոհացուցիչ պատճառներ տուաւ ինծի : — Մարդ մը պիտի պակսի երկրէս . օ՛ն, իմ սուրս, նա կը մեռնի :

(Փուր տեղը կը փաշտի.)

Եակօ — Արիւնեւոր աստիճան շփեցի այս

երկտասարդին պալարը, որով հետզհետե կը սրամտի: Հիմա եթէ նա Քասիօն սպաննէ, կամ Քասիօն զինքը. կամ երկուքը զիրար սպաննեն. ամէն կերպիւ ես կը շահիմ: Եթէ Բօարիկօն ապրի, պիտի պահանջէ, որ իրեն վերադարձը նեմ ոսկիները և դոհաշները, զորոնք շորթեցի իրմէ Տէղտէմօնային նուիրելու պատրուակաւ: Այս լինել պէտք չէ: Եթէ Քասիօն ողջ մնայ, ունի նա ամենօրեայ գեղեցկութիւն մի, որ զիս տգեղ կը դարձնէ: Բաց աստի՛ Մաւրը կրնայ զիս անոր մատնել, և այսպէս կրնամ մեծ վըտանգի ենթարկուիլ: Ոչ. ուստի պէտք է որ նա մեռնի:—Բայց աւասիկ կը լսեմ, որ կը գայ:

Կը մտնէ Քասիօ:

Րօս. — Կը ճանչնամ իւր քայլափոխը. նա ինքն է. — ապիրատ, մեռած ես:

(Կը ցատկէ իւր տեղէն եւ հարուած մը կը տայ Քասիօյիէ:)

Քաս. — Այս հարուածը կրնար ինձ համար մահացու լինել արդարև, եթէ իմ զգեստս կարծածէդ աւելի լաւ չլինէր. հիմա քուկդ պիտի փորձեմ:

(Սուրը կը քաշէ եւ կը վիրաւորէ Րօսիկօն:)

Րօս. — Ո՛հ, սպաննուեցա՛յ:

(Եակօն իւր տեղէն կը ցատկէ, եւ Քասիօյիէ սրունքիկ կը զարնէ ետեւէն, եւ կը փախչի:)

Քաս. — Հաշմուեցայ մշտապէս: — Օգնու, թի՛ւն, հօ՛, սպաննութի՛ւն, սպաննութի՛ւն:

(Գետիկը կ'իյնայ:)

Կը մտնէ Օթէլլօ հեռուէն:

Օրեղ. — Քասիօյին ձայնը.՝ Եակօն իւր խօսքը կը բռնէ:

Րօս. — Ո՛հ. ի՛նչ ապիրատ եմ:

Օրեղ. — Այո՛, ճիշդ այդպէս է:

Քաս. — Ո՛հ, օգնութի՛ւն, հօ՛, լս՛յս, վիրաբո՛յժ մը:

Օրեղ. — Ինքն է. — ո՛վ քաջդ Եակօ՛, պարկեշտ և ուղիղ մարդ, որ այսչափ ազնուութեամբ կ'զգաս քու բարեկամիդ եղած թշնամա՛նքը: Դուն իմ պարտքս ինձ կը սորվեցնես: — Սիրունիկս, քու սիրելիդ հոս գետնատարած մեռած է. և քու ժամդ շուտով կը մօտենայ. — պոռնիկդ դու, ահա կը հասնիմ: Մէկգի՛ իմ սրտէս քու հրապուրիչ գեղեցկութիւնդ. ամէն ինչ շնջուած է: Յանկութեամբ աղտեղուած անկողինդ ցանկութեան արիւնով պիտի արատաւորի:

(Կը մեկնի Օրեղոյ:)

Կը մտնեն Լօտօվիքօ, եւ Կրաթիանա հեռուէն:

Քաս. — Ի՞նչպէս, հօ՛, չկա՛յ գիշերապահ, և ոչ մէկ անցո՞րդ մի. սպաննութի՛ւն, սպաննութի՛ւն:

Կրա. — Աղէտ մը պատահած է. այս ձայնը սոսկալի է:

Քաս. — Ո՛հ, օգնութի՛ւն:

Լօս. — Լսեցէ՛ք:

Րօս. — Ո՛վ սոսկալի ապիրատ:

Լօս. — Երկու կամ երեք հեծեծանք:—Թանձր

գիշեր մ'է . այս ձայները կրնան կեղծ լինել .
անխոհեմութիւն է այս ձայներուն քով մտե-
նալ առանց օգնականներու :

Բօս. — Եւ ոչ մէկը կը գայ . ուրեմն արիւ-
նահոսութեամբ պիտի մեռնիմ :

Կը մտնէ Եակօ ձեռքը լոյս բռնած :

Լօս. — Լսեցէ՛ք :

Կրս. — Ահաւասիկ մէկը , որ շապիկով կը
գայ լոյսով և զէնքով :

Եակօ — Ո՞վ է այն . որո՞ւ ձայնն է այս ,
որ օգնութիւն կը պօռայ :

Լօս. — Չգիտենք :

Եակօ — Չայն մը չլսեցի՞ք :

Քաս. — Հոս , հոս , յանուն երկնից օգնե-
ցէ՛ք ինձի :

Եակօ — Ի՞նչ պատահեցաւ :

Կրս. — Այս՝ Օթէլլօյի դրօշակիրն է , ինչ-
պէս կ'իմանամ :

Լօս. — Նոյն ինքն արգարէ . շատ քաջ մէկը :

Եակօ — Ո՞վ ես դուն հոս , որ այսպէս ցա-
ւազին կը պօռաս :

Քաս. — Եակօ՞ : Ո՞հ , կողոպտուեցայ , սպան-
նուեցայ ապիրատներէ : Օգնութեան հասի՞ր
իմձի :

Եակօ — Ո՞հ , տեղակալ , դո՞ւն ես . ո՞վ են
այս ապիրատները , որ ըրին այս բանը :

Քաս. — Կարծեմ , անոնցմէ մին հոս մեղմէ
հեռու չէ , և կարող վիճակի մէջ չէ փախչելու
համար :

Եակօ — Ո՞վ վատ ապիրատներ :
(Լօսով իջօյիկն եւ Կրսթիանօյիկն) Ո՞վ էք
դուք հոգ . մտեցէ՛ք և օգնեցէ՛ք մեզի :

Բօս. — Ո՞հ , հոս ինձի օգնեցէ՛ք :

Քաս. — Այս անոնցմէ մին է :

Եակօ — Ո՞վ մարդասպան սարս՛ւկ , ո՞վ ա՞
պիրատ :

(Մտով կը զարնէ Բօսթիօյիկն :)

Բօս. — Ո՞վ դժօխային Եակօ՞ , ո՞վ անգութ
չո՞ւն . — Ո՞հ , ո՞հ , ո՞հ :

(Կը մեռնի :)

Եակօ — Մութին մէջ մարդիկ մեռցնե՛լ . —
ո՞ւր կրնան լինիլ այս արիւննուշա գողերը :
Քաղաքը ի՞նչպէս հանդարտ է : — Հօ՞ , սպաննու-
թի՛ւն , սպաննութի՛ւն :

(Լօսով իջօյիկն եւ Կրսթիանօյիկն :) Ո՞վ էք
դուք արդեօք . բարի՞ էք , կամ չար :

Լօս. — Փորձով դատեցէ՛ք մեզի :

Եակօ — Պարոն Լօտօվիքօն :

Լօս. — Նոյն ինքն , պարոն :

Եակօ — Չեր զթութիւնը կը հայցեմ . ա՞
ւասիկ Քասիօն ապիրատներէ վիրաւորուած է :

Կրս. — Քասիօն :

Եակօ — Ի՞նչպէս ես , եղբայր :

Քաս. — Սրունքս երկու կտոր եղած է :

Եակօ — Ո՞հ , Աստուած չընէ : — Լոյս բերէ՛ք ,
պարոններ . շապիկովս պիտի պատատեմ զայն :

Կը մտնէ Պիանքա :

Պիսա. — Ի՞նչ պատահեցաւ. հօ՛, ո՞վ է այս պօռայտը :

Եսկօ — Ո՞վ է պօռայտը :

Պիսա. — Ո՞վ իմ սիրելի Քասիօս. անուշիկ Քասիօս, ո՞վ Քասիօ՛, Քասիօ՛, Քասիօ՛ :

Եսկօ — Ո՞վ նշանաւոր պոռնիկէ : — Քասիօ, կրնա՞ք արդեօք կասկածիլ թէ ո՞վ են անոնք որ ձեզի այսպէս հաշմեցին :

Քասա. — Ոչ :

Կրա. — Կը ցաւիմ զձեզ այս վիճակին մէջ տեսնելով. ձեզի փնտաւելու եկած էի :

Եսկօ — Ծնկակապ մը տուէ՛ք ինծի. այսպէս, — ա՛հ, պատգարակ մը զինքը զխրու-թեամբ ասկից փոխադրելու համար :

Պիսա. — Աւա՛ղ, նա կը մարի. — ո՞վ Քասիօ. Քասիօ՛, Քասիօ՛ :

Եսկօ — Պարոններ, կը կասկածիմ, որ այս անպիտան կինը այս ոճիրին մասնակից եղած լինի : — Պահ մը համբերեցէք, սիրելի Քասիօ : — Եկէ՛ք, եկէ՛ք, լոյս տուէ՛ք ինծի : —

(Բօսրիկօյիև մօտենալով) Այս գէմքը կը ճանչնա՞նք, թէ ոչ : Աւա՛ղ իմ բարեկամս և իմ սիրելի հայրենակիցս Բօսրիկօն. — ոչ, — այո՛, ստուգիւ, ո՞վ երկի՛նք, Բօսրիկօն է :

Կրա. — Ի՞նչ, Վենետիկցի՞ն :

Եսկօ — Նոյն ինքն, պարոն. կը ճանչնա-յի՞ք զինքը :

Կրա. — Թէ կը ճանչնայի զինքը, այո՛ :

Եսկօ — Պարոն Կրաթիանօ, ձեր ներողա-

մտութիւնը կը խնդրեմ. այս արիւննուշտ դէպ-քերը պէտք են իմ ձեւերս արդարացնեն, եթէ ձեզ մասին անքաղաքավար դտնուեցայ :

Կրա. — Ուրախ եմ ձեզի տեսնելով :

Եսկօ — Ի՞նչպէս էք, Քասիօ : — Ո՛հ, պատգարակ մը, պատգարակ մը :

Կրա. — Բօսրիկօն :

Եսկօ — Նոյն ինքն, նոյն ինքն է :

(Պասքարակ մը կը բերեն :))

Ո՛հ, շատ լաւ. — պատգարակը. — Թող քա-նի մը մարդիկ խնամով փոխադրեն զայն աս-կից. ես պիտի երթամ զօրավարին վերաբոյժը կանչելու :

(Պիսաևֆալիև) Իսկ դուք, տիկին, ձանձրոյթ մի՛ աւնուք : —

Այն՝ որ հօս գետնատարած սպաննուած է, իմ սիրելի բարեկամս էք, Քասիօ, ի՞նչ թշնա-մութիւն կար ձեր և անոր մէջը :

Քասա. — Ոչինչ ամենեին. և ոչ իսկ այդ մարդը կը ճանչնամ :

Եսկօ — (Պիսաևֆալիև) Ի՞նչպէս դունատ կ'ե-րեի՞ք :

(Մարդիկներուն) Տարէ՛ք զինքը, որ բաց-օդեայ չմնայ :

(Քասիօն և Բօսրիկօն կը փոխադրեն :))

Կեցի՛ք, սիրելի պարոններ : — Որչա՞փ դու-նաա կ'երեիք, տիկին : — (Պիսաևֆալև ցուցնելով) — Կը նշմարէ՞ք իւր աչքերուն շփոթումը : — Ոչ, եթէ անքթիթ նայիք, աւելի բաներ պիտի լը-

սենք ընդհուպ:—Լաւ մը դիտեցէ՛ք զինքը. կ'ազաչեմ, աչքերնիդ անոր վրայ լինի: Կը տեսնէք, պարոններ, սճիրը ինքնին պիտի խօսի, եթէ մինչև իսկ լեզուն համր մնայ:

Կը մտնէ էմիլիա:

Էմիլի.—Աւա՛ղ, ի՞նչ կայ, ի՞նչ պատահեցաւ, ամուսինս:

Եակո—Մութին մէջ Քասիօյի վրայ յարձակեցան Բօարիկօն, և ուրիշ անպիտաններ, որոնք փախան. Քասիօն դրեթէ սպաննուած է, և Բօարիկօն մեռած:

Էմիլի.—Աւա՛ղ, ազնիւ պարո՞նք. աւա՛ղ, բարի Քասիօն:

Եակո—Ահաւասիկ կիներու ետեէ վազելու օգուտը:—Կը խնդրեմ, էմիլիա, գնա՛ իմացիր Քասիօյէն, թէ ո՞ւր ընթրեց այս գիշեր:

(Պիսակաշիկ) Ի՞նչ, այս հարցումը ձեզի դո՞ւ կը պատճառէ:

Պիս.—Իմ տունս ընթրեց. բայց այս ինձի դող չպատճառեր:

Եակո—Ո՛հ, այդպէ՞ս է. ուրեմն կը հրաւիրեմ որ ինձի հետ գաք:

Էմիլի.—Ամօթ, ամօթ քեզի, պոռնիկդ դո՞ւ:

Պիս.—Ես պոռնիկ չեմ. բայց այնչափ պարկեշտ եմ վարքով, որչափ դուն, որ զիս այսպէս կը թշնամանես:

Էմիլի.—Ինձի չափ պարկեշտ. ա՛հ, ամօթ քեզի՛:

Եակո—Սիրելի պարոններ, եկէ՛ք երթանք, խեղճ Քասիօյի վէրքերը պատելու համար:—Եկէ՛ք, տիկին, պէտք էք մեզի ուրիշ բաներ ևս պատմել: Էմիլիա, վազէ՛ դէպի միջնաբերդը, և իմացո՛ւր իմ տիրոջս և տիրուհւոյս ինչ որ պատահեցաւ:—Եկէ՛ք, երթանք, կ'ազաչեմ:

(Պուսկնձիկ) Այս այն գիշերն է, որ կամ իմ բաղդս պիտի շինէ, կամ զիս բոլորովին կործանէ:

(Կը մեկնիկ:)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ.

Նշատենեակ մը, Տէղակմօնա անկողնոյ մէջ քնացած. քովը լոյս մը:
Կը մտնէ Օթէլլօ:

Օթէլլ.—Պատճառն (*) է, պատճառն է, ս'վ իմ հոգիս:—Թող մի՛ տաք, որ անուանեմ զայն ձեզ, սրբափայլ աստղէ՛ր: Պատճառն է:—Ասով հանգերձ չեմ ուզեր անոր արիւնը թափել. և ոչ անոր ձիւնէ աւելի սպիտակ ալապատորի պէս սղորկ մարմինը վիրաւորել:

(Մեկդի կը դնէ իւր սարը:)

(*) Այս մութ կէտը Տօքթ. ձօնարն հետեւեալ կերպիւ կը բացատրէ:

«Ի՞նչ է իմ հոգւոյս խոփութեան պատճառը, արդարութիւն ընելու վայրկենին որոշման մը չգոյութիւնն է. արդեօք արիւն թափելու վախն է: Ո՛հ, գործողութիւնը չէ, որ զիս կը սարսռէ, այլ պատճա՛ւր, պատճա՛ւր, ս'վ իմ հոգիս:»

Բայց և այնպէս պէտք է որ մեռնի, եթէ ոչ ուրիշներ ևս կրնայ խաբել: — Նախ այս լոյսը մարենք, և յետոյ այս լոյսը* (ցուցնելով Տէգ-սէնօնան) : Եթէ փչելով մարեմ քեզի, դու հրացայտ պաշտօնեայ, կրնամ նորէն քու առջի լոյսդ տալ քեզի, եթէ զղչամ... : Բայց անգամ մը որ քու լոյսդ մարի, ո՞վ դու, սքանչելահրաշ բնութեան գեղակերտ կաղապար, չգիտեմ, ո՞ւր է այդ Պրօմէթեան հուրը, որ քու լոյսդ նորէն վառէ: Երբ քու վարդդ կը քաղեմ, չեմ կրնար անոր կենսական աճում տալ նորէն, պէտք է որ այն թառամի: — Կ'ուզեմ ծառին վրայ զայն հոտոտել: —

(Համբուրեղով:)

Ո՞վ անուշաբոյր շունչ, որ գոգցես արգարութիւնը պիտի համոզէիր իւր սուրը խորտակելու համար: (Համբուրեղով) Անգամ մը և՛ս, անգամ մը և՛ս: — Եզի՛ր այսպէս երբ կը մեռնիս, և պիտի սպաննեմ քեզի, և յետոյ պիտի սիրեմ: — Անգամ մը ևս, և այս վերջինն է: Երբէք համբոյր մը այսչափ քաղցր, և այսչափ ազէտաբեր եղած չէ: Պէտք է որ արտասուեմ, բայց ասոնք անգութ արցունքներ են. երկնային կոկիտ մ'է, որ կը զարնէ զայն՝ զոր կը սիրէ: — Կ'արթննայ:

Տէգ. — Ո՞վ է այն, Օթէլլօն:

Օրեղ. — Այո՛, Տէգտէմօնա:

(*) Տէգտէմօնայի կենաց լոյսը:

Տէգ. — Անկողին պիտի դա՞ս, տէր իմ:

Օրեղ. — Այս գիշեր աղօթեցի՞ր, Տէգտէմօնա:

Տէգ. — Այո՛, տէր իմ:

Օրեղ. — Եթէ կը յիշես այնպիսի մեղք մը, զոր գործած ես, և որոյ համար երկինք ներած չէ քեզի, ներում խնդրէ՛ շուտով:

Տէգ. — Աւա՛ղ, տէր իմ, ի՞նչ կ'իմանաս այդ խօսքով:

Օրեղ. — Ըրէ՛ այսպէս, և շուտ լինցո՛ւր. ես հոս պիտի շրջագայիմ. չպիտի ուզէի սպաննել քու անպատրաստ հոգիդ. ո՛չ, երկինք պահէ՛: — Չպիտի սպաննէի քու հոգիդ:

Տէգ. — Սպաննելու խօ՞սք կ'ընես:

Օրեղ. — Այո՛, կ'ընեմ:

Տէգ. — Երկինք ուրեմն սզորմի ինձի՛:

Օրեղ. — Ա՛հն. բո՛ւր սրտո՞վս:

Տէգ. — Երբ այսպէս կ'ըսես, կը յուսամ, որ չպիտի սպաննես զիս:

Օրեղ. — Հը՛մ:

Տէգ. — Բայց և այնպէս կը վախնամ քեզմէ. քանզի չարագուշակ ես, երբ աչքերդ այդպէս կը դառնան: Ինչո՞ւ համար պէտք եմ վախնալ, չգիտեմ, քանի որ յանցանք մը գործած չեմ. բայց և այնպէս կ'զգամ, որ կը վախնամ:

Օրեղ. — Մեղքերուդ վրայ խորհէ՛:

Տէգ. — Իմ մեղքերս քեզի համար ունեցած սէրս և գորովս են:

Օրեղ. — Այո՛, և ադոր համար կը մեռնիս:

Տէգ. — Այս մահը անբնական է, որ սիրե-

լու համար կ'օպաննէ:— Աւա՛ղ, ինչո՞ւ համար քու շրթունքներուդ ստորին մասը կը կրծես այսպէս: Արիւնալից խորհուրդ մը բոլոր մարմինդ կը ցնցէ. ասոնք չար գուշակութիւններ են. բայց և այնպէս կը յուսամ, կը յուսամ անոնք ինձի չեն սպառնար:

Օրեջ.— Հանդարտ, և լռիկ կեցի՛ր:

Տեգ.— Այդպէս պիտի ընեմ. ի՞նչ է խնդիրը:

Օրեջ.— Այն թաշկինակը՝ զոր այնչափ կը սիրէի, և քեզի տուած էի, Քասիօյին տուիր:

Տեգ.— Ոչ, կ'երդնում կենացս և հոգւոյս վրայ. կանչել տուր այդ մարդը, և հարցո՛ւր իրեն:

Օրեջ.— Անուշիկ հոգի, զգուշացի՛ր, զգուշացի՛ր երդմնազանց լինելէ. մահուան անկողնոյդ վրայ ես:

Տեգ.— Այո՛, բայց ոչ մեռնելու համար տակաւին:

Օրեջ.— Այո՛, անմիջապէս. ուստի բացէ՛ի բաց մեղքդ խոստովանէ՛, ինչու որ երգմամբ մէն մի մեղքդ ուրանալով, չպիտի կարենաս հեռացնել կամ խեղդել իմ սրտիս մէջ այն բուռն համոզումը, որով կը առաւապիմ: Դուն պիտի մեռնիս:

Տեգ.— Ուրեմն, Տէրը սղորմի ինձի՛:

Օրեջ.— Կ'ըսեմ, Ամէ՛ն:

Տեգ.— Եւ դուն ևս պիտի զթա՛ս: Երբեք կենացս մէջ քեզի թշնամանք մը չըրի. երբեք Քասիօն չսիրեցի, բայց միայն երկինքէն ինձ

չնորհեալ պարզ բարեսիրական ոգւով. երբէք անոր գրաւական մը չառի:

Օրեջ.— Յանուն երկնի՛ց, թաշկինակն անոր ձեռքը տեսայ: Ո՛վ ստերդում կի՛ն, դուն իմ սիրտս կը քարացնես, և կը պարտաւորես զիս սպաննութիւն անուանել ինչ սր սրոյած եմ ընել, քանի որ զո՞հ մ'ընել կը կարծէի:— Տեսայ թաշկինակը:

Տեգ.— Ուրեմն դաւած է զայն. երբէք իրեն չառի. կանչել տուր զինքը, և թող որ խոստովանի ճշմարտութիւնը:

Օրեջ.— Խոստովանեցաւ:

Տեգ.— Ի՞նչ, տէր իմ:

Օրեջ.— Թէ քեզի հետ յարաբերութիւն ունեցած է:

Տեգ.— Ի՞նչպէս. ապօրինաւորապէ՞ս:

Օրեջ.— Այո՛:

Տեգ.— Այդպէս չպիտի խօսի:

Օրեջ.— Ոչ, անոր բերանը փակուած է. պարզ կեշտ ետիօն պէտք եղած միջոցները ի գործ դրաւ:

Տեգ.— Իմ երկիւղս կը բացատրէ ուրեմն ամէն ինչ:— Ի՞նչ, մեռա՛ւ արդեօր:

Օրեջ.— Եթէ իւր մաղերը մէն մի կեանք լինէին, իմ վրէժխնդրութիւնս զանոնք ամէնքը պիտի անհետացնէր:

Տեգ.— Աւա՛ղ, մատնուած է նա, և ես կորսուած:

Օրեղ.— Ահ, պոռնիկդ դո՞ւ, անոր համար կը լա՞ս նոյն իմ երեսիս:

Տեղ.— Ո՛հ, աքսորէ զիս, տէր իմ, բայց մի՛ սպաններ:

Օրեղ.— Գետինն անցիր, պոռնիկդ դո՞ւ:

Տեղ.— Վազը սպանէ՛ զիս, թո՛ղ, որ այս դիշեր ապրիմ:

Օրեղ.— Ոչ, եթէ դիմադրես . . . :

Տեղ.— Մի միայն կէս ժամ չնորհէ ինձի:

Օրեղ.— Լմնցաւ այլ ևս, չնորհ չկայ:

Տեղ.— Աղօթք մ՛ընելու չափ ժամանակ միայն:

Օրեղ.— Ուշ է այլ ևս:

(Խեղդաման կ'ընէ գայն:)

Էմիլի.— (Ներսէն) Տէր իմ, տէ՛ր իմ. ի՞նչ, հօ՞, տէր ի՛մ, տէր ի՛մ:

Օրեղ.— Ի՞նչ աղմուկ է այս: — Չմեռա՞ւ, տակաւին բոլորովին չմեռա՞ւ: Ես, որ անդուծեմ, կը գթամ տակաւին. չեմ ուզեր քու ցաւդ երկարել: — Այսպէս, այսպէ՞ս*:

Էմիլի.— (Ներսէն) Ի՞նչ, հօ՞, տէր իմ, տէր իմ:

Օրեղ.— Ո՞վ է այն:

Էմիլի.— (Ներսէն) Ո՛հ, սիրելի տէր իմ, կ'ուզեմ բառ մը խօսիլ ձեզի:

Օրեղ.— Այո՛, — Էմիլիան է. . . հիմակ, հիմակ: — Մեռած է. . . Հաւանականաբար եկած

(*) Ի մահ կը վերաւորէ զՏէղսէմօնան:

է ֆասիօյի մահուան վրայ խօսելու. աղմուկը մեծ եղաւ:

Ա՛հ, այլ ևս չչարժի՛ր. դերեզմանի պէս հանգարտ է:

Թողո՞ւմ որ ներս գայ. բայց ի՞նչ օգուտ. կարծեմ նորէն կը շարժի. — Ոչ: —

Ի՞նչ ընելու է. եթէ ներս գայ, անշուշտ իմ կնոջս հետ պիտի խօսի. իմ կի՛նս, իմ կի՛նս, ի՞նչ կին. — Ես կի՛ն չունիմ. ո՛վ անտանելի մը. տածո՞ւմ, ո՛վ ծանրաբեռ ժա՛մ:

Ինձ այնպէս կը թուի, թէ արեգական և լուսնի խաւարում մի պէտք էր տեղի ունենալ այժմ. և սարսափահար երկրագունդը այս դղրդմամբ պէտք էր պատառել:

Էմիլի.— (Ներսէն) Կ'ազաչեմ, կ'ուզեմ խօսիլ ձեզի հետ, ո՛հ, սիրելի տէր իմ:

Օրեղ.— Մոռցեր էի քեզի. ո՛հ, ներս եկո՛ւր, Էմիլիա. —

(Դուռը ջրացած անկողնոյ վարագոյրը կը փաշէ:)

Մեղմիկ . . . հիմակ, հիմակ. — վարագոյրը քաշենք:

Ո՞ւր ես, ի՞նչ պատահեցաւ.

(Դուռը կը բանայ:)

Կը մտնէ Էմիլիա:

Էմիլի.— Ո՛հ, սիրելի տէր իմ, սոսկալի սպան. նութիւն տեղի ունեցաւ հօն:

Օրեղ.— Ի՞նչ. հիմա՞:

Էմիլի.— Ճիշդ. հիմա, տէր իմ:

Օրեղ.— Լուսնի շեղման հետևութիւնն է.

սովորականէն դուրս երկրիս մօտենալով՝ մար-
դիկը կը յիմարեցնէ :

Էմիլ. — Քասիօն, աէր իմ, երիտասարդ Վե-
նետիկցի մը սպաննեց, Բօտրիկօ անունով :

Օրէլ. — Բօտրիկօն սպաննուած . և Քասիօն
սպաննուած :

Էմիլ. — Ո՛չ, Քասիօն սպաննուած չէ :

Օրէլ. — Քասիօն սպաննուած չէ՞ . ուրեմն
սպաննութիւնը ներդաշնակութենէ դուրս է, և
քաղցր վրէժխնդրութիւնը խտտալուր կը դառ-
նայ :

Տէգ. — (Նուաղեալ ճայնիւ) Ո՛հ. անիրաւա-
բար, անիրաւաբար սպաննուած :

Էմիլ. — Աւա՛ղ, ի՞նչ ձայն է այս :

Օրէլ. — Ա՞յդ, ի՞նչ ձա՛յն :

Էմիլ. — Աւա՛ղ, Աստուած իմ, այն՝ իմ տի-
րուհւոյս ձայնն էր :

Օգնութիւն, օգնութիւն, հօ՛, օգնութիւն.
— Ո՛վ տիկին, խօսէ՛ նորէ՛ն. անուշիկ Տէգտէ-
մօնա՛, ո՛հ, անուշիկ տիրուհիս, խօսէ՛ :

Տէգ. — Անմեղ կը մեռնիմ :

Էմիլ. — Ո՛հ, ո՞վ բրաւ այս գործը :

Տէգ. — Ո՛չ մէկը, ես ինքս. մնա՛ք բարով :
— յանձնարարէ՛ զիս իմ սիրելի տիրոջս. ո՛հ,
մնա՛ք բարով :

(Կը մեռնի.)

Օրէլ. — Բայց ի՞նչպէս եղաւ որ սպաննուե-
ցաւ :

Էմիլ. — Աւա՛ղ, ո՞վ գիտէ :

Օրէլ. — Լսեցի՞ր, թէ նա ըսաւ, թէ ես չէի :

Էմիլ. — Այո՛, այսպէս ըսաւ. պէտք եմ ճըշ-
մարտութիւնը պատմել :

Օրէլ. — Իբրև ստախօս՝ հրակէզ դժօխքը
զնաց նա . ես էի զինքը սպաննողը :

Էմիլ. — Ո՛հ, նա առաւել ևս հրեշտակ մ'է.
և դուն առաւել ևս սև սատանա՛յ մը :

Օրէլ. — Յուրի ճամբայ բռնեց, պոռնիկ մ'էր
նա :

Էմիլ. — Ո՛հ, կը զրպարտես զինքը, և դուն
սատանայ մ'ես :

Օրէլ. — Կոհակի պէս խարդախ էր նա :

Էմիլ. — Կրակի պէս յանդուզն ես դուն, երբ
կ'ըսես, թէ նա խարդախ էր : Ո՛հ, հրեշտակի
նման անբիծ էր նա :

Օրէլ. — Քասիօն վայելեց զինքը... ամու-
սինիդ կրնաս հարցնել : Ո՛հ, դժօխքի մինչև
խորքը դատապարտուած պիտի լինէի, եթէ ի-
րաւացի պատճառներ չունենայի այս ծայրայե-
ղութեան դալու համար. ամուսինդ գիտէ ամէն
բան :

Էմիլ. — Ամուսի՞նս :

Օրէլ. — Ամուսի՞նդ :

Էմիլ. — Թէ նա հաւատարիմ չէր իւր ա-
մուսնական ուխտի՞ն :

Օրէլ. — Այո՛, Քասիօյի հետ : Ա՛հ, եթէ նա
հաւատարիմ եղած լինէր, մինչև իսկ եթէ եր-
կինք պարգևէր ինձի միաձույլ կատարեալ տպա-

զիօնէ կազմուած ուրիշ աշխարհք մը, չպիտի փոխանակէի զայն անոր հետ :

Էմիլ. — Իմ ամուսի՞նս :

Օրել. — Այո՛, նա էր որ խօսեցաւ ինձի առաջին անգամ անոր վրայ. պարկեշտ մարդ մ'է նա, և կ'ատէ տիղմը՝ որ պիղծ իրերու կը փակչի :

Էմիլ. — Իմ ամուսի՞նս :

Օրել. — Ի՞նչ պէտք կայ կրկնելու, կնիկ. քու ամուսինդ կ'ըսեմ :

Էմիլ. — Ո՛վ տիրուհիս, ապիրատութիւնը՝ սէրը իրեն գործիք ըրե՛ր է : — Ամուսի՞նս ըսաւ, թէ նա անհաւատարիմ էր :

Օրել. — Նա ինքն, կնիկ. քու ամուսինդ, կ'ըսեմ. այս բառը կը հասկնա՞ս, իմ բարեկամս, քու ամուսինդ, պարկեշտ, պարկեշտ Եակօն :

Էմիլ. — Եթէ այդպէս ըսաւ, թող իւր պիղծ հողին ամէն օր կէս ցորենահատի չափ փախի : Իւր խղճին դէմ կ'անհրաւէ : Իմ տիրուհիս շատ յարած էր իւր ըրած սոսկալի ընտրութեան :

Օրել. — Հա՛ :

Էմիլ. — Ըրէ՛, ինչ որ կրնաս. այս ըրած գործդ անարժան է երկինքի, ինչպէս դուն առնարժան էիր անոր :

Օրել. — (Չաջոյրով) Լաւ է, որ լռես :

Էմիլ. — Դուն ինձի չարիք հասցնելու այնչափ ոյժ չունիս, որչափ ես ունիմ կրելու համար : — Ո՛վ դու դիւրախաբ ապուշ, սոսկալի տիմա՛ր, դուն այնպիսի գործ մը գործեցիր... : Ես քու սուրէգ չեմ վախնար, քեզի պիտի հաս-

կցնեմ ես, թէև քսան կեանք իսկ կորսնցնէի : — Օգնութի՛ւն, օգնութի՛ւն, հօ՛, օգնութի՛ւն . Մաւրը սպաննեց իմ տիրուհիս : — Սպաննութի՛ւն, սպաննութի՛ւն :

Կը մտնեն Մօնթանօ, Կրաթիանօ, և Եակօ :

Մօնթ. — Ի՞նչ պատահեցաւ, ի՞նչ կայ, զօրաւ՝ վար :

Էմիլ. — Ա՛հ, Եկա՞ր, Եակօ, դուն լաւ գործ տեսար, որ մարդիկ քեզ վերագրեն իրենց սպանումը :

Կրա. — Ի՞նչ պատահեցաւ :

Էմիլ. — (Օրելու ցուցնելով) Եթէ դուն մարդ ես, սուտի հանէ և հերքէ այս ապիրատին ըսածը թէ դուն խօսեցար իրեն որ իւր կինը անհաւատարիմ է. զիտեմ ես որ չըսիր, դուն այդօրինակ ապիրատ մը չես. խօսէ՛ քանզի սիրտս լեցուած է :

Եակօ — Ըսի ինչ որ կը խորհէի. աւելի բան չըսի, քան ինչ որ ինքն իսկ իմացաւ, թէ ճիշդ և ուղիղ էր :

Էմիլ. — Բայց իրեն երբէք ըսի՞ր, թէ իւր կինը անհաւատարիմ էր :

Եակօ — Այո՛, ըսի :

Էմիլ. — Սուտ խօսեցար, գարշելի դժոխս. յին սուտ մը. հոգւոյս վրայ կ'երգնում, սուտ մը, սոսկալի սուտ մը. — թէ նա անհաւատարիմ էր Քասիօյի հետ. — ըսի՞ր Քասիօյի հետ :

Եակօ — Քասիօյի հետ, կնիկ. օ՛ն, լեզուդ զսպէ՛ :

Էմիլ.— Լեզուս չպիտի զսպեմ. պարտքս է խօսիլ. իմ արուհիս հաս իւր անկողնոյն մէջ սպաննուած է :

Ամէնք — Ո՛հ, Աստուած չընէ :

Էմիլ.— Եւ քու տուած տեղեկութիւններդ այս սպաննութեան առիթ տուին :

Օրել.— Մի՛ զարմանաք, պարոններ, ճշմարիտ է արդարեւ :

Կրա.— Տարօրինակ ճշմարտութիւն մ'է :

Մօնթ.— Ի՞նչ հրէշային գո՛րծ :

Էմիլ.— Ապիրատութիւն, ապիրատութիւն, ապիրատութիւն. — կը խորհիմ ասոր վրայ, — կը խորհիմ. — կը հոտոտեմ զայն. — ո՛վ ապիրատութիւն : Այսպէս կը խորհէի այն ժամանակ. — ցաւէս ինքզինքս պիտի մեռնեմ : — Ո՛վ ապիրատութիւն, ապիրատութիւն :

Եակօ — Ի՞նչ, խենթեցա՞ր արգեօք : Կը հրամայեմ, որ տուն երթաս :

Էմիլ.— Յարգելի պարոններ, թողէ՛ք, որ խօսիմ. իրաւ է որ պէտք է անոր հնազանդիմ, բայց ոչ հիմա. — հաւանական է, Եակօ, որ երբէք տուն չգառնամ նորէն :

Օրել.— Ո՛հ, ո՛հ, ո՛հ :

(Իւր կնոջ վրայ նետուելով :)

Էմիլ — Այո՛, գետինը նետուէ՛, և մռնչէ, քանզի սպաննեցիր դուն այնպիտի պաշտելի անմեղ մը, որ երբէք իւր աչքերը դէպ ՚ի երկինք բարձրացուցած է :

Օրել.— Ո՛հ, լկտի մէկն էր :

(Ելնելով :)

(Կրաքիանեօյիև) Հազիւ ճանչցած էի ձեզի, մօրեղբայր : Հոս պառկած է ձեր քրոջ դուստրը, որուն շունչը՝ այս ձեռքերը ճիշդ հիմակ մարեցին. գիտեմ որ այս՝ սոսկալի և քստմնելի գործ մ'է :

Կրա.— Խեղճ Տէղտէմօնա՛. ուրախ եմ որ հայրդ մեռած է. քու ամուսնութիւնդ մահառիթ դժբաղդութիւն մ'եղաւ անոր համար. և սոսկ վիշտը անոր կենաց հին թելը խզեց : Եթէ կենդանի եղած լինէր այժմ, այս տեսարանը բունն յուսահատութեան պիտի մատնէր զինքը. այո՛, պիտի անիծէր իւր բարի հրեշտակը, և երկնից դատապարտութեան պիտի արժանանար :

Օրել.— Խիստ ցաւալի է. սակայն և այնպէս Եակօն գիտէ, թէ նա Քասիօյի հետ հազար անգամ մեղսական յարաբերութիւն ունեցաւ. Քասիօ խոստովանեցաւ զայս, և նա վարձատրեց զինքը իւր ցուցըցած սիրոյն համար, պարգեւելով անոր՝ իմ առաջին անգամ իրեն տուած սիրոյ զրաւականս, զոր Քասիօյի ձեռքը տեսայ. թաշկինակ մ'էր այն, հին յիշատակ մը, զոր հայրս՝ մօրս տուած էր :

Էմիլ.— Ո՛վ երկինք, ո՛վ երկնային զօրութիւնք :

Եակօ — Օ՛ն, բերանդ գոցէ՛ :

Էմիլ.— Ամէն բան դուրս պիտի թափեմ, ամէն ինչ պիտի յայտնեմ : — Բերանս գոցե՛մ,

պարոն, ո՛չ, ո՛չ. օգին պէս ազատ պիտի խօսիմ.
Թող երկինք, և մարդիկ, և սատանաները,
Թո՛ղ ամէնքը, ամէնքը, ամօթ պօռան իմ երե-
սիս, ես տակաւին պիտի խօսիմ:

Եսկօ — Խեղաբէ՛, և տուն գնա՛:

Էմիղ. — Չպիտի երթամ:

(Եսկօ իւր սրովը կնոջը կ'սպառնայ:)

Կրս. — Ամօթ. քու սուրդ կնոջ մը վրա՛յ:

Էմիղ. — Ո՛վ տխմար Մաւր, այդ թաշկի-
նակդ, ես պատահմամբ գտայ, և ամուսինիս
տուի. քանզի յաճախ սաստիկ թախանձանքնե-
րով — թէպէտև ոչինչ կ'արժէր արդարև, — կ'ա-
զաչէր ինձի, որ գողնամ զայն:

Եսկօ — Անամօթ պոռնի՛կ:

Էմիղ. — Գասիօյին տուաւ զա՛յն. ոչ, ա-
ւաղ, ես գտայ, և ամուսինիս տուի:

Եսկօ — Գարշելի կին, սուտ կը խօսիս:

Էմիղ. — Երկինք վկայ է, թէ չեմ ստեր,
չեմ ստեր պարոններ: (Օրէլլօյիև) Ո՛վ անմիտ
մարդասպա՛ն. ի՞նչ պէտք էր ընել այսպիսի
յիմար մը այսչափ բարի կնոջ մը հետ:

(Եսկօ իւր սրովը կը զարնէ Էմիղիայիև, եւ դուրս
կը փախչի:)

Օրէլ. — Միթէ որոտալու համա՞ր են միայն
երկինքի շանթերը: — Ո՛վ դու երևելի եղեռ-
նագործ:

Կրս. — (Էմիղիսև յոգնեցով) Խեղճ կինը

դետին կ'իյնայ. յերաւի, նա սպաննեց իւր
կինը:

Էմիղ. — Այո՛, այո՛. ո՛հ, իմ տիրուհւոյս
քով դրէ՛ք զիս:

Կրս. — Ինքը փախաւ, բայց իւր կինը
սպաննուած է:

Մօնր. — Սոսկալի ապիրատ մ'է այս: Ա՛ռ
այս սուրը, զոր Մաւրին ձեռքէն ճիշդ հիմա
խլեցի. եկո՛ւր, դրսի դուռը պահպանէ՛, մի՛
թողուր, որ նա անցնի. լաւ ևս սպաննէ՛ զին-
քը. ես փախչողին ետէն պիտի վաղեմ, քան-
զի դժոխային ստրուկ մ'է այն:

(Կը մեկնին Մօնրաևօ, եւ Կրսիաևօ:)

Օրէլ. — Ոչ ևս քաջ իսկ եմ. աննշան մա-
նուկ մը սուրս ձեռքէս կը խլէ. բայց ինչո՞ւ
համար պատիւը պիտի մնայ, երբ պարկեշտու-
թիւնս կը կորսուի, ոչ, թող ամէն ինչ վեր-
ջանայ:

Էմիղ. — Ի՞նչ կը նշանակէր քու երգդ, տի-
կին: Յո՛ւշ, կրնա՞ս լսել ինձի: Կարապի պէս
երգելով պիտի մեռնիմ — Ուռեկի, ուռեկի, ու-
ռեկի: — Մաւր, անարատ էր քու կինդ. նա կը
սիրէր քեզի, անգութ Մաւր. թող երանութեան
չարժանանայ իմ հողիս, եթէ ճշմարիտ չեմ խօ-
սիր. կը խօսիմ այնպէս ինչպէս կը խորհիմ, կը
մեռնիմ կը մեռնիմ:

(Կը մեռնի:)

Օրէլ. — Ես ուրիշ զէնք մ'ունիմ այս սեն-

եակիս մէջ, սպանիական սուր մը, սառուցեալ ջրի մէջ մզուած. ո՛հ, ահաւասիկ հոս է. — մօր- եղբայր, պէտք է որ դուրս ելնեմ:

Կրա. — (Ներսէն) Եթէ փորձես, քեզի սու- ղի պիտի նստի. դուն զէնք չունիս, և հարկաւ պէտք է որ համակերպիս:

Օրէջ. — Նայէ՛ իմ վրաս ուրեմն, և խօսէ՛ ինծի, եթէ ոչ, որքան իսկ անզէն լինիմ, քու վրագ պիտի յարձակիմ:

Նորէն կը մտնէ Կրաթիանօ:

Կրա. — Ի՞նչ կայ, ի՞նչ պատահեցաւ:

Օրէջ. — Նայեցէ՛ք. զէնք մ'ունիմ. երբէք լաւագոյն սուր մը զինուորի մը ազդրին կըթը- նած չէ: Եղաւ օր մը, որ այս տկար բազու- կովս, և այս թանկագին սրով ձեզմէ քսան ան- գամ աւելի հզօր արգելքներու դիմադրեցի: — Բայց, ո՞ սնապարծութեանս. ո՞վ կրնայ սան- ձել իւր ճակատագիրը: Այժմ այսպէս չէ, — մի՛ վախնար թէ և զիս զինեալ կը տեսնես. հոս է իմ ճամբորդութեանս վախճանը, հոս իմ նպա- տակս, և իմ նաւարկութեան սահմանակէտը: Ի՞նչ վախնալով ետ կը քաշուիս. աւելորդ եր- կիւղ մ'է այդ. թեթեւ յարձակում մ'ըրէ՛ Օ- թէլլօյի կուրծքին վրայ, և նա պիտի ընկրկի: — Ո՞ւր երթալ պէտք է Օթէլլօն: — (Տեզտե- մօնայի դառնալով) Ա՛հ, ի՞նչ կերպարանք ու- նիս դուն այժմ, ո՞վ չարագուշակ աստղի տակ ծնած աղջիկ. տժգոյն՝ շապիկիդ պէ՛ս: Երբ վեր-

ջին դատատանին օրը իրարու հանդիպինք, այս քու նայուածքդ իմ հոգիս երկինքէն պիտի դա- հավիժէ, և սատանաները պիտի յափշտակեն զայն:

Յո՛ւրտ, ցո՛ւրտ, իմ աղջիկս, քու անբժու- թեանդ պէս: — Ո՛վ անիծեալ, անիծեալ ըստ- րո՛ւկ: — Գաւազանով զարկէ՛ք ինծի, դուք սա- տանաներ, և հեռացուցէ՛ք զիս այս երկնային երևոյթէն: Մըրկալից հովերու մէջ գլորեցէ՛ք զի՛ս. ծծուճի մէջ խորովեցէ՛ք զի՛ս: Հեղուկ կրակի խորայտակ հեղեղին մէջ լուացէ՛ք զի՛ս: — Ո՛վ Տէզտէմօնա՛, Տէզտէմօնա՛, մեռա՛ծ, մե- ռա՛ծ, ո՛հ, ո՛հ, ո՛հ...:

Կը մտնեն Լօտովիքօ, Մօնթանօ, Քասիօ պատգարակի մը վրայ, և պաշտօնատարներ:

Լօժ. — Ո՞ւր է այս յանդուգն, և ամենա- թըշուառ մարդը:

Օրէջ. — Աւասիկ այն՝ որ Օթէլլօ էր. ա- լասիկ եմ:

Լօժ. — (Եակօն փնտռելով) Ո՞ւր է այդ ի- ժը. յառաջ բերէ՛ք ապիրատը:

Օրէջ. — Իւր ոտքերը կը դիտեմ: — Բայց այս առասպել մ'է. եթէ դուն սատանայ մ'ես, չեմ կրնար սպաննել քեզի:

(Օրէջօ կը վիրաւորե եակօն:)

Լօժ. — Աւե՛ք իւր սուրը իրմէ:

Եակիօ — Արիւնս կը հոսի, պարօն, բայց սպաննուած չեմ:

Օրէջ. — Ձեմ ցաւիր ատոր համար. աւելի
ևս կ'ուզէի որ ապրէիր, քանզի, իմ դաղափա-
րովս, մեռնիլը երջանկութիւն մ'է:

Լօճ. — Ո՞վ դու Օթէլլօ, որ երբեմն այն-
չափ բարի էիր, անիծեալ ապիրատի մը ծու-
ղակն ինկար. ի՞նչ պիտի ըսեն քեզի համար:

Օրէջ. — Ա՛հ, ամէն ինչ. պատուաւոր մար-
դասպան մի, եթէ կ'ուզէք. քանզի ոչինչ ըրի
ատելութեամբ, բայց ամէն ինչ ըրի պատուով:

Լօճ. — Այս ապիրատը մասամբ խոստովա-
նեցաւ իւր ոճիրը. Քասիօյի մահուան համար ա-
նոր հետ համամիտ էի՞ր:

Օրէջ. — Այո՛:

Քաս. — Սիրելի զօրավար, ձեզի երբէք
վշտացնելու պատճառ մը չտուի:

Օրէջ. — Կը հաւատամ հաստատապէս, և
քու ներողամտութիւնդ կը խնդրեմ: Հարցու-
ցէ՛ք, կ'աղաչեմ, այս կէս սատանային, թէ ին-
չո՞ւ համար այսպէս ծուղակի մէջ ձգեց իմ հո-
գիս, և մարմինս:

Եակօ — Բան մը մի՛ հարցունէք ինծի.
Ինչ որ գիտէք, գիտէք. այս վայրկեանէս այլ
ևս բառ մը չպիտի խօսիմ:

Լօճ. — Ի՞նչ. ոչ իսկ աղօթելո՞ւ համար:

Կրա. — Տանջանքը պիտի բանայ քու շըր-
թունքներդ:

Օրէջ. — (Եակօյիև) Լաւ, շատ աղէկ կ'ը-
նես:

Լօճ. — Պիտի իմանաս, պարօն, թէ ի՞նչ

պատահեցաւ, քանզի ինչպէս կը կարծեմ, չգի-
տես: Աւասիկ նամակ մը, որ սպաննուած Բօտ-
րիկօյին գրպանին մէջ գտնուեցաւ. և ահա ու-
րիշ մը: Ասոնցմէ մին կը բացայայտէ թէ Քա-
սիօն սպաննելու պաշտօնը Բօտրիկօն յանձն ա-
ռած էր:

Օրէջ. — Ո՞վ ապիրատ:

Քաս. — Հեթանոսական, և բարբարոսական
գո՛րծ:

Լօճ. — Աւասիկ հիմա ուրիշ գանգատանայ
թուղթ մը, նոյնպէս իւր գրպանին մէջ գտնը-
ւած, և զոր, ինչպէս կ'երևի, Բօտրիկօ մտադիր
էր այս անիծեալ ապիրատին ուղղել. բայց
նոյն միջոցին նմանապէս Եակօ վրայ հասաւ,
և գոհ ըրաւ զինքը:

Օրէջ. — Ո՞վ սոսկալի վա՛տ: Բայց, Քա-
սիօ, ի՞նչպէս ստացար այդ թաշկինակը, որ իմ
կնոջս կը պատկանէր:

Քաս. — Իմ սենեակիս մէջ գտայ զայն. և
ինքն իսկ ճիշդ հիմա խոստովանեցաւ, թէ հոն
ձգեց զայն մասնաւոր նպատակի մը համար, որ
իւր փափաքանայ համեմատ յաջողեցաւ:

Օրէջ. — Ո՞վ յիմա՛ր, յիմա՛ր, յիմա՛ր:

Քաս. — Նաև նոյն նամակին մէջ Բօտրիկօ
կը յանդիմանէ զԵակօ, թէ զինքը յառաջ մղեց
իմ՝ վրաս յարձակելու համար պահակերութեան
միջոցին. և այս եղաւ իմ պաշտօնանկ լինելուս
պատճառը: Եւ հիմա իսկ, երբ շատոնց մեռած-

կը կարծուէր, խօսեցաւ նա, թէ Եակօ իրեն զարկաւ, և վիրաւորեց 'ի մահ:

Լօս. — (Օրէջջօյիև) Այս սենեակը պէտք է որ թողուք, և մեզի հետ գաք. ձեր իշխանութիւնը, և հրամանատարութիւնը ձեզմէ առնուած են, և Քասիօն պիտի կառավարէ Կիպրոսը: — Իսկ այս ապիրատին դալով՝ եթէ կայ անգթութեան նրբահնար միջոց մը, որպէս զի նա շատ տանջուի, կենդանի պահելով զինքը, պիտի վերապահուի անոր:

(Օրէջջօյիև) Իսկ դուք բանտարկեալ պիտի մնաք, մինչև որ ձեր յանցանաց բնութիւնը հազորգուի Վենետիկի ծերակոյտին: Օ'ն, թող տանին զինքը:

Օրէջ. — Կամայ, մէկ կամ երկու խօսք ևս ձեր մեկնելէ առաջ: Տէրութեան փոքր ինչ ծառայութիւն մատուցած եմ, և դիտեն իրենք: Անցնինք ասոր վրայ: — Կ'ազաչեմ ձեզի, երբ այս դժբաղդ դէպքերու վրայ պատմէք, խօսեցէ՛ք ինձի համար, ինչպէս որ եմ, առանց թեթեւեղութեան, և ոչ չարամտութեամբ ծանրացնելու: Ուստի պիտի խօսիք այնպիսի մէկու մը համար՝ որ շատ սիրեց, բայց ոչ խոհեմութեամբ. մէկու մը համար՝ որ գիւրութեամբ չնախանձիր, բայց անդամ մը որ իւր նախանձը դրդուուեցաւ, ծայրայեղութեան դիմեց. մէկու մը համար՝ որոյ ձեռքը գծուծ Հրէային պէս՝ մէկզի նեանց մարդարիտ մը՝ շատ աւելի թանկագին քան իւր բոլոր ցեղը. մէկու մը համար,

որոյ նկուն աչքերը թէև գորովանք չզիտեն, արցունքներ կը թափեն այնչափ առատութեամբ որչափ Արաբիայի ծառերը կը թափեն իրենց օգտաւէտ խիժերը: Պատմեցէ՛ք նաև, թէ երբ անգամ մը Հալէպի մէջ կը գտնուէի ապիրատ մէկը՝ տէրութիւնը սկսաւ նախատել, և ես վիզէն բռնելով զարկի իրեն այսպէս:

(Մտով զինքը կ'սպասեն:)

Լօս. — Ո՛հ, արիւնալից վախճա՛ն:

Կրա. — Ամէն խօսք անօգուտ կը դառնայ:

Օրէջ. — (Տէգտեմօնայի վրայ իշխարով) Համբուրեցի քեզի՝ սպաննելէ առաջ. չմնար ինձ ուրիշ բան, բայց մեռնիլ քեզի համբուրելով:

(Կը մեռնի:)

Քաս. — Աւասիկ այս էր, որմէ կը վախնայի բայց կարծեցի, թէ վրան զէնք շուներ. քանզի վեհօգի անձ մ'էր:

Լօս. — (Եակօյիև) Ո՛վ Սպարթական շուն, աւելի անդութ քան անձկութիւնը, քաղցր, կամ ծո՛վը. տե՛ս այս անկողնոյ եզերական բեռը, այս քու գործդ է. այս տեսարանը կը թուեաւորէ մարդուս աչքը, թող ծածկեն զայն:

(Անկողնոյ վրայ վարագոյր կը փաչեն:)

Կրաթիանօ, պահպանէ՛ դուռը, և Մաւրի գոյքերը գրաւէ՛, անոնք քու ժառանգութիւնդ են: —

(Քասիոյի) Չեզի կը պատկանի, տէր կառավարիչ, այս դժոխային եղեռնազորքը պատժելու պաշտօնը. որոշէ՛ ժամը, տեղը, և պատժելու եղանակը, — ո՛հ, պէտք է որ սոսկալի լինի այն: Իսկ ես անմիջապէս նաև կը մտնեմ, և կ'երթամ ցաւօք սրտի ձերակոյտին պատմելու այս ծանրածանր դէպքը:

(Կը մեկնին:)

Վ Ե Ր Ձ




Վ Ր Ի Պ Ա Կ Ք

Էջ	ՏՈՂ	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
27	22	ըմբոսուքիւն	ըմբոսուքիւն
44	4	կորսնցուցիւնք	կորսնցուցիւք
47	15	բարձրացած	բարկացած

INDEX

19	19	19	19
20	20	20	20
21	21	21	21
22	22	22	22



51 Q

«Ազգային գրադարան»



NL0166975

